



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1418



1882

2003

2011

ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿ ՀԱՅԵՐԵՆ ԴՐՁԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՎԱՆ

83 61 № 11
Հ-44 այ.

ՕՒԹՍԱՀՈՐՔ

Գործ Վիլհելմ Հառովի

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ՌԱՓԱՑԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ.



ԹԻՖԼԻՑ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1882

38003 տի.

ՏԵ 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Дозволено Цензурою. Тифлисъ. 4 Ноября 1881 г.

Վարդակական հայոց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՅԱԿԱՆԱԳՐԻ

(3683
47)

ՀՕ 12 - 60

Тип. М. Вартанянца и К°, Троицк. пер., д. № 11.

Առաջնային

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՅԱԿԱՆԱԳՐԻ

ՀՕ 881

ՅԱՊԱԶԱՐԱՆ

Հայոց մի մաս զամբար յիշեց այս և մասնաւութեան
ՅԱՊԱԶԱՐԱՆ բանական ու գում

Այս դրքոյկը, որն նուիրում եմ հայ մանուկներին,
համոզուած եմ, պիտի զառնայ նոցա ամենասիրելի ըն-
թերցարանը, վասն զի նոցա սիրած բաներն է՝ սորի մէջը
եւ նոցա հասկանալի լեզուով գրած:

„Ուստաւորքը“ ոչ շարադրութիւն, այլ Թարգմանու-
թիւն է: Բայց Թարգմանութիւն ասելով, ես չէի ուզում
հասկացնել՝ օտարազգի բառերի տեղ, հայերէնը շարած,
ոչ զա հայացուցած է՝ որբան որ իմ ոյժը եւ զիտու-
թիւնը ներել է:

Օրէս 20 տարի առաջ, սոյն այս հեղինակութիւնը
ես Թարգմանել էի Ստեփաննոս Նազարեանցի „Հիւսիսա-
փայի“ համար, բայց մեր հանգուցեալ գիտնականը սովո-
րութիւն ունէր, ինչ եւ անցնէր նորա խմբագրութեան տա-
կէն, անպատճառ կերպարանափոխելու, աւաղ, ոչ դէպի
լաւը, այնպէս որ, իմ աշխատանքը, տպուելէն յետ, ես
ինքս չէի կարողանում ճանաչել:

Այժմ երկրորդ անգամ նոյնը ստիպուեցայ Թարգմա-
նելու, եւ յուսամ որ փոշմաննելու չեմ. իսկ չեմ փոշմա-
նիլ այն ժամանակ, երբ հայ երեխայր կարդան, զուար-
ճանան. եւ զուարճանայով՝ հայերէն կարդալու ընտելանան:

Շատ եւրոպական ազգերի երեխայոց սիրելի գիրքն
է Ուստաւորքը. այդ ասելով՝ ես ուզում եմ հասկացնել,
որ մանկական գրականութեան մէջ ամենապատռաւոր
տեղերից մընն էլ սորան է պատկանում:

Այս, մանկական գիրք է սա. բայց, մոածում եմ,

չափահամներին էլ չը ընծայլ արդեօք. բանի մի զուարժափ եւ անմեղ ժամկեր: Փորձեցինք:

Առաջնային գործադրություն:

1884 B.



ԿԱՐԱԽԵՎ

այս գրեաւում մէշալ պիտի նոր բա-
ռեալիք հայութեան միանցու ով նոյս բ
ան մասունք ով և ունաւուն բայ առջեր ու
դուանց կը սկսեած է Աթ Զօնի Հու ու
առա պահապահ մի առանձ առան Աթ Հ
անու միջեր պահապահ մի սկսեած բայ
առանց ու ԿԱՐԱԽԵՎ առանց ու առան
առանց ու առանց առանց առանց ու առան

Մի օր անապատի մէջէն անցնում էր մի
բազմամբոխ կարաւան: Անհունդաշտի մէջ,
ուր բայի աւազէն ու երկնքէն ոցինչ չէր
երեւում, հեռուէն լովում էր հնչիւնը զան-
գակների, որոնք կախ էին տուած ուղտերի
վզից, եւ արծաթէ բոժոժների, որոնցով
զարդարած էին ձիանք: Կարաւանի անցած
տեղը ամպի նման բարձրանում էր թանձր
փոշին, եւ երբոր ժամանակ առ ժամանակ
քամին փչում էր ու փոշին ցրվում էր կա-
րելի էր նշմարել եւ զէնքերի ցոլքը, եւ ճա-
նապարհորդների խայտաքղէտ հալաւները:
Այսպէս տեսաւ կարաւանը մի մենաւոր
ճանապարհորդ, որ ձիով անցնում էր անա-
պատի միջով: Այդ ճանապարհորդը հեծած
էր տաճիկ ձի, որան վագրի մորթէ ծած-

կոց ձգած. կարմիր կաշիէ ասպազէնը զարդարած էր արծաթէ բոժոժներով իսկ նորա գլխու փրայ ծածանում էր ջայլամի փետուրէ փունջ: Թէ՛ գեղեցկադէմ ձիաւորի եւ թէ՛ նորա նժուգի զարդարանքը միակերպ գեղեցիկ էին: Զիտւորը գլխին զրած ունէր ուկէնկար ապիտակ կակեղ (չալմա). կապան ու լայն վարտիքը բաց-կարմիր էին. գոտիէն կախած էր թուրը՝ երախակալը ակն ու մարդարիտով յեռած: Սեւ աչքերը, որ թաւ ունքերի տակից փայլում էին, երկայն ու թաւ մօրուքը, արծուի քիթը ու աչքի իրայ քաշած փակեղը տալիս էին նորան իրոխու ու վայրագ կերպարանք: Երբոր այս ճանապարհորդը կարաւանէն ոչ աւելի քան յիսուն քայլափոխ հեռու էր իսկոյն մորակեց ձին ու մի քանի վայրկեանի մէջ մօտեցաւ: «Ենա կամ Անապատի մէջ միայնակ ճանապարհորդի հանդիպելը այնպիսի հաղուադէպ բան է, որ պահապանները, որոնք ուղեկցում էին կարաւանին, անակրնկալ յարձակմունքէ ըղդաստանալով, իսկոյն իրանց տէգերը գարձուցին այդ անծանօթ մարդու գէմ: Այդպիսի թշնամական ընդունելութիւն տեսնելով, ասաց ձիաւորը: «Ինչո՞ւ այդպէս վա-

խեցաք: միթէ կարծում էք, որ ես մի հոգի մարդս, պիտի կարողանամ կողոպտել այս բազմամբոխ կարաւանը: Ամօթահարուած պահապանները իսկոյն խոնագչեցուցին իրանց տէգերը, ու նոցա գլխաւորը, մօտենալով անծանօթին, հարցուց: Ի՞նչ էք կամենում: — առ այսուն ու զայտաբար ո՞գ է այս կարաւանի տէրը», ասաց ձիաւորը:

— Այս կարաւանը պատկանում է ոչ մի մարդու, այլ շատ վաճառականների, որոնք վերադառնում են Մէքքէից դէպի իրանց տունը: Եւ որոնց մենք ուղեկցում ենք եւ պաշտպանում ենք այն աւազակներից, որոնք դարձնում են ճանապարհորդներին անպատի մէջ, — պատասխանեց պահապանների գլխաւորը:

«Եթէ այդպէս է՝ տաք ուրեմն ու ներկայացներ ինձ այդ վաճառականներին, ասաց անծանօթը: — Այժմ ես չեմ կարող ձեր կամքը կատարել, պատասխանեց պահապանների գըլիսաւորը: մենք պարտաւոր ենք անդադրում առաջնորդելու: վաճառականները մեր ետեւիցն են գալիս: այսուղէն մինչեւ նոցա մօտ հասնելու համար գո՞նէ քառորդ ժամ

է պէտք Բայց եթէ կըկամենաք ինձ հետ
միասին առաջ երթալու մինչեւ այն տեղը,
ուր մենք պիտի իջեւանենք, այն ժամանակ
ես ձեզ կըներկայացնեմ՝ կարաւանի տէրերին:

Անծանօթը ոչինչ չըպատճախանեց: Հա-
նեց իւր երկայն ծխամորչը (չուբուղ) որ
կախած էր թամբէն, ու ծխելով շարունա-
կեց առաջ գնալու պահապանների գլխա-
ւորի հետ:

Պահապանների գլխաւորը չըգիտէր ինչ
անէր անծանօթի հետ. ոչ համարձակում
էր նորան հարցնելու, թէ դու ով ես, եւ
ոչ հնար էր գտնում երկայն-բարակ խօ-
սակցութիւն բանալու հետը. Օրինակի հա-
մար, երբոր ասում էր թէ՝ «Ճեր քաշած
ծխախոտը շատ պատուականն է», կամ «Ճեր
ձին շատ գեղեցիկ քալուածք ունի», — այդ
ամեն խօսքերին անծանօթը մէկ խօսքով
միայն պատասխանում էր թէ՝ «այո՛», եւ
դորանով խօսակցութիւնը վերջանում էր:

Վերջապէս նոքա հասան այն տեղ, ուր
մտադիր էին իջեւանելու: Նոյն վայրկենին
գլխաւորը իր ձեռքի տակի մարդոցը շարեց
պահպանութեան համար, եւ ինքը անծա-
նօթի հետ միասին կանգնած՝ կարգադրու-
թիւն էր անում, որ կարաւանը տեղաւո-

րեցնէ այն շրջանի մէջ, որ կազմել էր պա-
հապաններէն: Երեսուն ծանրաբեռնած ուղ-
տեր եւ նոցա չորս կողմը զրահաւորած մար-
դիկ անցան նոցա մօտից, եւ ոոցա ետեւից
գալիս էին հինգ վաճառական, որոնց պատ-
կանում էր կարաւանը: Վաճառականները
հեծած էին գեղեցիկ ձիեր. ամենքը չափա-
հաս եւ ծանրաբարոյ մարդիկ էին, բացի
մէկէն, որ իւր ընկերակիցներէն շատ երի-
տասարդ էր եւ, ըստ երեւոյթին, բնութքով
էլ նոց սնից աշխայժ էր: Վացա ամենի ետե-
ւից գալիս էին շատ ուրիշ ուղտեր եւ գը-
րաստներ:

Վրանները կազմեցին. Ճիերին եւ ուղտե-
րին շարեցին բանակի չորս կողմը: Այն վը-
րանը, որ դրած էր միւսների մէջտեղը, ամե-
նից մեծ էր ու կտակուտ կերպասէ էր. ահա
այդտեղ մտցուց անծանօթին պահպան-
ների գլխաւորը: Հինգ վաճառականները
նստած էին սուկեհուռ գիպակէ բարձերի
վրայ, սեւամորթ սորուկները նոցա առջեւ
ուտելիք ու խմելիք էին բերում:

«Ո՞վ է այդ մարդը, որ ներս բերիր», հար-
ցուց գլխաւորին երիտասարդ վաճառականը:

Հաղիւ թէ գլխաւորը բացել էր բերանը,
որ պատասխանէ, անծանօթը ասաց.

—Անունու Սէլիմ Բարուխի է, ինքս Բաղդագցի եմ: Մէքքէ գնալու ժամանակս ինձ վրայ աւազակներ յարձակուեցան, ինձ գերեցին ու գիպահող գրին, եւ արթուն հըսկում էին վրաս, բայց ահա երեք օր է, որ ես հնար գտայ փախչելու: Միսյնակ թափառում էի անապատի մէջ երբոր մեծ Մարդարէն, խղճալով վրաս, հեռուից ականջիս հասցուց ձեր կարաւանի զանգակների ձայնը: Ես եկայ ձեզ մօտ եւ այժմ խնդրում եմ, որ ինձ հիւրենկալութիւն անէք եւ թոյլ տաք ձեզ հետ միասին ճանապարհորդելու: բայց այն էլ իմացած լինիք, որ ձեր հովանաւորութեան տակ պիտի լնդունէք ոչ աննշան մարդ. երբոր Աստուծով Բաղդագ հասնիք՝ գուք առատ վարձատրութիւն կըստանաք, վասն զի ես վէզիրի եղբօրորդին եմ:

Վաճառականների մէջ ամենից տարէցը պատասխանեց.

«Գալդ բարի, Սէլիմ Բարուխ, բարի, հազար բարի տեսանք քեզ. մենք ամենք ուրախ սրտով պատրաստ ենք քեզ ամեն կերպ օգնութիւն ցոյց տալու, բայց ամեն բանէ առաջ կ'եր ու խմէ՛ մեզ հետ միասին»:

Սէլիմ Բարուխը նատեց վաճառականների

մօտ, ու նոցա հետ միասին սկսեց ուտել ու խմել: Երբոր ճաշը աւարտեցին, ստրուկները ամանիքը ժողովեցին, եւ բերին երկայն ծխամորչները ու օշարակ: Երկար միջոց լուռ ու մունջ նստած էին վաճառականները ու բերաններից բայց էին թողնում ծուխի ամպեր ու նայում էին ինչպէս այդ ծուխը նախ օղակներ էր կազմում: օղակները գնալով մեծանում էին, եւ վերջապէս անչետանում էին օդի մէջ: Երիտասարգ վաճառականը խզեց այդ լուռթիւնը:

«Ահա երեք օր է», որ մենք թէ՛ ձի հեծած եւ թէ՛ վրանի տակ նստած լուռ մնացել ենք, եւ ամեննեփն միտք չենք անում թէ՛ ինչպէս անէինք, որ մի փոքր զուարճութեամբ անցնէինք մեր ժամանակը: Երբ ես իմ տանն էի: միշտ սովորութիւն ունէի, ճաշից յետ կ'ամ պարողների վրայ նայել, կ'ամ լսել տաղեր ու նուագներ: Եկէ՛ք, բարեկամներ ու ընկերներ, մէկ հնար գըտնենք մեր ժամանակը զուարճութեամբ անցնելու:

Զորս չափահաս վաճառականները առաջուայ պէս ծխամորչ էին քաշում: եւ ասես թէ խոր մոտածողութեան մէջ էին ընկղմած. բայց անձանօթը ասաց:

— Եթէ թոյլ կըտաք ես ձեզ մի առաջար
կութիւն կ'անեմ Արդեօք ցէիք յօժարիլ,
ամեն անգամ, երբ իջեւանելու կըլինինք,
խրաքանչիւր ոք մեզնից ընկերներին զռւակը
ճացնելու համար, մի բան պատմէր Այս-
պէսով մենք մեր ժամանակը շատ զռւար-
ճութեամբ անցուցած կը շատ զռւար-
«Ճշմարիտ է ասած դ, պատասխանեց վաճա-
ռականներից ամենէն տարեցը՝ պնունը ԱՀ-
մէդ քու առաջարկութիւնը մեզ ընդունելի է»:

— Նատ ու բախ եմ, որ իմ առաջարկու-
թիւնը ձեզ ընդունելի եղաւ, ասայ Սէլիմ
Բարուխը, եւ եթէ կը բարեհաճիք ականջ
դնելու ամենէդ առաջ ես կը սկսեմ իմ
պատմութիւնը:

Աճառականները ու բախ ու բախ տեղերէն
ելան, անծանօթին իրանց մէջը առին, ինք-
ներն էլ մօտիկ նստեցան նորան: Ստրուկ-
ները բերին օշարակով բաժակներ, նորից
ըյրին նոցա ծխամորչները ծխախոտով եւ
վառ ածուխներ բերին, որ կպցնիլ ատան
ծխախոտը: Սէլիմը առաւ մի մեծ բաժակ
օշարակ, խմեց, ձայնը մաքրեց, մօրուքը
շփեց ու ասաց:

«Լոեյէք ու բեմն Խալիֆա-Արաքիւլ պատ-
մութիւնը:



ով ամ քահանակ քրի գր մասի շմառ
զի քրի և ըստպատրութ և թէ զի նույ
սիս ցրութ գլուխ են ու ցանձմար
մաղմակ քրի զի մաս յեւ ու մադի ու
և չէ մի քրի ու մասու բահմու բար
պր ուրաց միամիտ արարաբդա ուր
պահու ուղարկեցին բառին հարթու
ունեց անուն ու անուն ու անուն ու

ԽԱՂԻՓԱ-ԱՐԱԳԻՒՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

2102-160

Օրին մէկ օրը Բաղդագու Խաղիփա Խա-
սի գը, ճաշէն յետ նստած էր բազմոցի վրայ:
Օրը տաք էր: Խաղիփան այն օրը կուշտ կե-
րել էր: ճաշից էլ յետ մի փոքր քննել էր,
ու քունը զուարթացրել էր նորան: Վարդէ
փայտի երկայն ծխամորչը քաշելով ժամա-
նակ ժամանակ սուրճ էր խպշտում նա,
որն անդադար բերում տալիս էր սեւա-
մորթ ստրուկը: սուրճը, ինչպէս երեւում
էր, նորան շատ գուր էր գալիս, վասն զի
հաճութեամբ շփում էր նա իր մօրուքը:
Խաղիփայի վրայ նայողը խսկոյն կը նկատէր,
որ նա շատ ուրախ էր: Այդպիսի միջոցին
նորա հետ ամեն բանի վրայ կարելի էր

խօսել, վասն զի այդ ժամանակ նա լի-
նում էր հեղ եւ քաղցրաբարոյ, եւ այդ էր
պատճառը, որ մեծ վէզիր Մանսօրը սովո-
րութիւն էր արել ամեն օր այդ ժամերուն
գալ մօտենալ նորան: Նա սյդ օրն էլ ե-
կաւ ներկայացաւ Խալիֆային. բայց այս
անգամ հակառակ սովորականին, տիսուր
ու տրտում էր: Խալիֆան բերնէն հանեց
ծխամորչի սաթէ կտուցը ու հարցուց՝ «Վ. Է.-
զիր, ինձ այնպէս է թւում: որ դու այսօր
մի փոքր տիսուր ես. ի՞նչ է պատճառը»:

Մեծ վէզիրը ձեռքերը խաչ-կապեց կրծքի
վրայ ու գլուխը խոնարհած, պատասխա-
նեց թագաւորին:

— Թագաւոր, ապրած կենաս, չը գիտեմ
իրաւ է, որ երես տիսուր է, բայց թէ հո-
գիս հարցնես՝ նա շատ վրդոված է: Այն-
տեղ ցածումը, պալատի դրան մօտ կանգ-
նած է մի փերեզակ, որ շատ պատուական
ապրանքներ ունի. սիրտս սաստիկ ցաւում
է, որ չունիմ այնքան փող, որ նորանից
ինչ-ասես հարկաւոր բաներ գնէի:

Խալիֆան վաղուց մոտագիր էր մեծ վէ-
զիրին ընծայ անելու. այս որ լսեց, իսկոյն
հրամայեց սեւամորթ ստրուկներէն մինին,
որ երթայ ու ներս կանչէ փերեզակին:

Ստրուկը գնաց, շուտով վերադարձաւ ու
հետը բերեց փերեզակին: Փերեզակը մի կար-
ճահասակ, հաստլիկ, թուխ երեսով մարդ
էր, վրայի հալաւը մաշուած պատառտած:
Նա հետը բերեց մի սապատ, որի մէջ զա-
նազան ապրանքներ կային—մարդարիտներ,
մատանիներ, արծաթապատ եւ ականակուռ
կոթով ատրճանակներ, բաժակներ, սանդրբ-
ներ, եւ այլն. Խալիֆան ու վէզիրը բոլոր
ապրանքները քրքրեցին, աչքէ անցուցին.
Եւ վերջապէս Խալիֆան գնեց իրա ու Ման-
սօրի համար մի մի զոյգ ատրճանակներ,
իսկ նորա կնոջ համար մի սանդր: Փերե-
զակը սկսեց իւր ապրանքը դասելու սա-
պատի մէջ, եւ արդէն ուզում էր խուփը
դնել վրան ու կապել, մին էլ տեսնես Խա-
լիֆան նկատեց սապատի մօտ մի փոքրիկ
արկղ: «Տեսնենք ի՞նչ ապրանք կայ այս արկ-
ղի մէջ», ասաց Խալիֆան: Փերեզակը բացեց
արկղը ու մէջից սեւ փոշիով մի տուփ հա-
նեց ու տուեց Խալիֆային: Տուփի մէջ մի
թուղթ կար՝ օտարօտի գրերով, որն ո՛չ
Խալիֆան կարողացաւ կարգալ եւ ո՛չ վէ-
զիրը: Փերեզակը ասաց. «Այս տուփը ես
գնեցի մի վաճառականից, որն գտել է
Մէքքէ երթալու ժամանակ ճանապարհի վրայ.

չրդիտեմ մէջինը ի՞նչ փոշի է, այն էլ չը
գիտեմ, թէ ի՞նչ գրած է այս թղթի վրայ-
եթէ կամենում էք՝ գնեցէ՛ք, շատ աժան
կուտամն վասն զի չը գիտեմ ի՞նչ է, կամ
ի՞նչ բանի պէտքական է»:

Խալիֆան շատ սիրում էր իր թանգա-
րանը զանազան հազուագիւտ եւ օտա-
րազգի գրքերով գրուածներով լցնել,
թէեւ նոցա կարդալը չը գիտէր: Նա գնեց
եւ թուղթը, եւ տուփը սեւ փոշիով, ու
արձակեց գերեզակին:

Խալիֆայի սիրու շատ էր ուզում իմա-
նալ, թէ այդ գնած թղթի վրայ գրածը
ի՞նչ էր նշանակում: ու հարցուց վէզիրին
արդեօք չի՞ ճանաչում նա մի մարդ, որ կա-
րող լինէր կարդալու եւ թարգմանելու:

«Ամենողորմած տէր իմ եւ թագաւոր,
պատասխանեց վէզիրը, մայր մզկիթի գրանը
կենում է մի մարդ, որին ամենը Սէլիմ ի-
մաստուն են ասում, նա, ինչպէս լսած եմ
շատ լեզուների ոռեղեակ է: Հրամայէ՛, տէր
իմ գալ նորան, շատ կարելի է, որ նա,
կարողանայ քեզ բացատրելու այդ գաղտնի
գրութեան իմաստը»:

Խոկոյն բերին Սէլիմ իմաստունին ու կանգ-
նեցուցին թագաւորի առջեւ: «Սէլիմ: ա-

սաց Խալիֆան, ամենքը ասում են, որ դու
շատ ուսեալ մարդ ես. նայէ՛ այս թուղթը
եւ ասա ինձ չե՞ս կարող արդեօք կարդալ
մէջի գրածը: Եթէ կարողացար կարդալու
ես քեզ մի պահեստի հալաւ կ'ընծայեմ;
բայց եթէ չը կարողացար՝ կը հրամայեմ
գաւազանով տաժներկու հարուած տալ մէջ-
քիդ ու տասներկու ոտիդ ներքանին, որ
իզուր տեղը անունդ իմաստուն հռչակել
ես»: ստուգիւ ու ուղարկու մարմարական

Սէլիմը ծունը գրեց Խալիֆայի առջեւ ու
ասաց: «Թո՛ղ քու կամքը կատարուի, ով թագաւոր»: Առաւ թուղթը, երկար միջոց
նայեցաւ նորա վրայ ու վէրջապէս ասաց.
— Այս Լատիներէն գրուածք է. թէ որ լա-
տիներէն չը լինի՝ թող այս վայրկենիս ինձ
կախեն: առ ազն ու սինազն չկանալ

«Դիցուք թէ լատիներէն է, պատասխա-
նեց Խալիֆան. բայց ի՞նչ են նշանակում
այդ գրուած խօսքերը»:

Սէլիմը սկսեց գրուածքը այսպէս թարգ-
մանելու: «Որի ձեռք որ ընկնի այս թուղ-
թը թող Աստուծոյ փառաբանութիւն տայ
նորա մեծ շնորհքի համար: Ով որ այս
տուփի մէջ գտնուած փոշիէն մի պտղուց
հոտ անէ, ասելով «մութաբօր», ի՞նչ կեն-

դանու կերպարանք որ կամենայ՝ կարող է ստանալ եւ կարող է հասկանալ նոյն կենդանու լեզուն։ Բայց երբ կամենայ նորից մարդու կերպարանք ստանալ, թող գառնայ դէպի արեւելք, երեք անգամ երկրպագութիւն անէ՛ ասելով նոյն բառը։ Բայց կերպարանափոխութեան ժամանակ զգոյշպիտի լինի, որ ըստ ծիծաղէ՛, վասն զի ծիծաղը նորան մոռացնել կը տայ այդ կախարդական խօսքը, եւ նա յաւիտեանս յափտենից անսառւն կը մնայ»։

Այսպէս թարգմանեց Սէլիմ իմաստունը, ու Խալիֆան շատ գոհ մնաց նորանից։ Հարկադրեց նորան երդում անել, որ այդ գաղտնիքը ոչ ոքի չի յայտնիլ. ընծայեց նորան մի փառահեղ հալաւ եւ խաղաղութեամբ արձակեց։ Ու երես առ երես մնալով մեծ վէզիրի հետ, ասաց. «Մանսօր՝ ի՞նչ պատուական բան գննեցինք—՞ը. ի՞նչպէս զուարձալի բան է անսառւն դառնալը, ի՞նչպէս ես կարծում։ Վաղը առաւօտ հանդիպէ՛ ինձի, միասին քաղաքից դուրս երթանք, հոտ անենք այս փոշիէն եւ սկսենք ականջ դնելու՝ ի՞նչ խօսում են օդի ու ջրի մէջ, անտառումը ու դաշտումը»։

Միւս օր, առաւօտը կանուխ, հազիւ թէ

Խալիֆան իր նախաճաշիկը արել էր ու հագուել, մին էլ տեսնես եկաւ կանգնեցաւ նորա առջեւ վէզիրը, որ ինչպէս եւ բեկ խօսք-մէկ էին եղել, միասին երթան շրջագայելու։ Խալիֆան գրպանը դրեց կախարդական փոշու տուփը, պալատական-ներին արձակեց եւ ինքը վէզիրի հետ միասին տունէն դուրս ելաւ։ Ամենից առաջ ման եկան Խալիֆայի լայնատարած պարտէզների մէջ բայց այնտեղ ոչ մի շնչաւոր արարած ըստ գտան, որ կարողանային փոշու ոյժը փորձելու։ Վերջապէս վէզիրը առաջարկեց մի ջրշեղի մօտ երթալ, որի եզերքը միշտ հաւաքվում էին շատ զանազան կենդանիներ, մանաւանդ նա այնտեղ տեսել էր առագիլ թոշուններ, որոնք իրանց ծանր քալուածքով միշտ նորա ուշադրութիւնը գրաւել էին։

Խալիֆային հաճելի թուեցաւ վէզիրի առաջարկութիւնը, եւ միասին գնացին ջըրշեղի մօտ, ուր մենակ մի արագիլ տեսան, որ ծանր ծանր առաջ ու յետ ման էր գալիս ու թոշտող գորտեր էր բռնում։ Փոքը մի ժամանակից յետ մի ուրիշ արագիլ էր թոշելով գալիս մօտենում էր նորան։

«Ճէ՛ր իմ; ասաց վէզիրը, մօրուքս վկայ,

որ այս երկայնուները իրանց մէջ գուարձալի խօսակցութիւն պիտի ունենան: Ի՞նչ ես կարծում, պէտք չէ արդեօք մեզ արագիլի կերպարանք ստանալու»:

— Եատ լաւ կը լինի, պատասխանեց Խալիֆան: բայց նախ եւ առաջ արի՝ մէկ լաւ սովորենք, թէ ի՞նչ ու ինչ պէտք է անենք, որ մեր առաջուայ մարդկային կերպարանքը ստանանք: Պէտք է երեք անդամ երկրպագութիւն անենք դէպի արեւելք ու անենք «մօթաքօր», եւ իսկոյն ես կը դառնամ Խալիֆա, իսկ գու՝ վէզիր: Բայց, ի սէր Աստուծոյ, մի՛ ծիծաղիլ, որ չը կորչենք:

Այդ միջոցին թռչող արագիլը ճախրում էր Խալիֆայի գլխի գրայ եւ կամաց կամաց ցած էր իջնում: Խալիֆան գրպանից հանեց տուփը, հօտ արաւ նորա մէջի սեւ փոշին, եւ առաջարկեց նոյնը անելու վէզիրին, եւ երկուսը միասին ասացին «մութաքօր»:

Յանկարծ նոցա ոտերը երկայնացան, կարմրեցան, եւ բարակացան: Նոցա զարդարուն հողաթափները դարձան անճոռնի թաթեր, ձեռքերը՝ թեւեր, նոցա ուսերից բսեցաւ երկայն վիզ, մօրուքները անհետացան եւ նոցա բոլոր մարմինը ծածկուեցաւ փետուրով:

Քանի մի վայրկեան ապշելուց յետոյ, Խալիֆան ասաց: — Վէ՛զիր, ի՞նչ պատուական քիթ է քիթդ: Մարդարէի մօրուքը վկայ, որ կեանքիս մէջ գորա նման գեղեցիկ բան տեսած չէի:

«Մեծապէս չնորհակալ եմ քո վեհափառութեանը, պատասխանեց վէզիրը, խոնարհեցնելով իւր երկայն վիզը: բայց ես էլ քեզ, թագաւոր իմ, կը համարձակիմ յայտնելու, որ գու արագիլի կերպարանքով աւելի գեղեցիկ ես, քան թէ Խալիֆայի: Բայց դու չէ՛իր բարեհաճիլ արդեօք երթաւ ու ականջ գնել, թէ ի՞նչ են խօսում մեր այժմուայ ընկերակից արագիլները»:

Այդ միջոցին թռչող արագիլը գետնին իջաւ, ու սկսեց կտուցով եւ թաթովը սըրբել ու յարդարել փետուրները: Նորաստեղծ արագիլները շտապով մօտեցան երկու արագիլներին եւ լսեցին հետեւեալ խօսակցութիւնը:

«Բարձր, տիկին երկայնոտիկ, այսօր շատ կանուխ ես եկել դաշտ»:

— Աստուծոյ բարին քեզ, սիրական նըրբակուց, ես եկել եմ նախաճաշիկ անելու: Համեցէք, դու էլ անո՞ւշ արա, ահա քեզ մողէսի կտոր, ահա գորտի ոտ:

«Մեծապէս շնորհակալ եմ. այսօր ամենեւին ախորժակ չունիմ: Իմ այստեղ գալս բոլորովին ուրիշ պատճառաւ է: Այսօր հօրա մօտ մեծ բազմութիւն պիտի ժողովուի, ես էլ պարտաւոր եմ հիւրերի առջեւ պար գալու. ես այստեղ եկայ, որ կանխաւ սերտեմ պարելու պարս»:

Այս որ ասաց, օրիորդ արագիլը սկսեց զանազան շարժմունքներ անելու ու թրուժութելու. Խալիֆան ու Մանսօրը հիացած նայում էին նորա վրայ: Բայց երբոր նա, մի ոտի վրայ կանգնած, միւսը դէպի վեր ծալից ու թեւերը սկսաւ թափ տայու, այլ եւս ինքները իրանց չը կարողացան բռնել, ու երկայն կտուցները բացած՝ սկսան բարձրացայն ծիծաղել: Երբոր Խալիֆան կուշտ ծիծաղեցաւ, ասաց. «Այս այնպիսի զուարձութիւն է, որ փողով գնելն անհնարին է: Ափսօն որ այդ յիմար թռչունները, մեր բարձրածայն ծիծաղից վախեցած, վախան գնացին, ապա թէ ոչ շատ կարելի էր որ՝ մի փոքր երգէին եւս»:

Բայց յանկարծ մեծ վէզիրի միտքը ընկաւ, որ նոցա արգելած էր կերպարանափոխութեան ժամանակ ծիծաղելու. եւ իւր երկիւղը յայտնեց Խալիֆային, որ աղա-

դաղակ րարձրացնելով, ասաց «Մէքքէն ու Մէգինէն վկայ, որ եթէ մենք այսուհետեւ դատապարտուած ենք յաւիտեան արագիլ մնալու՝ այդ սոսկալի տարաբաղդութիւն է մեզ համար: Վէզիր՝ աշխատէ միտքդ բերքելու այն յիմար խօսքը՝ որ բոլորովին ցնդուել է գլխէս»:

— Պէտք է դառնալ դէպի արեւելք, պատասխանեց վէզիրը, երեք անգամ երկրպագութիւն անել ու ասել մո՛ւ մո՛ւ:

Նոքա դարձան դէպի արեւելք եւ այնքան ցած խոնարհեցին գլուխները, որ կտուցները գետնին էին դիպչում: Բայց ո՞վ սարսափանք, ո՞վ տարաբաղդութիւն, ամենեւին չէին կարողանում յիշել այն կախարդական խօսքը: Նատ գլուխ տուին դէպի արեւելք, շատ մկնեցին, բայց ամենը իգուր եղաւ. այն չարաշուք խօսքը իսպառ անհետացել էր նոցա մոտքէն. եւ այդ կերպով խեղճ Խամիդ Խալիֆան ու նորա վէզիրը դատապարտուած էին իրենց բոլոր կեանքը արագիլ մնալու:

Կախարդուած թռչունները տխուր տըրտում ման էին գալիս ջրշեղջի պտուտը, կանանչ արօտի վրայ, եւ ըսդիտէին ինչ անեն: Ոչ արագիլի կաշիէն դուրս գալու հնար սւնէին եւ ոչ դէպի քաղաք վերա-

դառնալու ու իրենց գլխու չարաբաստիկ անցքը մարդոց պատմելու։ Եթէ այդպէս էլ անէին՝ ո՞վ պիտի հաւատար, որ թռչող եկող արագիլներէն մինը նոցա Խալիֆան էր եւ միւսը նոցա վէզիրը։ Դիցուք թէ մարդիկ հաւատային եւս, որ Խալիֆան այդ կերպարանափոխուած արագիլն էր, ո՞վ պիտի յօժարէր արագիլ—Խալիֆային հնագանդելու։

Մէկ քանի օր, գլուխները քաշ արած, տրտում տեղէ տեղ թափառում էին նոքա, կերակրուելով վայրի պտուզներով, որ մեծ գժուարութեամբ կարողանում էին երկայն կտուցներովն ծամելու։ Մոլէսի ու գորդի մսի համն առնելու անգամ փորձ չէին փորձում, վախենալով որ ստամքները աւերեն։ Այս թշուառ վիճակի մէջ նոցա միակ մխիթարութիւնը այն էր, որ կարող էին ուր ուզեն՝ թռչիլ երթալու։ Ամեն օր նոքա գնում նսառում էին Բաղդադի տների կտուրներու վրայ ու այնտեղից նայում էին թէ ժողովուրդը ի՞նչ է անսւմ մայրաքաղաքի մէջ։

Առաջին օրը քաղաքի մէջ նկատեցին նոքա սաստիկ շփոթ ու տրտմութիւն։ Իրանց կերպարանափոխութեան չորրորդ օրը, նոքա գը-

նացին նստեցին Խալիֆայի ազարանքի վրայ ու այնտեղէն տեսան փողոցի մէջ բազմամբոխ հանդիսագնացք, եւ լոգում էին թմբուկների եւ փողերի ձայներ։ Մի մարդ, ոսկէնկար քղամիտ հագած, գեղեցկազարդ նժուգի վրայ նստած գնում էր։ Նորան շրջապատել էին շքեղ հանդերձներով պալատականներ։ Բաղդադի բնակիչների կէս մասը խռոնուած էր այնտեղ, աղաղակելով, «Կեցցէ Միրզան, կեցցէ Բաղդադի իշխանը»։ Արագիները կտուրի վրայ նստած՝ իրար վրայ նայեցան ու Խալիֆան ասաց «Այժըմ հասկացար, իմ սիրական վէզիր, իմ կախարդուելու պատճառը»։ Այս Միրզան, իմ ոխերիմ թշնամիի՝ Քաշնուր կախարդի որդին է։ սորա հայրը երդուել էր ինձ մինչեւ մահս վրէժխնդիր լինելու։ Բայց յոյսը տականին հատած չէ։ Ո՛վ իմ բաղդի եւ անբաղդութեան ընկեր, արի միասին թռչենք երթանք դէպի Մարգարէի գերեզմաննը։ շատ կարելի է որ՝ այնտեղի սրբութիւնը կը փարատէ մեր վրայի կախարդանքը»։

Եւ նոքա թռան դէպի այն կողմ, ուր Մէգինէն է։

Բայց նոքա գեռ եւս ընդելացած չէին

երկար ժամանակ թռչելու. հազիւ թէ շարունակ երկու ժամ թռել էին, մին էլ տեսնեա, վէզիրը կողկողագին ձայնով ասաց, «Տէ՛ր իմ ոյժո չի պատում քո ետեւէն հասնելու. դու շատ արագ ես թռչում, իսկ ես սաստիկ յոդնել եմ. երեկօն էլ ահա վրայ է հասնում: չըպտրէ՞նք արդեօք գիշերս անցնելու մի ապահով տեղ»:

Խասիդը տեսաւ որ վէզիրի ասածը իրաւացի էր. յօժարեցաւ նորա խնդիրը կատարելու. ու վերեւից դիտեցին նոքա մի հովիտ, որի մէջ աւերակներ կային. նոքա իջան այնտեղ գիշեր անցնելու:

Հատ երեւութին այդ աւերակները մի օր ապարանքներ եղած պիտի լինէին. կային այնտեղ աշտարակներ, սիւներ եւ շատ սենեակներ, որոնք բաւականին լաւ պահպանուել էին, եւ որոնց վրայ նայելով՝ կարելի էր նոյց նախկին շքեղութեան վրայ գաղափար կազմել:

Խասիդը ու նորա ընկերը ման էին գալիս աւերակների մէջ, ու իրանց համար օթեւանելու մի ապահով տեղ էին պտրում: Յանկարծ Մանսօր արագիլ կանգ առաւ ու կտմացուք ասաց. «Թագաւոր, թէ եւ վէզիրին եւ մանաւանդ արագիլին խօլական ե-

րեւոյթներէ վախենալը յիմարութիւն է, բայց ես քեզ հաւատացնում եմ, որ վախէս բոլոր մարմինս փուշ փուշ է լինում. ես պարզ լսեցի ադամորդու հառանջանքի ու հեծեծանքի ձայն»: Խալիֆան կանգ առաւ, ականջ դրաւ. եւ իրաւ որ՝ ինքն էլ լսեց մի մեղմ լաց, որ նման էր մարդու ձայնի: Հետաքրքրութիւնը նորան քաշում էր այնտեղ, որտեղից լսվում էր լացը. բայց վէզիրը կըտուցով բռնեց նորա թեւէն եւ աղտշում պաղատում էր չերթալ ու նորանոր վտանգի չենթարկել իրան. բայց իզուր էին նորա ամեն յորդորանքը. Խալիֆան թէ եւ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ կերպարանափոխուած արագիլ բայց այսուամենայնիւ պահպանել էր իւր նախկին անվեհերութիւնը. նա ուշք ըլ դրաւ վէզիրի պաղատանքին. թէ եւ մի փետուրը թողեց վէզիրի կտուցի մէջ, բայց դուրս պրծաւ նորանից, եւ մութ ճանապարհներով գնաց գէպի առաջ: Նուտ հասաւ նա դրան առջեւ, որ կէսխփիկ էր. ահա այդ դրան ետեւէն էր, որ լսվում էր հառաջանքը եւ կականը: Կտուցով բացեց գուռը եւ շէմքի վրայ հիացած կանգնեցաւ: Կիսաքանդ խցի մէջ, որ մի փոքրիկ պատուհանով էր լուսաւորած, գետնի վրայ

նստած էր մի ահագին բու նորա կյոր ու
խոշոր աչքերից յորդառատ արտասունք էին
թափում, ու կեռ կտուցից դուրս գալիս
աղեխարշ հառաջանք եւ հեկեկանք; Երբոր
տեսաւ Խալիֆային ու վէզիրին,—գա եւս
սիրոտ էր առել ներս մտնելու—բուն սրտի
ուրախութիւնից բարձրածայն աղաղակ ար-
ձակեց. թեւերով սրբեց աչքերի արտասուն-
քը ու մարդու ձայնով ասաց նոցա արա-
բերէն. «Բարի, հազար բարի եկաք, ձեր այ-
ցելութիւնը ինձ համար բարեգուշակ նշան
է, վասն զի ինձ վաղուց գուշակուած էր:
որ արագիլը ինձ մեծ բաղդի պիտի հասցնէ»:
Երբոր Խալիֆան իր սարսափից եւ հիա-
ցումից մի փոքր հանդարտեցաւ, խոնար-
հեց իւր վիզը, որքան որ կարող էր լաւ
դրաւ երկայն ոտքերը գեղնի վրայ ու ա-
սաց. «Ո՞վ բու, քո խօսքերից նկատում եմ
որ դու մեզանից օգնութիւն ես սպասում:
բայց տարաբաղդաբար, քո ակընկալածը ի-
դուր է: Երբոր իմանայիր մեր գլխի եկած
չարաբաստիկ արկածքը, դու կը տեսնէիր, որ
մենք էլ քեզ պէս թշուառականներ ենք, ու
մենք էլ օգնութեան ենք կարօտ:»

Այն ժամանակ բուն խնդրեց, որ նորա
պատմեն իրանց գլխի եկած ամեն փորձան-

քը, եւ Խալիֆան մանրամասնաբար պատ-
մեց նորան այն, ինչ որ մեղ արդէն
յայտնի է:

Երբոր Խալիֆան իւր պատմութիւնը ա-
ւարտեց, բուն շնորհակալ եղաւ նորան եւ
առաց՝ «Իմացէք, որ ես էլ ձեզանից պա-
կաս տարաբազզ չեմ: Իմ հայրը Հնդստանի
թագաւոր է. ես նորա միհատիկ զաւակն
եմ: անունս Լուղա է: Նոյն կախարդ Քաշ-
նուրը իմ թշուառութեան եւս պատճառն
է: Մի օր նա եկաւ հօրս մօտ եւ խնդրեց,
որ ինձ իւր որդուն կին անէ: Հայրս բար-
կացկոտ բնաւորութեան տէր է. երբոր այս
խօսքերը լսեց, իսկոյն հրամայեց ծառանե-
րին սանդխքից դէպի ցած գլորել այդ լըր-
քին, որ համարձակեցաւ նորան այդպիսի
առաջարկութիւններ անելու. բայց կախար-
դը, իւր կերպարանքը փոխած, նորից մը-
տաւ հօրս ապարանքը: Մի օր, պարտէզի մէջ
ճեմելու ժամանակ, յանկարծ ծարաւեցայ
ու հրամայեցի որ խմելու ջուր բերեն ինձ.
եւ այդ կախարդը, ստրուկի կերպարանք
առած, բերեց տուեց ինձ ջուր, որն խմած-
ը խմած՝ ստացայ այս գարշելի կերպարան-
քը: Աչ ու սարսափը պատեց ինձ, ու եռ
թալկացայ ընկայ գետնին, եւ շնչառպառու-

թեանս ժամանակ նա յափշտակեց ինձ, բերաւ դրաւ այստեղ եւ սոսկալի ձայնով ասաց:

«Մնա՞ այդպէս գարշատեսիլ ու գազաններէն անգամ արհամարհած, մինչեւ այնքան, որ գտնուի մի մարդ, որ քեզ յօժարակամ իրեն կինը անէ, չը նայելով քո զազրելի կերպարանքին: Իմայէք ուրեմն թէ՛ գուեւ թէ՛ քո հայրը, թէ ինչպէս վրէժիննդիր լինել գիտէ Քաշնուրը՝ մարդոցմէ ատացած թշնամանքի համար»:

«Կերպարանափոխութեանս օրէն ահա անցան քանի ամիսներ, եւ ես այս աւերակների մէջ վարում եմ ճգնաւորի նման միայնակեցիկ կեանք ատեցած ամենէն, մինչեւ անգամ կենդանիներին ու գազաններին վըրայ ահ ու սարսափ ձգելով: Բնութեան գեղեցկութիւնը առ միշտ թաքուցած է ինձ համար, վասն զի ցերեկները ոչինչ չեմ տեսնում: Եւ միայն այն ժամանակ, երբ լուսինի ազօտ լոյսը իւր նուազ նշոյլներով մի փոքր լուսաւորում է այս գաշտերը, միայն այն ժամանակ վարագոյրը աչքիս վրայից ցած է ընկնում»:

Երբոր իւր պատմութիւնը աւարտեց, բուն միւս անգամ սրբեց թեւով աչքը. բայց կը-

րած տառապանքի յիշատակը նորից ու նորից քամեց այնտեղէն արտասունքներ:

Երբ դշխոյի պատմութիւնը լսեց, Խալիֆան խոր մոտածմունքի մէջ ընկղմեցաւ: «Եթէ չեմ սխալում, ասաց նա վերջապէս, իմ եւ քո վիճակի մէջ մի գաղտնի կապ կայ. բայց ով կը մեկնէ մեզ, թէ ինչո՞ւ է եւ ի՞նչպէս է այդ»: Բուն պատասխանեց՝ «Ո՞վ թագաւոր, ես եւս այդպէս եմ կարծում, մանաւանդ երբ մտաքերում եմ: որ երեխայութեանս ժամանակ մի իմաստուն կին ինձ նախագուշակել էր, որ արագիլը ինձ մեծ բաղդ պիտի բերէ: Նատ կարելի է, որ այն կինը նախազգացել էր, որ մենք մի օր մին մինի պիտի փրկենք:»

Այդ բանը Խալիֆային եւս շատ զարմացուց, եւ նա ասաց, «Ի՞նչպէս կարող է լինել այդ:»

— Կախարդը, որ մեզ այսքան աղէտքի պատճառ եղաւ, ամեն ամիս սովորութիւն ունի այս աւերակների մէջ գալու, պատասխանեց բուն: Այստեղից մօտիկ մի լայն ու մեծ գահինձ կայ. այնտեղ նա եւ նորաընկերները միասին ժողովւումեն. ես արդէն քանի քանի անգամ նոցա տեսել եմ: Այդ ժողովի մէջ նոքա մին մինի պատմում

են իրանց ամօթալի գործերը, եւ շատ կարելի է որ խօսելու ժամանակ, նոքա յիշեն այն կախարդական խօսքը, որ ձեր մըստքից թռել է:

«Ո՞վ աննման դշխոյ, ազաղակեց Խալիքուն, ասած ինձ շուտո, երբ այստեղ կը գայ կախարդը, եւ ո՞ւր է այն դահլիճը, ուր նա եւ նորա ընկերները ժողովւում են:»

Բուն մի փոքր ժամանակ լրու մնաց, եւ յետոյ պատասխանեց:

—Մի՞ բարկանալ ինձ վրայ, եթէ ես, իմ պայմանները չառած, խնդիրքդ կատարելու ըլ յօժարիմ:

«Ի՞նչ է այդ պայմանդ, պահանջէ՛, հրամայէ՛. ես ամեն բանի յօժար եմ» ասաց Խալիքան:

—Ես էլ կուզեմ ձեզ յետ միասին ազատուելու, պատասխանեց բուն. բայց այդ այն ժամանակ կը ինի, երբ մինը ձեզանից յօժարի ինձ չետ պսակուելու:

Այս առաջարկութիւնը շշկացուց արագիւներին. Խալիքան վէզիրին աչքով արաւ, ու երկուոր միասին գուրս գնացին:

«Վէ՛զիր, ասաց Խալիքան, ինձ համար այսպիսի պսակը շատ անլացել բանէ: Արք գու պսակուիր այդ բուի վրայ:»

—Հօր, ասաց վէզիրը լեղապատառ, ես պըսակուիմ. կինս աչքերս գուրս կը հանէ եղունգներով, եթէ ես երկրորդ կին տունն մտցնեմ. այս մէկ երկրորդն էլ որ ես ծեր եմ: Բայց դու, թագաւոր, դու երիտասարդ ես, եւ առ այն եւ ամուրի. քեզ աւելի վայելուչ է պսակուիլը մի մատաղ եւ սիրուն աղջկայ հետ, քանթէ ինձ:

«Յաւն էլ այն է, որ ես վստահ չեմ նորա մատաղ եւ սիրուն լինելուն. շատ անախորժ բան է, ապրանքը ամեն կողմից չը զննած, գնելը:»

Նորա այսպէս երկար ժամանակ իրար չետ վիճում էին. եւ վերջապէս տեսնելով որ վէզիրը նախադասումէ առ յաւիտեան արագիւ մնալ, քան թէ բուի վրայ պսակուիլ, Խալիքան ինքը յանձնառու եղաւ պսակուելու: Այս որ լսեց բուն շատ ուրախացաւ, եւ յայտնեց նոցա, որ դորտնից էլ յարմար ըոպէ չէր կարելի ընտրել, վստան զի, ըստ երեւոյթին, այս գիշեր եւեթ կախարդը իւր ընկերներով գալու է այս աւերակների մէջ:

Նա տարաւ արագիւներին յիշեալ դահլիճը: Բաւական ժամանակ նոքա գնացին երկայն ու մութ ճանապարհների վրայէն,

եւ վերջապէս մի աւերակի ճեղքից փայմեց
պայծառ լոյս, որին նոքա մօտեցան. բուն
խրատեց նոցա որքան կարելի է հանգարու
մնալ, ճեղքէն նայիլ եւ ականջ դնել, թէ
ի՞նչ կը պատահի եւ ի՞նչ կը լսեն: Եւ իրաւ
որ՝ նոքա տեսան մի ահագին սիւնազարդ
կամարակապ շքեղ դահիմ. գոյնզգոյն լապ-
տերները գրեթէ արեգակնախայլ լոյս էին
տարածում այնտեղ: Դահիմի մէջտեղը կար
մի կը ու սեղան՝ վրան զանազան համադամ
ու հազուագիւտ կերակուրներ ու խորտիկներ
շարած. սեղանի առջեւ դրած էր բազմոց,
որի վրայ նստած էին ուժ հոգի, որոնց
մէջ արագիւները նկատեցին փերիզակին, որ
նոցա ծախել էր կախարդական փոշին: Հան-
դիսականներէն մինք խնդրեց նորան պատ-
մել իւր վերջին կատարած սխրագործութիւ-
նը, ու վերեղակը պատմեց Խալիֆայի եւ վէ-
զիրի գլխի եկած փորձանքը:

«Այն ի՞նչ խօսք է, որ նոցա մոքերից թը-
ռէլ է, հարցուց կախարդին հիւրերէն մինը:
—Այդ խօսքը լատիններէն է, եւ ամեննեւին
գժուար արտասանելի չէ՝, պատասխանեց
Քաշնուրը, եւ ասվումէ այսպէս՝ Տունաբար:
Երբ որ արագիւները լսան այդ խօսքը,
քիչ մնաց, որ խելքերը գլուխներից թռչէր.

առանց մի վայրկեան կորցնելու, դուրս գը-
նացին աւերակներէն, եւ այնպէս էին վա-
զում, որ բուն գժուարութեամբ կարողա-
նումէր ետեւներէն հասնելու: Երբոր լայ-
նարձակ տեղ հասան, սիրտը ուրախութե-
նէն փղձկած, ասաց Խալիֆան բուին՝

«Իմ ազատիչ՝ դու փրկեցիր ինձ եւ իմ
վէզիրին»:

Այս որ ասաց, գարձաւ գէպի արեւելք-
երկու արագիւները երեք անգամ գլուխնե-
րը խոնարհեցուցին ծագող արեգակի առ-
ջեւ եւ աղաղկեցին՝ Տունաբար: Եւ նոյն
բոպէին, առ մեծի ուրախութեան, ստացան
իրանց նախկին կերպարանքը: Սրտերի ու-
րախութենէն նոքա իրար գրկում, ծիծաղում
եւ լալիս էին, եւ չը գիտէին ի՞նչ անեն:
Բայց անհնար է նկարագրել նոցա հիացու-
մը, երբոր յետ դարձան ու տեսան մի յըք-
նաղագեղ աղջիկ՝ հոյակապ հալաւներ հա-
գած: Ժպտալով ձեռքը պարզեց նա Խալի-
ֆային ու ասաց.

«Կը մանաշես արդեօք, տէ՛ր իմ թագաւոր,
քո բուին:»

Խալիֆան այնքան զմայլած էր դշխոյի
գեղեցկութեամբ եւ քաղցր վարմունքով՝ որ
քարձրաձայն աղաղակեց.

«Այդ ի՞նչ բաղդ էր, որ ես արագիլ էիւ
Երեքը միասին գնացին դէպի Բաղդադ:
Խալիֆան գրպանի մէջ ոչ միայն կախարդա-
կան փոշով տուփը գտաւ, այլ եւ իւր քսակը
լի փողով, որով կարողացաւ մի գեղի մէջ
ճանապարհորդութեան համար ամեն հար-
կաւոր բաները ձեռք բերելու: Այսպէսով
նոքա մի փոքր ժամանակի մէջ հասան Բաղ-
դադի գոներին: Խալիֆայի վերադարձը ա-
յենին զարմացուց, եւ ժողովուրդը սրտի
բերկրութեամբ ընդունեց իւր սիրելի թա-
գաւորին:

Այս տեսնելով, ժողովրդի ատելութիւնը
դէպի սուտանուն Խալիֆա Միրզան եւս
առաւել սաստկացաւ, նորան ու նորա կա-
խարդ հօրը քաշաքաշ գուրս հանեցին ար-
քունի ապարանքնեւ բանդ ձգեցին: Խալի-
ֆայի հրամանով ծերուկ կախարդին տարան
աւերակի մէջ գտնուած այն սենեակը, ուր
ամիսներով նստած էր եղել տարաքաղդ
դշխոն, եւ այնտեղ եւեթ նորան կախ տուին:
Իսկ նորա որդուն Միրզային, որ կախար-
դական արհեստին անհմուտ եւ անտե-
ղեակ էր, Խալիֆան առաջարկեց երկուուն
մինը՝ կամ կախաղանի վրայ քաշ ընկնել
եւ կամ փոշին հոտ անել: Միրզան իսկոյն

յօժարեցաւ փոշին հոտ անելու: Վէզիրը
ներկայացուց նորան տուփը, հրամայեց ա-
սել կախարդական խօսքը եւ միտք անել ա-
րագիլի վրայ: Միրզան առաւ պտղուց փո-
շի, հոտ արաւ, ասաց ճութաբօք եւ արա-
գիլ դարձաւ: Խալիֆան հրամայեց դնել նո-
րան երկաթէ գառագեղի մէջ ու տանել
պարտէզ:

Երկար ու երջանիկ կեանք անցուց Խա-
լիֆան իւր կնոջ՝ գեղեցիկ դշխոյի հետ: Երբ
որ ժամանակէ ժամանակ, ճաշէն յետ, ըստ
սովորութեան գալիս էր նորա մօտ վէզիրը,
նոքա սիրով յիշում էին այս արկածքը: Երբ
որ քէքը վրան էր լինում, Խալիֆան պատ-
կերացնում էր ի՞նչպէս մեծ վէզիրը արագի-
լութիւն էր անում: Նորա նման ծանր ծանր
ման էր գալիս՝ վեր վեր բարձրացնելով ո-
տերը, թափ էր տալիս թեւերը ու երկայն
վիզը դէպի արեւելք խոնարհելով, կանչում
էր մու մու մու: Նորա արքայազն կինը եւ
երեխայքը շատ զուարձանում էին, տեսնե-
լով ու լսելով այդ ամենը: Բայց եթէ Խա-
լիֆան կատակի ու ծիծաղի ծայրը փախ-
ցնում էր, մեծ վէզիրը ժամանով սարսում
էր թագաւորին, որ եթէ նա այլ եւս շա-
րունակէ ծաղրելու, անպատճառ կը պատմէ

թագուհուն՝ ի՞նչպէս չէր ուզում պատկուիլ
բուի վրայ եւ ի՞նչպէս յորդորում էր նոյնը
իրան կատարելու:

Սէլիմ Բարուխը աւարտեց իւր պատմու-
թիւնը, եւ վաճառականները շատ գոհ մը-
նացին նորանից:

«Ժամանակը այնպէս շուտ անցաւ որ մին-
չեւ անգամ չիմացանք ի՞նչպէս վրայ հասաւ
երեկոն, ասաց նոցանից մինը, վրանի կը-
տաւը քարձրացնելով. արդէն ուշ է, երե-
կայեան զովութիւնը արդէն սկսել է փչելու,
այժմ մենք կարող ենք ճանապարհ ընկնել»:
Ընկերները այս առաջարկութիւնը ընդու-
նեցին. վրանները ժողովեցին ու կարաւանը
առաջուայ կարգով ճանապարհ ընկաւ եւ շա-
րունակեց իւր ընթացքը:

Այս ճանապարհորդները, ցերեկուայ ան-
տանելի տօթէն ազատուելու համար, գրեթէ
միշտ գիշերով էին ճանապարհորդում. գիշե-
րուայ քամին զովացնում էր նոցա, եւ փայլուն
աստղերը լուսաւորում էին նոցա ճանա-
պարհը. Վերջապէս նոքա հասան այնպիսի
տեղ, որ շատ յարմար էր իջեւանելու: Իս-

կոյն վրանները կազմուեցան եւ նոքա հան-
գոտացան:

Վաճառականները ամեն կերպ հիւրասի-
րութիւն ցոյց տուին օտարական Սէլիմ Բա-
րուխին, եւ նորա հետ այնպէս էին վար-
վում; ասես թէ հինութ բարեկամներ լի-
նէին: Մէկը տալիս էր նորան բարձեր, միւսը
վերմակ, երրորդը՝ իւր ստրուկին, միով բա-
նիւ՝ նորա հետ այնպէս էին շարժվում: որ
նա ամենեւին չէր զգում; որ օտարի կտրի
տակ է:

Երբ որ ճանապարհորդները քներէն զար-
թեցան. օրուայ ամենատօթագին ժամնէր:
Սիաբերան որոշեցին մինչեւ երեկոյ. տեղե-
րէն չը շարժել: Ճաշը որ աւարտեցին, նո-
րից նստեցին մէմէկու մօտ, եւ երիտա-
սարդ վաճառականը, խօսքը դարձնելով չա-
փահասին, ասաց.

«Երեկուայ օրը Սէլիմ Բարուխը իւր պատ-
մութիւնով մեզ մեծ զուարճութիւն պատ-
ճառեց: Ի՞նչպէս լաւ կը լինէր, եթէ աղայ
Ահմէդը յանձն առնէր իւր գլխի եկած անց-
քերէն մինը մեզ պատմելու: Անհնարին բան
է, որ նորա երկարատեւ կեանքի մէջ շատ
հետաքրքիր անցքեր հանդիպած չը լինին:
Աշխարհիս երեսը նա շատ բան տեսել է.

ուրեմն անշուշտ պատմելու էլ բաներ պիտի
ունենայ:

Առժամ մի Մահմէղը լուռ մնաց, ասես
թէ իւր մտքի մէջ ընտրումէր, թէ ո՞ր
պատմութիւնը պատմէ. ու վերջապէս ա-
սաց.

«Սիրելի բարեկամներ, մեր բոլոր ճանապար-
հորդութեան միջոցին դուք ինձ համար ա-
մենամտերիմ ընկերակիցներն էիք. Սէլիմ
Բարուխն եւս իմ սէրը ու մտերմութիւնը գը-
րաւեց: Ուրեմն ես կը պատմեմ ձեզ իմ
գլուխ եկած մի անցք, որոյ մասին ես շատ
սիրած չեմ խօսելու, այդ էլ՝ ոչ ամեն մար-
դու հետ: Իմ ձեզ ասելուս է Կաբարդան
նա-է պատճենի-նը:



ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԱՎՈՐՄԱՆ

ԿԱԽԱՐԴԱՌ ՆԱԽԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բասրա քաղաքի մէջ հայրս մի փոքրիկ
խանութի տէր էր. նա ոչ ունեւոր էր եւ
ոչ չքաւոր, եւ իւր առուտուրի մէջ այնքան
զգաստ էր, որ երբէք իր յոյսը բաղդիքեր-
մունքի վրայ չէր դնում; վախենալով մի
գուցէ շատի ետեւէն ընկնի ու ձեռքի ու-
նեցած սակաւէն զրկուի: Նա ինձ մեծ խը-
նամքով դաստիարակեց, եւ միշտ առու-
տուրի գործի էր դնում ինձ, այնպէս որ
կարճ միջոցումը ես նորա օգնականը դար-
ձայ:

Երբոր տասնութը տարիս մտայ, հայրս
առաջին անգամ սիրտ ունեցաւ իւր բաղ-
դը փորձելու ու մի խոշոր առուտուրի ձեռք

զարնելու, եւ խիզախեցաւ հազար ոսկի գահեկան ծովային առուտուրի ենթարկելու։ Այս ձեռնարկէն յետ նա շատ չապրեցաւ. երեւի հոգսը եւ վիշտը կենամաշարին նորան։ Այդ վաղահաս մահը բաղդէր հօրս համար. վասն զի, քանի մի ամսէն, բօթ հասաւ մեզ, թէ այն նաւը, որի մէջ էր նորա բոլոր հարստութիւնը, խորդակուել է ու ծովի յատակն է գնացել։ Այս աղէտքը ամենեւին չընկճեց իմ պատանեկական աշխոյժը։ Բոլոր ունիմ-չունիմն ծախսեցի, փող գարձուցի, ու գնացի օտար երկիրներ բաղդս որսալու. հետս ոչոք չիկար, բացի ծեր ծառայէս, որ ինձ այնքան սիրում էր, որ ամենեւին չուզեց ինձմէն հեռանալու, եւ յօժար էր չար ու բարի հետս հաւասար բաժանել։

Բասրայի նաւահանգստումը նստանք նաւ եւ յաջողակ քամիոլ առաջ գնացինք։ Նաւը որի վրայ ես տեղաւորուել էի, ուզիդ դէպի չնդատան պիտի երթար։ Մեր նաւ մոտած օրէն անցել էր արդէն երկու շաբաթ, յանկարծ նաւապետը մեզ յայտնեց, որ ծովի ու օգի նշաններէն նա գուշակում է փոթորիկ։ Արայէն երեւում էր, որ նա հոգւով շատ անհանգիստ էր, եւս

առաւել այն պատճառաւ որ՝ այդ ջրերի վրայ շատ սակաւ նաւել էր եւ չը գիտէր թէ ի՞նչ զգուշութիւններ պէտք էր բանեցնել առաջիկայ փոթորկի դէմ։ Նա հրամայեց բոլոր առագաստները ցած իջեցնել ու ծալել եւ այնուհետեւ մենք շատ կամաց առաջ էինք գնում։ Վերահաս գիշերը թէեւ լոյս էր, բայց ցուրտ. նաւապետը կարծեց թէ փոթորկի մասին սխալուել է։ Յանկարծ մեր մօտից մի նաւ անցաւ, որն առաջ տեսած չէինք։ Նորա տախտակամածի վրայէն լսուեցան խառնաշփոթ աղազակներ, սոսկավի յիշոցներ, վայրագ գոռում—գոչումներ։ Այս բանը ինձ անհասկանավի երեւցաւ, մանաւանդ նորա համար, որ այսպիսի վտանգաւոր միջոցին նաւորդների գլխաւոր պարտաւորութիւնն էր փոթորկի դէմ պատրաստութիւններ տեսնել եւ ոչ թէ վէճ ու կրիւով զբաղսւել։ Մեր նաւապետը որ այդ բոպէին իմ մօտ կանգնած էր, մեռելի նման գունատուեցաւ։ «Իմ նաւը անշուշտ պիտի կորչի», ասաց նա բարձր ձայնով։ «այս նաւողը մահն է»։ Հազիւ թէ բերանս բացել էի, որ հարցնեմ այս քստմնելի խոսքերի մեկնութիւնը, մին էլ տեսնեմ՝ բոլոր նաւաստիները, ողբ ու

աղաղակ բարձրացուցած, մօտեցան նաւապետին. «Տեսան», տեսան, ասում էին նորան, ահա այժմ մենք կորանք»:

Նաւապետը աշխատում էր հանդարտացնել նոցա, Առւրանի մէջից մխիթարական խրատներ կարգալով, բայց իզուր: Յանկարծ՝ փոթորիկ բարձրացաւ եւ հաղիւ թէ մի ժամ էր անցել, մինչև տեսնես մեր նաւը ճարճառեց, ճեղքուեցաւ եւ ճեղքի մէջն սկսաւ ջուրը ներս մտնելու. Նաւաստիների ոյթը չէր պատում ջուրը դուրս թափելու: Հապճեպով ծովը իջեցուցինք մի թիալար նաւակ, եւ հաղիւ թէ ոտերս նորո մէջ դրինք՝ աչքերիս առջեւ մեր նաւը ընկղմեցաւ ծովի յատակը, ու ես մնացի բոլորովին աղքատ: Բայց այս թշուառութիւնը գեռ եւս ոչինչ էր, առաւել միծագոյն աղէտք մնում էր ինձ ապագայումը: Սոսկալի էր փոթորիկի կատաղութիւնը, ծովը սաստիկ ալեկոծում էր ու եռ էր գալիս, անջնարին էր ղեկամարելու մեր նաւակը: Պինդ գրկեցի ես իմ հաւատարիմ ծառային, ու մէկմէկու խօսք տուինք՝ ինչ եւ պատահի, իրարէ չը բաժանուիլ: Վերջապէս լոյսը սկսաւ բացուել, արեգակը ծագելիս քամին աւելի ու աւելի սաստկացաւ

ու մեր նաւակը շուր տուեց: Այնուհետեւ իմ ծովագնացիկ ընկերների երեսը չը տեսայ, ու շնչասպառ եղայ: Երբոք ուշքս վրաս եկաւ, տեսայ ինձ ծառայիս գրկի մէջ, որ զիարդ եւիցէ հնար գտել էր նաւակը ուղղելու եւ ինձ նորա մէջ գնելու: Փոթորիկը հանդարտեցաւ: Մեր նաւից մի տաշեղ անգամ չէր մնացել, բայց հեռուումը նշմարեցինք մենք մի ուրիշ նաւ, գէպի որին տանում էր մեզ ծովի ծփանքը: Երբոք մօտեցանք, տեսանք որ՝ դա նոյն իսկ նաւն էր, որ անցեալ գիշեր սրբնթաց անցել էր մեր մօտից ամենիս ահ ու սարսափի մէջ ձգելով: Այդ նաւի վրայ նայելիս՝ մարմինա փուշ փուշ էր լինում: Նաւապետի նախազգացմունքի շուտ կատարուելը եւ նաւի քստընելի կերպարանքը սարսափեցնում էր ինձ: Բոլորովին ամայի էր երեւում ինձ նաւը, եւ թէպէտ շատ մօտեցանք նորան, բայց վրան ոչ մի հոգի չը տեսանք: Ակսանք պինդ պինդ կանչելու, խնդրելով որ մեզ օգնութիւն տան: բայց մեր աղաղակը ու խնդիրը մնացին անպատասխան: Բացի այդ նաւէն մենք ուրիշ ոչինչ գրկութեան հնար չունէինք, ուստի դորա համար եւս գոհ էինք Մարգարէէն:

Նաւի ետեւի կողմէն կախ ընկած էր եր-
կայն չուան. բոլոր ոյժերս միաւորած թիա-
վարում էինք, որ շուտով հասնենք նորան.
վերջապէս հասանք, եւ ես նորից պինդ
պինդ սկսայ կանչելու, բայց ինձ ոչոք չը
պատասխանեց. Նաւի վրայ գերեզմանի
լուռմթիւն էր թագաւորում. Մեղ ուրիշ
բան չէր մնում, բայց եթէ չուանին փա-
թաթուելով նաւն-իվեր բարձրանալ. եւ ո-
րովհետեւ ես երիտասարդ եւ ուժեղ էի
առաջուառաջ ես բարձրացայ. բայց ինչ
քստմնելի պատկեր բացուեցաւ աչքիս առ-
ջեւ. բոլոր տախտակամածը ներկուած
էր արիւնով, ու քսան թէ երեսուն մեռած
մարմիններ դէս ու դէն ցրուած էին գետ-
նի վրայ. Միջին կայմի մօտ կանգնած էր
մի մարդ՝ ճոխ, զարդարուն հալաւներ հա-
գած, մերկացուցած սուրը ձեռին բռնած.
Երեսը գունատ էր, ու երեսատիպարը ծըռ-
մուռած. Ճակատին ցցուած էր մի գամ;
որով նա հեղիւսուած էր կայմին. դա էլ
մեռած էր: Վախիցս կանգնած տեղս ան-
շարժ մնացի ու հազիւ կարողանում էի
շունչ առնել: Վերջապէս ընկերս էլ բարձ-
րացաւ նաւի վրայ ու ինձպէս սարսափած
մնաց: Բոլոր նաւի վրայ ոչ մի կենդանի

էակ չըկար. ամենտեղ ցրիւ ընկած էին
սոսկալի գիակները:

Երբոր ազօթքով եւ Մարգարէի անունը
յիշելով մի փոքր թեթեւացուցինք մեր հո-
գու վիշտը, —միայն այդ ժամանակ հա-
մարձակեցանք առաջ գնալ ու զննել նաւը.
բայց ամեն անգամ ահ ու դուզով չորս կող-
մերս էինք նայում՝ չինի թէ մի նոր ար-
հաւիրք եւս տեսնենք. բայց ամեն բան ա-
ռաջուայ պէս կեցած էր. ոչ մի կենդանի
էակ չըկար բացի երկուսէս ու յարածուվի
ծովէն: Չէինք համարձակում բարձր ձայնով
խօսելու, վախենալով որ կայմին գամած
նաւապետը իւր ազօտ եւ անկենդան աչ-
քերը մեր վրայ դարձնէ: Մենք մօտեցանք
այն դրանք, որ տանում էր դէպի ներք-
նայարկը եւ կամենում էինք վայր իջնել.
բայց սանդուխքի վրայ կանգ առինք. թէեւ
ուզում էինք իրար ասել մեր հոգու մէջի
եղածը, բայց չէինք համարձակում:

«Ճէր իմ! տսաց վերջապէս իմ հաւատա-
րիմ ծառան, այստեղ քստմնելի ոճիր կատա-
րուել է. բայց եթէ չարագործները ներքնա-
յարկումն եւս լինին՝ փոյթ չէ: առաւել լաւ
է նոցա ձեռքը ընկնել, քան թէ այս մեռել-
ների մէջ մնալ տախտակամածի վրայ»:

Նոյն բանը, ինչ որ ասաց ծառաս, իմ
մոքէս էլ անցնում էր ուստի իջանք
ներքնայարկը բայց ամենտեղ թագաւորում
էր խորին լուսթիւն. մեր ոտնաձայնէն ու
ծովի ծփանքէն զատ ուրիշ ոչինչ չէր լըս-
վում: Երբ նաւապետի սենեակին մօտեցայ,
ականջ գրի գրանը, բայց այնտեղ էլ ոչ մի
ձայն չի լսայ: Բացի դուռը, ներս մտայ:
սենեակի մէջ սարսափելի անկարգութիւն-
էր. ամեն տեղ ցրիւ ընկած էին հալաւներ,
զէնքեր եւ տեսալ տեսակ ամաններ: Ակ-
ներեւ էր, որ փոքր ինչ ժամանակ տռաջ
նաւապետը ու նորա ստորանկեալ մարդիկ
այստեղ խրռիսունք ու գիներբուք էին ա-
րել. կերակուրների, խորտիկների ու խմիչք-
ների մնացորդը կեցած էր սեղանի վրայ:
Սենեակէ սենեակ ու տեղէ աել մանգալով
նկատեցինք որ բոլոր նաւը ծփծփուն էր
ապրանքի բեռներով կերպասեղէններով:
ակն ու մարգարիտներով, շաքարով եւ այլ
այսպիսի ապրանքներով: Ուրախութենիցս
մազ էր մնացել որ խելքս գլխիցս թռչէր.
ինձ թվում էր, որ այսուհետեւ այս բո-
լոր հարստութեան տէրը ես պիտի լինիմ,
վասն զի նաւը տնտէր էր: Իբրահիմ ծա-
ռաս ասաց որ, ըստ երեւոյթին, մենք շատ

Հեռու պիտի լինինք ափերէնք եւ առանց
մարդոյ օգնութեան մենք չենք կարող ոտ-
քերս ցամաք դնել:

Նաւի մէջ կերակուրի ամբաւ պաշտեղէն
կար. ուժերս կազդուրելու համար ինչ ա-
սես կերանք ու խմեցինք ու յետոյ նորից
բարձրացանք տախտակամածի վրայ: Քանի
որ նայում էինք այս մեռած մարդոց վրայ՝
մարմիններս սասան-սասան էր գալիս: Ու-
զեցինք առնել ու ծովլ ձգել նոյա. բայց
ի՞նչպէս հասկացնեմ ձեզ մեր սարսափը,
երբոր ոչ մինը չի կարողայանք տեղէն շար-
ժելու. նոքա այնպէս ամուր կպած էին
տախտակներուն, որ նոցա ծով ձգելու հա-
մար պէտք էր քանդքնդել ըոլոր տախտա-
կամածը, բայց գորա համար պէտք էր կա-
ցին, սզոյ եւ ուրիշ գործիք, որն մենք
չունէինք ու նաւի վրայ էլ չը գտանք:
Նոյնպէս փորձ փորձեցինք նաւապետին
պուկ տալ կայմէն, բայց իզուր. եւ ոչ ան-
գամ կարողացանք նորա քարացած ձեռ-
քէն թուրը հանելու:

Բոլոր այն օրը տխուր տրտում անցու-
ցինք, մտածելով թէ՛ ինչ պիտի լինի վեր-
ջը մեր աղետալի վիճակին: Երբոր գիշերը
վրայ հասաւ, ես հրամայեցի իբրահիմին

Երթալ ներքնայարկը եւ քնել, իսկ ինքս
մնացի տախտակամածի վրայ այն դիտմամբ,
որ նայեմ՝ մօտերէս չի անցնիլ արդեօք մի
նաւ, եւ կամ չեմ գտնիլ արդեօք աղա-
տութեան մի այլ հնար:

Կուսինը ծագեցաւ, եւ աստղերի վրայ
նայելով, ես հաշուեցի, որ ժամը տասնու-
մէկի մօտ էր գիշերուայ: Այդ միջոցին
աչքերս սաստիկ ծանրացան ու ես չը կարո-
ղանալով քունո յաղթելու՝ ընկայ մի տա-
կառի ետեւ ու քնիցայ. սակայն այդ քուն
չէր, այլ մի տեսակ կարկամութիւն ջղերու
եւ ուզեղի, որովհետեւ պարզ ու մէկին
լոռում էի ինչպէս ալիքը կոծում էին նաւի
կողքերին, լոռում էի ինչպէս քամին փշում
ու սուլում էր առագաստների ու նաւի
պարանների մէջ: Յանկարծ լսեցի նաեւ
մարդոց ձայներ եւ ոտքի տրովիներ տախ-
տակամածի վրայ. թէ եւ ինքս իմ վրայ
շատ ճիգ արի, բայց թմրութենէս սթափել
չէի կարողանում. չէի կարողանում նաեւ
աեղէս վեր կենալ, որ տեսնէի թէ՝ որո՞նք
էին այդ մանեկողները. մի աներեւոյթ զօ-
րութիւն կաշկանդել էր իմ ամեն անդամ-
ները: Զայները, քանի գնում էր, սաստ-
կանում էին. ինձ այնպէս էր թվում: որ

գինեղուարթ ամբոխը տիրել էր նաւին եւ
զուարձանում էր այնտեղ: Մարդոց ձայնե-
րի մէջէն ես պարզ լոռում էի նաւապետի
հրամայական ձայնը. լսեցի ինչպէս նաւա-
տիները պարզեցին առագաստները. եւ յե-
տոյ փոքր առ փոքր մի այնպիսի խոր քնի
մէջ ընկղմեցայ, որ երեխայութեանս ժա-
մանակ անգամ այդպէս պինդ քնած չէի,
եւ միայն այն ժամանակ զարթեցայ, երբ
ծագեցաւ արեգակը եւ նորա ճառագայթ-
ները սկսան այրել երեսս:

Զարմանալով աչքս չորս կողմն դարձու-
ցի. փոթորիկը, նաւը, մեռած մարդիկ, ե-
րեկուայ ամեն անցքը եւ գիշերուայ ուրուա-
կանների արկածքը—ամենը, ամենը ինձ ե-
րազ էին թվում: Նաւի վրայ ամեն բան
այնպէս էր, ինչպէս որ առաջ. անշարժ
տարածուած էին դիակները տախտակամա-
ծի վրայ. անշարժ կեցած էր նաւապետը՝
կայմին գամաց: Գնացի որ գտնեմ ծերունի
իբրահիմին:

Ծառաս նստած էր նաւապետի սենեակի
մէջ ու մտածողութեան մէջ խորասուլզուած.
եւ երբ տեսաւ ինձ՝ բարձր ձայնով ասաց.
«Այս, տէր իմ լաւ էր մեզ ծովի անգունդ-
քի մէջ խեղուիլ քանթէ այս կախարդած

նաւի վրայ ազատուիլ եւ սորա վրայ այլ եւս
մի գիշեր անցնել Ես հարցուցի նորա
տրտմութեան պատճառը եւ նա պատմեց
ինձ հետեւեալը:

«Փոքր մի ժամանակ քնած էի, ասաց
իբրահիմը, երբոր յանկարծ ականջիս ձայ-
ներ հասան, իբր թէ վերեւումը, տախտա-
կամածի վրայ մարդիկ վազվզում են Իսկըզ-
բան կարծեցի թէ՝ այդ գու ես որ առաջ
ու յետ ման ես գալիս, բայց յետոյ որոշ
լսեցի, որ առ սակաւը քսան հոգի վազվզում
են այնտեղ. լսեցի որ նոքա աղաղակում
էին ու իբրար յիշոցներ էին տալիս. վերջա-
պէս մի մարդ սկսաւ սանդուխքէն ցած իջ-
նելու ու ծանր ծանր ներս մտաւ: Ես թէ-
եւ ուշաթափ եղայ. բայց ժամանակէ ժա-
մանակ ուշքս վրաս էր գալիս եւ այդ կար-
ճատեւ միջոցներին ես նկատեցի, որ ներս
մտնողը կայմին գամած մարդն էր: Նստաւ
նա սեղանի առջեւ, սկսաւ գինի խմել ու
տաղեր ասել. նորա հետ միասին նստած
էր մի ուրիշ մարդ եւս, — իսկ այն մարդը,
որ կարմիր հալաւ հագած, պառկած է ոչ
հեռի նաւապետէն, նոքա միասին էին գի-
նի խմում».

Այսպէս պատմեց ինձ իբրահիմը:

Դժուար չէ երեւակայելը, թէ ինչ չոգե-
տանջ վիճակի մէջ պիտի լինէի ես. այս ա-
մեն արհաւիրքը ոչ տեսիլք էին եւ ոչ ու-
րուական պատկերներ. ես ինքս իմ ականջ-
ներով լսեցի այն խառնաշվով աղմուկը,
որ բարձրացուցին մեռելները: Քստմնելի
բան էր այսպիսի ընկերների հետ միասին
ճանապարհորդութիւն անելը: Երկար մտա-
ծելուց յետ, իբրահիմը ասաց. «Ահա ինչ
բան եկաւ մտքիս իմ մեծ-հայրս — Աստուած
ողորմի հոգուն — ինձ մի աղօթք էր սովո-
րեցրել, որն ազատումէ չար այսերէ եւ
փարատումէ ամեն կախարդական զօրու-
թիւն»: Իբրահիմի կարծիքով մեր ծանր եւ
ամուր քունը, որ, հակառակ մեր կամքին,
մեզ վրայ եկաւ, չըպիտի բնական բան լի-
նէր. եւ հետեւեալ գիշեր նորան յենթարկ-
ուելու համար, նա խորհուրդ տուեց բա-
րեպաշտ մոօք կարգալ Դուրանը եւ ջերմե-
ռանդ աղօթք անել: Ես հաւանեցայ նորա
ասածին: Թէեւ մեր յօյսը Մարգարէի օգ-
նութեան վրայ շատ մեծ էր, այնու ամե-
նայնիւ մենք ահ ու գողով սպասում էինք
գիշերուայ վրայ-հասնելուն: Նաւապետի
սենեակի մօտ մի փոքրիկ մառան կար, ուր
մենք մտադիր էինք պահպանիր էինք պահպանիր:

գրան վրայ մի քանի մեծ ու երկայն ճեղ-
քեր բացինք, որ կարողանայինք նորա մէ-
ջից նկատելու թէ ինչեր կը պատահին նա-
ւապետի սենեակումը։ Յետոյ մառանի մէջ
մոտանք ու դուռը ներսէն որքան կարելի
էր՝ ամուր փակեցինք, ու իբրահիմը նորա
չորս խորշումը գրեց Մարգարէի անունը.
Եւ այսպէս պատրաստուած, սպասեցինք
գիշերուայ արհաւիրքներուն։

Գիշերուայ ժամը տասնումէկին վրաս նո-
րից թմրութիւն եկաւ. այս որ նկատեց
իբրահիմը, յօրդորեց ինձ Առաքանի մէջէն
հոգեշահ խրատներ կարդալ եւ աղօթք ա-
նել։ Ես նորա խրատը կատարեցի եւ ընկո-
տութիւնը փարատեցաւ վրայէս։ Յանկարծ
նաւի վրայ ամենքը ոտքի ելան. սկսան պա-
րաններով դդրդոց բարձրացնել տախտա-
կամածի վրայ մանգալ, եւ շատերի ձայնը
մէկին ու որոշ հասնում էր մեր անկաջին։
Մի քանի րոպէ հոգեկան տանջանքով սպա-
սելուց յետ, լսանք որ՝ սանդուխքից իջնե-
լով գալիս են նաւապետի սենեակը։ Իբրա-
հիմը սկսաւ քերանք ասելու այն աղօթքը,
որ սովորել էր իւր պապէն։

Թէկուզ երկընքի թեթեւ ամպերէն,
Թէկուզ որ երկրի խոր անդունդներէն,

Թէկուզ կըրակէն, կամ թէկուզ զըրէն
Որտեղից կուզէք եղէք դուք եկած, —
Զեր ամենեցուն տէրըն է Աստուած,
Նորա անունով ես ձեզ թոյլ չեմ՝ տալ
Զար խորհուրդներով մեզի մօտենալ.
Ճշմարիտն ասեմի ես այնքան շատ չէի
հաւատում այս աղօթքի զօրութեանը. իսկ
երբոր նաւապետի սենեակի դռները երկբա-
ցիկ բացուեցան՝ գլխիս վրայի մազերը տէգ-
տէգ կանգնեցան. տեսանք ինչպէս ներս
մտաւ մի բարձրահասակ, բարեկազմ եւ
գեղեցկագէմ մարդ, նոյն ինքը, որ ճակա-
տէն գամած էր կայմին. գամը թափ ան-
ցած նորա ուղեղի միջով ցցուած էր ճա-
կատին. սուրը որ սովորաբար մերկացու-
ցած էր նորա ձեռքին, այժմ՝ պատեանի
մէջ էր. նորա ետեւից գալիս էր մի ուրիշ
մարդ՝ ոչ այնքան հարուստ հագուած, որին
ես տեսել էի մեռելների մէջ։ Նաւապետի —
վրայէն երեւում էր որ նա պիտի յինէր —
երեսը դժգոյն էր, մօրուքը թաւ ու թուխ
ու հայեացքը վայրագ։ Նա սենեակի ամեն
ծակուծուկերը աչքէ անցուց բայց ես լաւ
նկատեցի, որ մեր պատսպարանի մօտից
անցնելիս, մինչեւ անգամ թեթեւ հայեացք
չը ձգեց նորա վրայ։ Երկուսն էլ նստեցան

սեղանի առջեւ, որ դրած էր սենեակի մէջտեղը, բարձրածայն ու գրեթէ գոչելով խօսում էին. բայց մենք նոցա խօսակցութենէն բան չը հասկացանք, վասն զի նոքա մեզ անծանօթ լեզւով էին խօսում. Նոցա զրոյցը աւելի ու աւելի բորբոքում էր, եւ վերջապէս նաւապետը բռնով այնպէս պինդ խփեց սեղանին, որ բոլոր սենեակը սասանցաւ. յետոյ տեղէն վեր թռաւ, մերկացուց թռւրը եւ երկուսը միասին դուրս պրծան սենեակէն: Միայն այն ժամանակ մենք սկըսանք ազատ շունչ առնել. բայց մեր սարսափը բոլորովին չը փարատեցաւ: Տախտակամածի վրայ աղմուկը ու շփոթը, քանի գնում էր, սասականում էր. Մեր ականջին հասնում էին տոփիւն, գոռում-գոչում; աղաղակ ու բարձրածայն ծիծաղ. ասես թէ տախտակամածը ու նաւի բոլոր աղենմաղիսը մեր գլխուն փուլ պիտի գար. երեւակայելն անգամ գժուար է այն սոսկալի դղրդոցը, որ անում էին մեռելները. վերջապէս լսուեցաւ զէնքի շկահիւն եւ նախատական խօսքեր. եւ յանկած ամենայն ինչ լրուեցաւ: Քանի մի ժամէն յետ մենք սիրտ առինք վեր բարձրանալու, եւ ամեն բան աեթանք այնպէս, ինչպէս որ առաջ էր. գիտակները իրանց տե-

ղերումը անշարժ ու կարկտմած՝ պառկած էին: Այս կերպով նաւի վրայ քանի մի օր անցուցինք: Միշտ գէպի արեւելք էինք նաւում եւ, ըստ երեւոյթին, չուտ պիտի հանէինք մի որ եւ է ափի. բայց, ինչպէս մեզ երեւում էր, եթէ ցերեկները քանի մի մղոն առաջ երթայինք, գիշերները միշտ գէպի յետ էինք գալիս, վասն զի արեւը ծագելիս նկատում էինք սր՝ միշտ միեւնոյն տեղումն ենք: Այս տարօրինակ երեւոյթը մենք այսպէս էինք մեկնում. որովհետեւ գիշերները միշտ հակառակ քամի էր բարձրանում, մեռելները նաւը քամուն էին դարձնում: Եւ նա միշտ ուռուցիկ առագաստներով յետ էր դառնում: Այս բանի առաջն առնելու համար, մենք այսպէս կարգադրեցինք. գիշերը վրայ չեկած՝ մենք իջեցնում էինք առագաստները, եւ մագաղաթների վրայ մարգարէի անունը եւ նրահիմի մեծ-հօր աղօթքը գրած՝ կպցնում էինք նոցա վրայ, եւ յետոյ, առաջուայ նման, մառանի մէջ պահած, սպասում էինք թէ ի՞նչ կրինի: Մեզ այնպէս էր երեւում որ այդ գիշեր մեռելների արած շփոթը եւ աղմուկը աւելի սաստիկ էր, բանթէ երբ եւ իցէ. բայց միւս օրը

նկատեցինք, որ առագաստներին դիպած չէին. նոքա այնպէս էին, ինչպէս որ մենք թողել էինք. Այսպէս՝ ամեն առաւօտ մենք մեր պէտքի չափ առագաստ պարզում էինք, որ նաւը կարողանար հանդարտ առաջ երթալ. իսկ գիշերները ամենը ժողովում էինք. Եւ այդ կերպով կամաց կամաց առաջ գնալով՝ հինգ օրուայ մէջ բաւական մեծ տարածութիւն անցանք:

Վերջապէս, վեցերորդ օրը, հեռուումը տեսանք ափը, ու փառք տուինք Աստուծոյ ու Մարգարէին՝ մեր հքաշալի ազատութեան համար. Այդ օրը եւ հետեւեալ զիշերը մենք մօտեցանք ցամաքին, եւ եօթներորդ օրուայ առաւօտը տեսանք մի անձանօթ քաղաք, որ շատ հեռու չէր ափէն: Մեծ դժուարութեամբ կարողացանք խարիսխը ծովը ձգելու ու յատակին կառչեցնելու: Տախտակամածի վրայից մի թիավար մակոյի իջուցինք ծով, ինքներս նստանք մէջը եւ ոյժերս հասածի չափ քաշում էինք թիերը, որ շուտ հասնենք ափին: Կէս ժամից մտանք մի գետաբերան եւ այնտեղից ոտերս ցամաք դրինք: Քաղաքի դրանը մօտ անցաւորներէն հարցուցինք թէ՝ որտեղ ենք, եւ իմացանք որ Հնդստանի

քաղաքներից մինի մէջն ենք, ոչ հեռու այն քաղաքէն, ու էպի ուր ես ճանապարհ էի ընկել: Գնացինք հասարակաց իջեւանը եւ այնտեղ մի փոքր հանգստացանք մեր տաժանական ճանապարհորդութենէն: Այնտեղ հարցուիրձ արինք չըկայ արդեօք մի իմաստուն մարդ, որ կարողանար կախարդական կապերը լուծելու, եւ որից կարողանայի ինձ հարկաւոր խորհուրդները հարցնելու: Ինձ տարան մի յետ ընկած փողոց, ուր մի աղքատիկ տուն կար: Դուռը խիեցի. բացին ու ներս առին ինձ: Ճանապարհ ցոյց տուողս ասաց, որ իմաստուն Մուլէին հարցնեմ:

Ներս որ մտայ, դիմացս մի սպիտակամօրուս եւ մեծաբիթ ծերունի եկաւ ու հարցուց ինձ թէ՝ «Որին եմ ուզում»: Ես ասացի որ՝ իմաստուն Մուլէին ուզում եմ տեսնել: «Ես եմ այն Մուլէն, որին դու պտրում ես», ասաց ծերունին: Այն ժամանակ ես մանրամասնաբար պատմեցի նորան գլխիս եկած ամեն փորձանքը, ու խորհուրդ հարցուցի նորանից թէ՝ ի՞նչ պիտի անեմ: Որ նաւը կարողանամ ազատելու մեռեներէն: Ծերունին ինձ ասաց. «Հաւանական է, որ նաւի վրայ գտնուած բոլոր մարդիկ կախարդուած են մի որ եւ է եղեռնագոր-

ծութեան համար, որ կատարուել է ծովի վրայ։ Նա կարծում էր, որ կախարդական զօրութիւնը պիտի ջնջուի, եթէ մեռելները մի առ մի բերուին ցամաք. բայց նոցա ուրիշ կերպ չէր կարելի տեղերէն շարժել, եթէ ոչ այն տախտակներով, որոնց նոքա կպած էին. ուստի հարկ եւ հարկ պէտք էր բոլոր տախտակամածը քանդել։ Կարծես թէ Աստուած ինքը շնորհել էր ինձ այդ նաւը մէջի բոլոր ինչք ու աղխամաղխովը. բայց այդ հանգամանքը պէտք էր, որքան կարելի էր, մարդոցմէ թաքուն պահել։ Ես հաւատացուցի իմաստուն Մուլէին, որ եթէ նա իմ խնդիրը յաջողութեամբ գլուխ բերէ, նորա աշխատանքը առատօրէն կը վարձատրեմ։ Ես, Մուլէն եւ հինգ գործաւոր հետերա առած, գնացինք դէպի նաւ։ ձանապարհին իմաստուն Մուլէն շատ գոլեց մեր հնարագիտութիւնը, որ է՛ հաւաքել առագաստները եւ վրան գրել Առւրանի սուրբ աղօթքները. նա ասում էր որ՝ այդ միակ հնարն էր վրկութեան։

Դեռ եւս շատ կանուխ էր, որ մենք նաւին հասանք. անմիջապէս սկսանք աշխատելու. եւ հազիւ թէ մի ժամ էր անցել՝ արդէն չորս դիակ իջեցուցինք նաւակի վրայ։

Երկու գործաւոր առին տարին նոցա ցամաք, որ այնտեղ թաղեն։ Գործաւորները շուտ վերադարձան եւ պատմեցին մեզ թէ՛ մեռելները մեզ ազատեցին փոս փորելէն, վասն զի հողին դիպած—չըդիպած իսկոյն ինքներն էլ հող գարձան։ Մենք շարունակ աշխատում էինք կտրելու եւ սղոցելու այն տախտակները, որոնց վրայ փռուած էին մեռելները, եւ երեկոյեան դէմ ամենքն էլ տարուեցան ցամաք ու, առաջինների նման, հող գարձան։ Նաւի վրայ մնաց միայն մի մեռել, որ կայմին էր գամած։ Թէ եւ շատ ձիգ թափեցինք, բայց նորա ճակատին ցցած գամը պուկ տալու չը կարողացանք։ Անձարացած մնացել էի ու չըգիտէի ի՞նչ անեմ։ Մեղքանում էի կտրել կայմը, որ նորա հետ միասին նաւապետի մարմինը ափ տանեմ։ Մուլէն մի հնար գտաւ՝ ինձ այս անձուկ վիճակէն ազատելու. ծառաներէն մինին հրամայեց երթալ ափ եւ այնտեղէն մի կողով հող բերել. երբոր հողը բերուեցաւ, Մուլէն առաւ նորանից եւ խորհրդաւոր խօսքեր ասելով, սկսեց ցանել մեռելի գըլխին։ Մեռելը բացեց աջքերը ու սրտէն ծանր ախ քաշեց. արիւնը աղքիւրի նման վազեց նորա ճակատի վէրքէն։ Մենք հեշտու-

թեամբ հանեցինք ճակատէն գամը, եւ նաւապետը ընկաւ ծառաներէն մինի գրկին։ Երբ որ ուշքը վրան եկաւ, նաւապետը հարցուց, «Ո՞վ ինձ ու իմ նաւը մօտեցուց ափին»։ Մուլէն մատով իմ վրայ ցոյց տուեց եւ ես մօտեցայ նորան։ «Նորհակալ եմ քեզանից, ով անծանօթ, ասաց նա, դու ինձ ազատեցիր իմ երկարատեւ տանջանքէն։ Ցիսուն տարի է, որ իմ դիակը լողէ տալիս այս ալիքներու վրայ, ու իմ հոգին դատապարտուած է ամեն գիշեր մտնելու իմ մարմնու մէջ։ Այժմ որ իմ գլուխը գիպաւ հոգին ներուած հոգիս կարող է խաղաղութեամբ երթալու դէպի իմ հայրերը։ Եօ ինչքեցի նորան պատմել ինձ ինչ է պատահել, որ նա ընկել է այն ազետալի վիճակի մէջ, որից ես ազատեցի. եւ նա պատմեց ինձ հետեւեալ պատմութիւնը։ «Սորանից յիսուն տարի առաջ ես հարուստ ու անուանի քաղաքացի էի Զէզայիրի մէջ։ Եայց արծաթասիրութիւնը ստիպեց ինձ եւս առաւել մեծ հարստութեան ագահելու։ Եօ սպառազինեցի մի նաւ եւ գարձայ ծովահէն։ Արդէն քանի մի տարի վարում էի այս նոզկալի արուեստը, որ մի օր նաւիս վրայ մի գարվիշ առի ձրի հասց-

նելու ցգիտեմ որտեղ։ Եօ եւ իմ իշխանութեան տակ գտնուած նաւաստիները խոտասիրտ ու ամենի բնաւորութեամբ մարդիկ էինք, ոչ թէ ցէինք պատկառում այս սըրբակրօն մարդուց, այլ ընհակառակն, ամեն անգամ ծաղր ու ծանակ էինք անում խեղձին։ Մի օր նա ինձ սաստիկ նախատես իմ անգոսնելի եւ անզուսպ բնաւորութեան համար։ Այն օրը եօ իմ զեկավարի հետ միասին շատ խմել ու պինդ հարթել էինք, գինու ոգին եւս առաւել բորբոքեց իմ բարկութիւնը։ Ինչպէս կարող էի տանել մի թշուառ դարվիշի համարձակ եպերանքը՝ որի համար սուլթանին անգամ անպատճիս չէի թողնիւ. իսկոյն թռայ տեղէս, քաշաքաշ տարի գարվիշին նաւիս տախտակամածի վրայ ու գաշոյնս ցցեցի կուրծքը։ Մեռնելիս գարվիշը անիծեց ինձ ու իմ բոլոր նաւաստիներուն. նա մեզ դատապարտեց ոչ կենալ եւ ոչ մեռնել այնքան ժամանակ, մինչեւ որ գլուխներս հողին չը դիպչի։ Գարվիշը մեռաւ. մենք նորա մարմինը ձգեցինք ծովը, ու սկսանք ծիծաղելու նորա սպառնալիքի վրայ բայց, աւագ, նորտ անէծքը նոյն իսկ գիշերը հասաւ մեզ։ Նաւաստիներիս կէսը ապստամբուեցաւ, զէնք

բարձրացուց իմ դէմ. ես մնացածներովս
պատերազմեցայ նոցա հետ մինչեւ այնքան,
որ ինձ հաւատարիմ մնացողները մինչեւ
վերջին մարդը սպանուեցան. ինձ էլ բռնե-
ցին ու ճակատէս կայմին գամեցին. բայց
մեզ սպանողներն էլ շատ չապրեցան. կռուի
մէջ ստացած վէրքերէն նոքա էլ նոյն օրը
մեռան, եւ այդ կերպով իմ նաւը դարձաւ
մի աշագին գերեզման. Մահը ամենիս շըղ-
թայեց ու կարկամեցուց. բայց գիշերուայ
այն ժամին, երբ դարվիշին ծովլը ձգեցինք,
մենք նորից կենդանութիւն էինք ստանում:
Մենք կենդանանում էինք նորա համար,
որ ասէինք եւ անէինք միայն այն, ինչ որ
ասել ու արել էինք այն չարաշուք գիշերը,
երբ մեզ հասաւ դարվիշի անէծքը. Այս կեր-
պով յիսուն տարի մենք միեւնոյն տեղի վրայ
նաւելով՝ ոչ մեռնել էինք կարողանում եւ
ոչ կենալ. ցամաքին հասնել եւս չէինք կա-
րողանում: Փոթորկի ժամանակ կատաղի
խնդութեամբ, բոլոր առագաստները հովին
պարզած՝ սրբնթաց յածում էինք ալիք-
ների մէջ այն յուսով, որ մեր նաւը կը
խփուի մի խութքի ու կը ջարդուի, եւ մեր
յոգնած գլուխները թէկուզ ծովի յատակը
կրդիպին հողին. բայց իզո՞ր էք մեր յոյսը.

մեր նաւը իւր մէջի բոլոր բեռնովը մնում
էր անինաս: Աչա այժմ հասաւ ժամանա-
կը ինձ մեռնելու: Միւս անգամ կրկնում
եմ, շնորհական եմ քեզնից, իմ ազատիչ:
Եթէ հարստութիւնս կարող է ինձ ցուցած
երախտիքդ վարձատրելու առ քեզ իմ
նաւը. նա լցուած է ամեն կերպ հարստու-
թիւնով, առ քեզ ինձմէն ընծայ, իբրեւ
նշան իմ շնորհակալութեան»:

Այս որ ասաց, նաւապետը խոնարհեց
գլուխը եւ վիշեց վերջին շունչը: Մի ակրն-
թարթի մէջ նորա մարմինը, իւր ընկեր-
ների նման, հող դարձաւ: Այդ հողը հա-
ւաքեցինք ու մի կողովի մէջ դրած՝ տա-
րանք ցամաք եւ այնտեղ թաղեցինք: Քա-
ղաք գնացի գործաւորներ վարձեցի ու
տուի նաւս վերանորոգելու. ու քանի որ
գործաւորները աշխատում էին՝ ես նաւի
մէջ գտնուած բոլոր ապրանքը փոխեցի ու-
րիշ ապրանքի հետ: Առատօրէն վարձատրե-
ցի իմաստուն Մուլէին, վարձեցի նաւաս-
տիներ, նորից նստայ նաւ ու վերադարձայ
հայրենիքս: Ճանապարհին մոայ զանազան
նաւահանգիստներ, մերթ իմ ապրանքն
էի ծախում մերթ ուրիշներն էի գնում:
Մեծ Մարդարէն օրհնեց իմ ձեռքի գործը,

ինն ամիսէն մեռած նաւապետէն ստացած
հարսոութիւնս կրկնապատկեցի, եւ այդ-
պէս վերադարձայ մայրենի բաղաքս՝ Բաս-
րա: Համազգիներս զարմանում էին, տհա-
նելով իմ հարսոութիւնը: նոքտ կարծում
էին թէ՛ ես չնարը գտել եմ մոնելու այն
անդամանդեայ ձօրբ, որ գտել էր հոչակա-
ւոր Սինդքագ ճանապարհորդը: Ես չաշխա-
տեցայ մարդոյ՝ իրանց մոլորութենէն դուրս
հանելու: եւ այն օրից Բասրայի երիտա-
սարդները, հէնց որ տասնութը տարեկան
են լինում, իսկոյն գնում են ճանապար-
հորդելու, որ ինձ պէս բազզի հանդիպին:
Խոկ ես այնուհետեւ ապրում եմ ինձ հա-
մար հանդիսու եւ ուրախ, ու հինգ տարին
մի անգամ գնում եմ Մէքքէ՛ սուրբ տե-
ղի վրայ Տիրոջս երկրպագութիւն անելու,
գոհանալ նորանից ինձ տուած բարօրութեան
համար, եւ աղաջել նորան, որ իւր լուսա-
ծածանչ դրախտը մոցնէ նաւապետին եւ
նորա ընկերներին:

Ահմէղը աւարտեց իւր պատմութիւնը:
Միւս օր կարաւանը անարգել շարունա-
կեց իւր ընթացքը, եւ երբոք հասաւ իջե-

ւանելու տեղը՝ օտարական Աէլիմ հարժ իր
ասաց Մուլէին, երիտասարդ վաճառակա-
նին՝ «Դու ընկերներիդ մէջ ամենէն մատա-
դահան ես, միշտ դռւարթ ես. հնար զրկայ,
որ մի դուարձալի պատմութիւն չունենաս
մեզ պատմելու. այսօրուայ տօթագին ժա-
մերուն էլ արի դնւ մեզ մի փոքր դռւար-
ձացուր»:

Ես ուրախութեամբ լրապատմէի ձեզ
մի գուարձալի պատմութիւն ասաց Մուլէն,
բայց պարկեշտութիւնը ամեն բանէ վեր է:
Թո՞ղ առաջ տարեց մարդիկ խօսին: Ցալեւ-
քոսր տիսուր ու լռակաց է ինչպէս լաւ
կըլինէր, եթէ նա պատմէր մեզ՝ ինչ բան
արգեօք թիւնաւորել է նորա կեանքը: Եթէ
իմանանք պատճառը, կարելի է որ նորա
վիշտը թիեթեւացնելու հնար կը գտնենք.
ո՞վ է այն խստասիրտը, որ բարեկամին օգ-
նելու չաշխատէ, թէեւ այդ բարեկամը այ-
լակրօն եւս լինէր:

Այս խօսքերս սառւեցան մի չափահաս
տարիքով, գեղեցիկ դէմքով ու քաջապիրա-
յոյնի մասին, որ միշտ տիսուր էր: Թէ եւ
նա միւսիւման չէր, բայց ընկերները նորան
սիրում էին, վասն զի նորա վարքն ու
բարքը ազգում էր նոցա պատիւ ու յար-

գանք։ Նորա ձեռներէն մինը պակաս էր,
եւ ամենքը համոզուած էին, որ այդ ձեռ-
քի կորութը պիտի լինէր իսկական պատ-
ճառը նորա անվերջանալի տրտմութեանը։

Մուլէի այսպիսի մտերմական խօսքերը
լսելով, Յալեւքոսը պատասխանեց. «Ի բոլոր
սրտէ շնորհակալ եմ ձեր բարեկամական
զգացմունքի համար. բայց իմ վիշտը թե-
թեւցնելը անհնար է։ Եթէ դուք կամե-
նում էք իմանալ պատճառը իմ յարատեւ
տրտմութեան, ես պատրտստ եմ պատմել
ձեզ իմ գլխի հկած անցըը, եւ դուք պարզ
կըտեսնէք՝ ունիմ արդեօք պատճառ տխուր
լինելու։ Դուք տեսնում էք, որ իմ ձափ
ձեռը պակաս է, թէեւ մայրս ինձ երկու
ձեռքովս էր ծնել։ Այն օրը, երբ ես նո-
րանէն զրկուեցայ՝ իմ կեանքի ամենա-
թշուառ ժամանակն է։ Զրգիտեմ ի՞նչպէս
մեկնեմ այդ կորուսոը—արդեօք իմ կա-
տարած մեղքի պատի՞մն է, թէ՞ նախախնա-
մութենէն ուղարկած փորձութիւն։ Պատ-
ճառը լսելով, դուք կըտեսնէք՝ ներելի՞
է արդեօք ինձ միշտ տխուր լինելը։



մայր ունի մասնաւուահ մշացու որ պի
չի կա նորդանից ուղի օւու զի՞ հմի
բնաւու պի սինարա ու պրեմիմանի
ուղինայի ուղի ժիկու ունի ու ուղու
սին զարայի բնաւու որ խոյն քիցու
ուղ ունի ու ուղի տաւուեց ու նուսանի
ուղուու

ԿՑՐԱԾ ԶԵՌՎԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ծննդեան քաղաքս Ստամբոլն է. Հայրս
Բարձրագոյն Դրանը՝ թարգմանի պաշտօն էր
վարում. բաց յայդմանէ, անուշահոտ իւ-
ղերի ու մեռաքսեղէնի նշանաւոր առու-
տուր ունէր. նա ինձ լաւ դաստիարակեց:
Գիր կարգալը մասամբ ինքն էր սովորացրել՝
մանամբ էլ մի յոյն քահանայ. Խսկղանն
կամենում էր ինձ իւր խանութը մոցնել,
բայց տեսնելով իմ մեծ ընդունակութիւնը
եւ սէրը գէպի ուսմունք, եւ լսելով իւր
մտերիմ բարեկամի խորհուրդը՝ նա որոշեց
ինձ բժիշկ անել. Օրինաւոր բժիշկը—եւ ոչ
նոքա, որոնք իրանց գիտութիւնը իրանք են
քարոզում վողոցների ու հրապարակների
մէջ—օրինաւոր բժիշկը միշտ վստահ է, որ

ԴԻՌՋ ԾԱՂՏ

ՅԺԱԴԳԱՎԱԾՅՈ

մի օր ահագին հարստութեան տէր պիտի
լինի: Մեր տուն միշտ երթեւեկում էին
ֆուանկները, եւ նոցանից մինը յորդորեց
հօրս, որ նա ինձ ուղարկէ նորա հայրենիքը՝
Փարիզ, ասելով որ այնտեղ ձրիաբար սովորեցնում են բժշկանութիւն, եւ առաւելլաւ,
քան թէ ո՞ր եւ է երկրում: Եւ խոստացաւ
ձրի հասցնել ինձ մինչեւ Փարիզ. Հայրս որ
ինքն էլ իւր կեանքի մէջ շատ ճանապար-
հորդութիւններ էր արել, ընդունեց այդ
առաջարկութիւնը, ու ֆուանկը նշանակեց
ինձ երեք ամիս ժամանակ, պատուիրելով—
որ այդ միջոցին ճանփուս ամեն պիտոյքնե-
րը հռամամ եւ պատրաստուիմ: Արտիս ու-
րախութենէն ինչ անելո ըրգիտէի, որ շու-
տով օտար աշխարհներ պիտի տեսնեմ: Եւ
անհամբերութեամբ սպասում էի այն վայր-
կենին, երբ պիտի նստէի նաւ ու ճանփայ-
ելնէի: Ֆուանկը իւր գործերը աւարտելուց,
նոյնպէս սկսաւ իւր ճանապարհորդութեան
հոգու անել: Ճանապարհ ընկնելէս մի օր
առաջ, երեկոյեան դէմ: Հայրս տարաւ ինձ
իւր ննջարանը, այնտեղ սեղանի վրայ դրած
էին գեղեցիկ նոր հալաւներ: բայց իմ ու-
շագրութիւնը առաւել գրաւեց ոսկու տէզը,
որ նոյնպէս կեցած էր սեղանի վրայ: Կեան-

քիս մէջ այդքան շատ փող տեսած չէի,
Հայրս գրկեց ինձ, ասելով. «Ո՛րդեակ, ահա այս
ամենը պատրաստեցի քո առաջիկայ ճանտ-
պարհորդութեանը համար. այս այն հա-
լաւներն են, զէնքերն են, որ ես ինքս հօրէս
ստացայ, երբ պատրաստվում էի օտար աշ-
խարհ չուելու: Ես գիտեմ, որ գու հմուտ
ես զէնքի կիրառութեան. բայց աղաջում
եմ քեզ, որ միայն անձդ պաշտպանելու
համար ձեռքդ առնուս զէնքը: Քաջ եղիր.
թշնամիներդ թող գողան քո առջեւ: Բայց,
ափսոս, որդեակ իմ որ ես հարուստ չեմ:
Իմ բոլոր ունեցածը ես երեք մաս բաժա-
նեցի: մի մասը տալիս եմ քեզ: երկրորդ
մասը կառնեմ իմ ատրուստի համար. իսկ
երրորդին ես ձեռքով անդամ չեմ դիպչիլ,
նա կը մնայ սուրբ: երբ որ գու անհրաժեշտ
կարիք կունենաս՝ այն ժամանակ կը ստանաս:

Այսպէս խօսեցաւ Հայրս, եւ արտա-
սունքը ազգիւրի պէս վազեցան նորա աչ-
քերէն: Նատ կարելի էր որ՝ այդ նախազգա-
ցումն էր, որ իրարէ առյաւիտեան պիտի
բաժանուինք: Եւ իրաւ որ՝ այնուհետեւ ես
նորան ըք տեսսաց:

Մեր ճանապարհորդութիւնը շատ բարե-
յաջող էր. նաւ նստեցանք եւ առանց մէկ

արգելքի հասանք ֆուանկերու աշխարքը՝ եւ ցամաք կոխելից վեց օր անյած՝ մոտանք նոցա մայրաբաղաքը, որ ասփումէ Փարիզ, եւ այն տեղ, մեր ծանօթ ֆուանկի խորհրդովի ինձ համար մի սենեակ վարձեցի եւ մէջը տեղաւորուեցայ: Զեռքիս փողը ընդամենը երկու հազար թալէր էր, որ ես զգուշութեամբ պահեցի եւ խնայողութեամբ մախում էի: Ամբողջ երեք տարի մնացի Փարիզ, եւ ինչ որ հմուտ բժշկին պէտք էր՝ բոլորը սովորեցայ: Այս երկրի բարք ու վարքին ես ամենեւին չէի հաւանում: Ճանօթներիս թիւը շատ սակաւ էր: բայց նոքա ազնիւ բնաւորութեան տէր երիտասարդներ էին:

Վերջապէս հայրենիքիս կարօտը սկսեց սաստիկ ինձ տանջել, բոլոր այն ժամանակ, որ մնացի Փարիզի մէջ, հօրէս ոչինչ լուր չունէի: ուստի, յաջողակ դիպուած գտնելով՝ ընկաց ճանապարհ ու վերադարձայ հայրենիքս:

Այդ միջոցին ֆուանկաց պետութիւնը գեսպան ուղարկեց Բարձրագոյն Դրանք, ու ես գեսպանի առջեւ վիրաբուժի պաշտօն ստանալով՝ հասայ Ստամպօլ: Հօրս տունը վակ գտայ, ինձ ասացին որ նա, իմ գալէս երկու ամիս առաջ, մեռել է: Ինձ սովորեցնող

քահանան բերեց մեր տան բանալիները երբ որ բացի դուռը ու ներս մտայ՝ տեսայ որ տունը դատարկ էր. ամեն բան այնպէս էր ինչպէս որ հօրս վախճանած միջոցին. միայն պակասում էր յիշեալ ոսկին: Հարցուցի քահանային թէ՝ «Ո՞ւր է հօրս թողած փողը»: Եւ նա պատասխանեց՝ «Հայրդ վախճանեցաւ այնպէս, ինչպէս որ վայել էր բարեպաշտ քրիստոնէին, եւ իւր բոլոր առձեռն պատրաստ փողը նուիրեց եկեղեցուն: Ես թէ եւ այդ բանը չըհաւատացի, բայց ճարս ի՞նչ էր: Քահանայէն զատ ուրիշ մարդ ներկայ գտնուած չէր հոգեվարի մօտ. ո՞չ միայն տեղիք չունէի գանգատուելու քահանայէն, այլ ընդհակառակն, շնորհակալ եւս պիտի լինէի նորան, որ հօրէս մնացած ամեն ապրանքներին տիրապետած չէր նա: Այս իմ առաջին տարաբաղդութիւնն էր. յետոյ ուրիշները եւ նորերը ետեւ ետեւէ եկան հասան ինձ:

Իմ բժշկական հոչակը չէր տարածվում Ստամպօլի մէջ, վասն զի ես ամացում էի, ուրիշների նման, փողոցների ու շուկաների մէջ բարձր ձայնով իմ արուեստը գոյելու: Ես տէր չունէի, որ նորա օգնութեամբը մեծատունների եւ հարուստների տուները

մուտք ունենայի. խեղճ Յալեւքօսի համար ոչոք հոգս չէր անում: Հօրս ապրանքները ծախել չէի կարողանում: Նորա մահէն յետ գնողները ասես թէ մոռացել էին մեր խանութի ճանապարհը իսկ նոր ծանօթներ ու հոչակ ճարելու համար, ինչպէս յայտնի է, ժամանակ է պէտք:

Մի օր, իմ անձուկ վիճակի վրայ մտածելով, յանկարծ միտքս եկաւ, որ Ֆռանկերի երկիրներումը տեսել էի այնպիսի վաճառականներ, որոնք իրանց վաճառքները քաղաքէ քաղաք են մանածում եւ հրապարակների մէջ ծախում, եւ մարդիկ սիրով ձեռք բերում էին նոցա վաճառքը այն պատճառաւ, որ նոքա օտարականներ էին: Այս կերպով կարելի էր հարիւրին հարիւր շահուել:

Առանց երկար-բարակ միտք անելու, ծախեցի հայրական տունս, ստացած փողս երկու մասն բաժանեցի, մի մասը տուի պահելու հաւատարիմ բարեկամիս, մնացած փողով գնեցի այնպիսի ապրանքներ, որ հաճութեամբ գնում են Ֆռանկները, զոր օրինակ՝ շալեր, մետաքսեղէններ, հոտոտ իւղեր եւ օծանելիքներ: Յետոյ նաւի վրայ տեղ վարձեցի եւ երկրորդ անգամ ճանապարհ ընկայ

դէպի Ֆռանկաստան: Երբ Դարդանելեան նեղուցէն անցայ, բաղդը նորից սկսեց ինձ յաջողիլ: Ֆռանկաստանի մէջ ես շրջում էի քաղաքէ քաղաք ու մեծ շահով ծախում էի ձեռքիս ապրանքը: Բարեկամն Ստամպօլէն ուղարկում էր ինձ նորանոր ապրանքներ, ու ես օրէ օր հարստանում էի: Անրջապէս փողս այնքան շատացաւ, որ ես որոշեցի ձեռնամուխ լինել մի նշանաւոր առուտութի: Տեղափոխուեցայ Խոտիա, ապրանքն էլ հետպտարայ: Պէտք է այն եւս ասել որ իմ բժըշկական հմտութիւնը ոչ սակաւ օգուտ էր տալիս ինձ: Հէնց որ ոտքս մի որ եւ է քաղաք էի դնում: իսկոյն դէս ու դէն ցրվում էի տպած յայտարարութիւններ թէ՝ ահա եկել է այստեղ մի հմտւտ բժիշկ, որ շատ ցաւեր բժշկել է, եւ այլն. եւ այդ կերպով իմ բալասանները ու սպեղանիները շատ գահեկաններ քաշում բերում էին գրպանս: Այս եղանակ ճանապարհորդելով, վերջապէս եկայ Խոտիայի Ֆլորէնցիա քաղաքը: Այստեղ միտք ունէի երկար կենալու, նախ որ՝ ինքը քաղաք շատ գուր էր գալիս ինձ եւ երկրորդ որ՝ ուղում էի փոքր ինչ հանգստանալ այն ամեն նեղութիւններէն, ու ըոնք կից են այսպիսի շրջմոլիկ եւ թա-

փառական կեանքին: Սանթա-Քոչէ ասած
փողոցումը մի խանութ վարձեցի եւ նորա
մօտիկ էլ մի սենեակ: առաջինի մէջ դար-
սեցի տապրանքս, խակ երկրորդի մէջ ինքս
տեղաւորուեցայ: Բնակարանիս մօտ, նոյն
տան մէջ կար պտնդոկ, դէպի ուր տանում
էր նոյն խակ սրահը, որի մէջից ինքս էլ
պիտի անցնէի, սենեակս մտնելիս: Քաղաք
Հասած-ըշասած, խսկոյն ցրուեցի յայտա-
րաբութիւններ, թէ ահա եկել է մի յոյն
քիշէկ եւ վաճառական, եւ այն, եւ այն, եւ
հազիւթէ գուռը բացել էի, խանութս լրց-
ւեցաւ գնողներով: Թէ եւ ապրանքիս գինը
շատ ժանդ էր, բայց ես ուրիշ վաճառա-
կաններից շատ էի ծախում, եւ սորա պատ-
ճառը այն էր, որ մարդոց հետ վարվում էի
քաղցրութեամբ ու քաղաքավարի: Ֆլորէն-
ցիայի մէջ ժամանակս շատ ուրախ եւ զու-
արճ էի անցնում:

Քաղաք Հասնելուս չորրորդ օրը, երեկո-
յեան դէմ: Խանութիս գուռը արդէն փա-
կել էի, ու ինքս ներսը, ըստ սովորութեանս,
բալասանների սպեզանիների ու ճարերի շի-
շերն էի մաքրում: Յանկարծ, ճարերի մէջ
գտայ մի տոմսակ՝ հասցէի վրայ իմ անունա
գրած: այդ տոմսակով այս գիշեր եւ եթ,

ուղիղ կէս գիշերին, ինձ հրաւիրում էին
Փօնթէ-Վէքքի ասած կամուրջի վրայ: Տոմ-
սակը կարդալով սկսեցի մոտածել՝ արդեօք
ո՞վ եւ ի՞նչ նպատակաւ ինձ հրաւիրած պիտի
լինէր: Ֆլորէնցիայի մէջ գեռ եւս ո՞չ մի
մարդու հետ ծանօթ չէի: «Կարելի է, ինքս
ինձի միտք էի անում այս գաղտնի հրա-
ւիրը անում է մի հիւանդ», վասն զի այդ-
պիտի գէպքեր ինձ շատ պատահել էին ար-
դէն: Մաքիս մէջ որոշեցի երժալ, բայց,
զգուշութեան համար հետև առի հօրս ըն-
ծայած թուրը:

Տասներկուսին արդէն քիչ էր մնում; որ
գնացի նշանակած տեղը եւ հասայ Փօնթէ-
Վէքքիօ'ին: Կամրջի վրայ ոչոք չը կարեն սպա-
սում էի թէ ո՞վ պիտի հրաւիրէ ինձ: Յուրոտ
էր այն գիշերը լուսինը պայծառ լուսաւո-
րում էր, եւ նորա շողերը բեկրեկվում էին
Արնօ գետի յարածուփ ալիքների մէջ. ե-
կեղեցու աշտարակից զարկեց տասներկուսը-
ես ետեւս նայեցայ եւ տեսայ մի բարձրա-
հասակ մարդ՝ կարմիր լոգիկի մէջ փաթա-
թուած, որի քղանցքովը զգաստութեամբ
աշխատում էր ծածկել երեսը:

Անակընկալ կերպով նորան տեսնելով՝ ես
փոքր ինչ շփոթուեցայ: բայց նոյնհետայն,

ուշքս վրաս ժողովելով, ասացի՝ «Պարոն,
եթէ դու ես ինձ այստեղ հրաւիրողը՝ ասա՛,
ի՞նչ ես ուզում ինձանից»։ Անձանօթը հրա-
մայաբար ինձ նշան արաւ, որ ետեւէն եր-
թամ։ Զըգիտեմ ինչո՞ւ, բայց նորա այդպիսի
վարմունքը ինձ անհանոյ երեւեցաւ, ու ես,
տեղէս չը շարժելով, ասացի՝ «Թէ, պարոն,
մինչեւ որ չասես ինձ, թէ ո՞ւր պիտի եր-
թամ։ տեղէս անգամ չեմ շարժիլ։ Նմանա-
պէս ես ուզում եմ տեսնել քո երեսը, որ
տիպարքէդ հասկանամ մտքիդ խուրհուրդ-
ները»։ Կարմիր լոդիկով մարդը ասես թէ
ամենեւին բանի տեղ չէր դնում ինձ, ու
ասաց. «Թէ որ այդպէս է, պարոն ջալեւըօս,
ես քեզ զօր չեմ անում։ մնա՛ ուր որ կաս»։
Ասաց ու հեռացաւ ինձանից։ Բարկութենէս
կրակ դարձայ ու ամուր ձայնով ասացի.
«Մոլորվում ես, պարոն, եթէ կարծում ես
թէ՝ ինձ պէս մարդը թոյլ կը տայ ամեն յի-
մարին իւր վրայ անպատուհաս ծիծաղելու-
եւ իզուր կարծում ես, որ ես, առանց մէկ
օգտի, պարտաւոր էի այս ցուրտ գիշերը քեզ
սպասելու»։ Ասացի ու վազեցի ետեւէն. բըռ-
նեցի նորա կարմիր լոդիկը ու թուրս մերկա-
ցուցի. Անձանօթը փախաւ ու աներեւութ-
աւ մօտակայ փողոցումը, ձեռքիս մէջ թող-

նելով իւր լոդիկը. Կամաց կամաց իջաւ բար-
կութիւնս. ձեռքս մնացած լոդիկը շատ դիւ-
րութեամբ կարող էր պարզել այս տարօրի-
նակ արկածքը։ Լոդիկը ուսերիս վրայ ձգեցի
ու գնացի տուն։ Հազիւ թէ հարիւր քայ-
լափոխ էի արել, մին էլ տեսնեմ; մի ան-
ձանօթ մարդ մօտից անցնելով ասաց Ֆուան-
կերէն՝ «Կոմա, զգաստ եղիր, այսօր ոչինչ
չէ կարելի անել»։ Ուշքս վրաս դեռ եւս ժո-
ղոված չէի, որ այս անձանօթն էլ գնաց
հեռացաւ ինձանից, միայն տեսնում էի նո-
րա ստուերը, որ նկարվում էր տներու վրայ։
Աներկբայ, այս խօսքերը վերաբերում էին
լոդիկին, որ ուսերիս վրայ էր, եւ ոչ ինձ.
այդ խօսքերէն ես ոչինչ չը հասկացայ։
Միւս առաւօտ մտածում էի թէ ինչ ա-
նեմ, իսկզբան ուզեցի յայտարարել, որ լո-
դիկը գտել եմ. բայց ի՞նչ օգուտ. անձա-
նօթը կարող էր իւր բարեկամներէն մէկին
ուզարկել ու յետ ստանալ իւր հալաւը,
եւ այս առեղծանելիքը ինձ համար անլու-
ծանելի կը մնար։ Զեռքս բռնած զննում էի
լոդիկը. նա կարած էր Գենուայի հատո
թաւշէ, գոյնը մուգ-ծիրանի, աստառը սպի-
տակ աքիսի մորթէ, եւ ուկէթել նկարներով
շքեղ ասղնեղործած։ Նորա գեղեցկութեամբը

զմայլելով՝ յանկարծ միտքս մի բան ընկաւ,
որն որոշեցի ի գործ դնել։ Տարայ լոդիկը
խանութս ու իբրթէ ծախու համար կա-
խեցի, բայց վրան այնպիսի մեծ գին դրի,
որն ի հարկէ է, ոչոք յանձնառու չէր լինիւ-
տալ ու գնելինձանից։ Ես միտք ունեի ծախս
անողների երեսները լաւ գիտել, վասն զի՞
երբ գիշերուայ անծանօթը կամենում էր
լոգիկը վրայէն հանել ու ձգել ես ժամա-
նակ ունեցայ երեսը նայելու, ու նորա կեր-
պարանքը այնպէս խորունկ տպաւորուեցաւ
մոքումն, որ հազար հոգու մէջ կարող էի
նորան ճանաչել։

Լոգիկի անօրինակ գեղեցկութիւնը շատե-
րի մէջ ցանկութիւն յլանում էր գնելու.
բայց ծախս անողներէն ոչ մինը նմանու-
թիւն չունէր գիշերուայ անծանօթին եւ
ոչոք չէր յօժարում վճարելինձ երկու հա-
րիւր սկի, որ ես գին էի դրել լոգիկին։ Ում
որ հանդիպում էի, ամենից հարցնում էի՝
Ֆլորէնցիայի մէջ կայ արդեօք մի մարդ, որ
սորա նման լոգիկ ունենայ. եւ ամենքը
միաբերան ասում էին, որ այսպիսի թանգա-
դին եւ հոյակապ լոգիկ տակաւին. ոչոքի
վրայ աեսած չեն։

Մթնելու վրայ էր, որ խանութս մի երի-

տասարդ մուաւ, որ շուտ շուտ գալիս էր
ինձ մօտ, եւ այսօր էլ նորան տուած գինը
ամենից վերէր, ներս մտած չը մտած, սեղա-
նիս վրայ ձգեց ոսկիներով լի քսակը ու ա-
սաց «Յալեւքօս, թէկուզ սնանկանալու էլ
լինիմ՝ այս լոգիկը ես պիտի գնեմ»։ Ասաց
ու սկսեց սկի դահեկանները համրել։ Ես
շփոթուեցայ եւ ըգիտէի ի՞նչ անեմ. ոչ ծա-
խելու, այլ տիրոջը գտնելու համար էի կա-
խել լոգիկը, այժմ այս խելքի—ազքատը, ա-
հագին գումար տալով իսկական նպատակէս
շեղում էր ինձ։ Ինչ եւ իցէ, ծախեցի լո-
գիկը, եւ շատ ուրախ էի, որ գիշերուայ
արկածքիս համար այսպիսի մեծագին վար-
ձատրութիւն ստացայ։ Երիտասարդը հա-
գաւ լոգիկը ու դուրս գնաց. բայց իսկոյն
վերագարձաւ, լոգիկի վրայէն պուկ տալով
մի տոմսակ, ստաց ինձ։ Յալեւքօս տե՛ս այս
ի՞նչ տոմսակ է, որ լոգիկին կպցրած էր. կա-
րելի է քեզ պէտքական բան լինի։ Առի տոմ-
սակը ու զարմանալով կարդացի հետեւեալ
տողերը։

«Այս գիշեր, պայմաննեալ ժամին, ըե՛ր լո-
գիկը Փօնթէ—Վէքքիօ կամուրջի վրայ ու
չօրս հարիւր սկի դահեկան ստացիր»։ Կե-
ցած տեղու ասես թէ կայծակով խփածի պէս

եղայ. ուրեմն ես ինքս հեռացուցի ինձմէն
իմ բաղդը ու չի հասայ նպատակիս: Երկար-
բարակ միտք չարած, առի այն երկու հա-
րիւր դաշեկանները, վազեցի երիտասարդի
եռեւէն ու ասացի: «Յ՞տ առ քո դաշե-
կանները ու տուր ինձ իմ լօդիկը, ես փոշ-
մանցայ նորա ծախելուս»: Առաջի նուագ
երիտասարդը կարծում էր թէ՛ ես կատակ
եմ անում, բայց յետոյ, տեսնելով, որ ես
ծանրադէմեմ խօսում՝ բարկացաւ, ինձ յի-
մար անուանեց, կանչվատեց, բանազրեց
ինձ ու վերջապէս սկսեցինք մինմինի հետ
ծեծուել: Ես նորան յաղթեցի, խլեցի ձեռքէն
լօդիկը եւ ուզում էի դէպի տուն վազել-
բայց նա ոստիկանին օգնութեան կանչեց,
ու երկուսը ատեանի առաջեւ կանգնեցանք:
Այս դէպքը շատ խորի թուեցաւ դատա-
ւորին, որ իսկոյն հրամայեց ինձ, որ լօդիկը
ոսոխիս վերադարձնեմ: Տեսնելով որ կոխով,
վէճով բան չեմ անիլ, նախ առաջարկեցի
երիտասարդին, բացի երկու հարիւր դաշե-
կանէն, այլ եւս քսան, յիսուն. ուժուուն եւ
ապա՝ հարիւր դաշեկան. ուր որ անզօր գտըն-
ուեցաւ աղաչանք ու պաղատանքս, այնտեղ
շատ զօրեղ հանդիսացան դաշեկաններս: Երի-
տաբարդը առաւ ոսկիները ու գնաց. ես

էլ առի լօդիկը ու հպարտ հպարտ տուն
տարայ, բանի տեղ չը գնելով ամբողջ ֆլո-
րէնցիայի ժողովուրդը, որ ինձ խելագար
անուանեց: Ինչի՞ն էր պէտք մարդոց կար-
ծիքը, երբ ես համոզուած էի, որ գրպանս
միքանի աւելորդ հարիւրեակ դաշեկաններ
մտան:

Անհամբերութեամբ սպասում էի գիշեր-
ուան: Երեկուայ պէս, տասներկուախն մօտ,
լօդիկը առած՝ գնացի Փօնթէ—Վ. Էքքիօ: Աշ-
տարակի ժամացոյցը տասներկու խիած-
չը խփած, գեղեցկակազմ անծանօթը ներկա-
յացաւ ինձ: «Լօդիկը բերի՞ր», հարցուց:
«Երի, պատասխանեցի ես, բայց դու գիտե՞ս,
որ նա զուտ հարիւր դաշեկան է ինձ նըս-
տել»: Այդ ես գիտեմ ասաց անծանօթը,
ահա քեզ, ասաց նա, ցոյց տալով քսակ,
այստեղ կայ չորս հարիւր դաշեկան: Մե-
կուսի տարաւ ինձ, սկսեց համրել խոստա-
ցած դաշեկանները ու ձեռքս դրաւ: Առօ-
նակին շողշողում էին դաշեկանները ու
սիրտս ուրախութենով էին լցնում, բայց
աւազ, այդ ուրախութիւնը վերջինն էր իմ
կեանքի մէջ: Փողը գրպանս դրի ու յետոյ
ուզեցի մի լաւ աչքէ անցնել անծանօթին.
բայց, տարաբաղդաբար, նորա երեսը դիմա-

կով ծածկած էր, այնպէս որ, սարսափելի ցոլուն ազքերէն զատ, ուրիշ ոչինչ նկատել չըկարողացայ: «Մեծապէս շնորհակալ եմ ձեր առատաձեռն վարձատրութեան համար, ասացի նորան. այժմ յայտնեցէք ինձ դուք ինձանից ի՞նչ էք պահանջում, բայց առաջուանէ ձեզ յայտնում եմ: որ ես ոչ մի անգոսնելի գործ յանձնառու չեմլինիլ կատարել»: — Իզուր է ձեր այդպէս կարծելը ու ասելը, պատասխանեց անձանօթը, լոգիկը ձգելով վրան. եթէ դուք բժիշկ չըլինէիք ես չէի դիմել ձեզ. իմ պէտքը միայն բժիշկը կարող է լցնել. բայց ես ձեզ տանելու եմ ոչ հիւանդի, այլ մեռելի մօտ:

«Ես մեռելի հետ ի՞նչ գործ ունիմ, ասացի նորան զարմանալով:

Նա ինձ նշանացի արաւ, որ ետեւ էն երթամ, ու ճանապարհին պատմեց ինձ հետեւելը: «Ես ու իմ քոյրը այս քաղաք եկանք հեռաւոր տեղէ ու իջանք մի բարեկամի տուն: Երկարատեւ հիւանդութիւն քաշելով, երէկ մեռաւ քոյրս. ազգականներս մոտադիր են էգուց եւեթ թաղել նորան. բայց մեր ընտանեկան աւանդութիւնը պահանջում է, որ մեր գերդաստանի ամեն անդամը թագուի մեր հասարակաց գերեզմանատնումը,

ուր թաղուած են մեր նախնիք: Նատերը իմ ազգականներէն, թէեւ մեռել են հեռաւոր տեղեր, բայց նոցա զմռասած մարմինները միշտ տեղափոխուել են մեր ընտանեկան գերեզմանատնունը: Այստեղի ազգականներս թոյլ չեն տալիս քրոջս մարմինը մեր հայրենիք ուղարկելու. ես յօժար եմ նորա մարմինը այստեղ թողնել, բայց այն պայմանաւ, որ գոնէ նորա գլուխը ուղարկուի հօրա, որ գէթ վերջին անգամ տեսնէ իւր զաւակին:»

Այս սովորութիւնը, այսինքն՝ մեռելի գըլուխը կտրելը — ինձ սարսափեցուց. բայց ես չըհամարձակեցայ գիմազարձութիւն անել անձանօթին, եւ յայտնեցի նորան, որ ես շատ հմուտ եմ մեռած մարմին զմռասելու, ուստի յօժարեցայ հանգուցեալի մօտ երթալու. բայց չը համբերեցի որ չըհարցնեմ նորան. «Ինչո՞ւ այդ ամենը պիտի կատարուի գիշերով, եւ մարդոցմէ թաքուն»: Անձանօթը ինձ պատասխանեց, որ ազգականների կարծիքով նորա գիտաւորութիւնը անգոսնելի է, եւ երբէք թոյլ չեն տալ ի գործ գնել. այդ պատճառաւ նա ուղում է նոցանից թաքուն կատարել: Բայց երբոր գըլուխը մարմնէ բաժանուած կըլինի՝ այն ժա-

մանակ նոքա ոչինչ անել չեն կարող եւ կը
հանգստանան: «Թէեւ ես ինքս էլ կարող
էի մեռելի գլուխը կտրել, բայց սաստիկ
գարշանք եմ զգում այդպիսի տարօրինակ
գործի, եւ մանաւանդ որ՝ խղճմտանքը չի թող-
նում ձեռքս քրոջս վրայ բարձրացնել, թէ
եւ քոյրս արդէն մեռած է», աւելացուց ան-
ձանօթը:

Խօսելով խօսելով մենք մօտեցանք մի հո-
յակապ տան. անձանօթը մատով ցոյց տա-
լով տունը, ուզեց հասկացնել, որ այստեղ
պիտի մտնենք: Գլխաւոր գուռը թողած,
մենք մի փոքրիկ դռնատկից ներս մտանք, ու
անձանօթը զգուշութեամբ փակեց գուռը
մեր ետեւէն: Մութ ու ոլորածոյ սանդուխ-
քի վրայով գնացինք դէպի վեր ու հասանք
մի աղօտ լուսաւորած սրահի, եւ այնտեղից
մտանք մի սենեակ, որ լուսաւորած էր կան-
դեղով:

Այդ սենեակի մէջ կար մի մահճակալ եւ
նորա վրայ պառկած էր մեռելը: Անձանօ-
թը երեսը դարձուց եւ ինձ այնպէս էր
թուռում: որ նա արտասունքն է սրբում: Մա-
տով ցոյց տուեց նա մեռելի վրայ եւ հրա-
մայեց որքան կարելի է զմոռութեամբ եւ

շուտ կատարեմ գործս. ասաց ու ինքը գուրս
գնաց սենեակէն:

Հանեցի գործիքներս—ինչպէս վիրաբոյժ,
միշտ հետս էի տանում նոցա, ուր եւ գը-
նայի—ու մօտեցայ մահճակալին: Մեռելը
բոլորովին ծածկած էր. գլխէն զատ ոչինչ
չէր երեւում: բայց այդ գլուխը այնպէս
գեղեցիկ էր, որ վրան նայելիս, սրտէս ա-
րիւն էր կաթում: Թուխ մազերը թաւ գան-
գուրներով երեսնիվայր էին կախուած, երե-
սը գունատ էր, աչքերը փակած: Նախ, ինչ-
պէս սովորութիւն ունին վիրաբոյժները,
երբ ուզում են մարմնի որ՝ եւէ անդամը կըտ-
րել, կարեցի կաշին, ու իս կոյն հանեցի ա-
մենասուր գանակս ու շուտով կտրեցի խըռ-
չափողը: Ո՞վ սոսկալի տեսարան: մեռելը
բացեց աչքերը ու նոյնչետայն նորից
փակեց. ասես թէ հէնց այս ըոպէիս ծանր
հառաջանքով թռաւ նորա հոգին. տաք ա-
րիւնը աղքիւրի պէս բղխեցաւ նորա վէրըէն:
Ես էի սպանողը այս թշուառականին: Իմ
տուած վէրքը անբռւժելի էր. ողորմելի կինը
մեռած առջեւս կեցած էր: Կեցած տեղս
անշարժ մնացի. սարսափը կարկամեցրել
էր անդամներս: «Միթէ, մոածումէի, ան-
ձանօթը ինձ խարեց. թէ՞ նորա քոյրը մի-

այն շնչառպառ լինելով, կարծիք տուել է, թէ մեռել է արդէն։ Այս վերջին ենթագրութիւնս ինձ աւելի հաւանական էր երեսում բայց ես չէի համարձակում ճշմարիտը խոստովանել եղօր, որ իմ շուտափութեամբ պատճառ եղայ նորա քրոջ մահուան. եւ եթէ ես մոտադրութեամբ զննէի՝ շատ հեշտ էր նորան ուշքի բերելու։ Հոգեվարը սրտաճմիկ հառաջեց, քաշը շուցաւ ու փշեց վերջին շունչը։ Սարսափ—սարսափի եկայ ու դուրս փախայ սենեակէն։ Սրահը բոլորովին մուժ էր, ճրագները հանգցրած էին. անծանօթը անհետացել էր. պատէ պատ խարխիւով, վերջապէս գտայ ոլորածոյ սանդուխքը եւ իջայ ներքեւ. բայց այնտեղ էլ ոչոք չըկար. դուռը կողպած չէր, այլ կիսափակ էր. մոտայ փողոց եւ ազատ շունչ առի։ Խելացնորի նման վազելով եկայ տուն, մտայ անկողինս եւ աշխատում էի մոքէս հանելու գլխուս եկած այս սասանական արկածքը. բայց քունը փախչում էր ազքերէս։ Երբոր լոյսը բացուեցաւ, հոգւով մի փոքր հանգստացայ.

Պէտք էր կարծել որ չարագործը, որ այս սոսկալի եղեռան ինձ գործիք դարձրեց, չէր կամենալ ինձ տէրութեան ձեռքը մատնել,

ուստի որոշեցի երթալ խանութս, ըստ սովորութեանս, պարապել իմ գործերով եւ, որքան կարելի է, ինքս ինձի անխոռվ ցուցնել։ Իայց քանի գնում էր, իմ երկիւղը աւելանում էր. ոչ վիրաբուժական գործիքս էի գտնում, ոչ գոտիս եւ ոչ գդակս. այն թշուառական կնոջ սենեամկը արգեօք թողել էի, թէ փողոցումը կորցրել—չը գիտէի։ Նթէ առաջին ենթագրութիւնս լինէր, առանց այլեւայլութեան, ինձ պիտի ձերբակալէին ու վրաս չարագործի դատակնիք կարգային։

Սովորական ժամին գնացի ու բացի խանութս, Դրացիս, ըստ սովորութեանը, ներս մտաւ. նա զրուցանէր մարդ էր. «Լոել ես այս գիշեր ինչ սոսկալի անցք է պատահել, ասայ։ Ես ձեւացայ իբր թէ ոչինչ բանէ տեղեկութիւն չունիմ։ «Այդ շատ զարմանալի բան է, որ դու ոչինչ չը գիտես, շարունակեց դրացիս. քաղաքիս մէջ գորանից զատ ուրիշ խօսակցութիւն չը կայ։ Ֆլորէնցիայի ամենագեղեցիկ օրիորդին, մեր քաղաքապետի աղջկանը այս գիշեր մորթել են։ Միթէ այս բանը լսած չես։ Խեղճ աղջիկը երէկ իւր փեսայի հետ ուրախ ուրախ շըրջում էր փողոցների մէջ. այսօր պիտի կա-

տարուէր նոցա հարսանիքը»։ Դրացուս ամեն մի խօսքը դանակի նման խոցում էր սիրտս։ Իմ՝ հոգեկան տանջանքը անդադար նորոգվում էր, երբ ամեն ներս մտնող մի եւ նոյն բանն էր կրկնում եւ մինը միւսից աւելի սոսկալի կերպով պատմում էին այս աղէտալի անցքը։ Բայց, աւաղ հարիւրապատիկ աւելի սոսկալի էր այն, ինչ որ ես ինքս էի տեսել եւ ինչ որ ինքս էի զգում։

Կէսօրին մօտ խանութս մոտաւ տէրութեան պաշտօնատարը։ Հրամայեց մարդոց դուրս երթալ եւ ինձ հետ երես առ երես մնալով ու գրպանէն իմ՝ կորցրած առարկաները հանելով՝ ասաց՝ «Զե՞րն են այս ամենը։ Ես մի փոքր լուռ մնացի ու ինքս ինձի մըտածեցի՝ պէտք է ճշմարիտը խոստովանել, թէ ո՞չ։ Կիսաբաց գոնէն նայում էին տանուտէրս ու դրացիներս. եթէ ես ճշմարտութիւնը թաքցնէի, նոքա անշուշտ իմ սուտը պիտի բռնէին. վախենալով մի՛գուցէ ստելով եւ՛ս առաւել ծանրացնեմ յանցանքը, պատասխանեցի թէ՝ «Այո՛, պյտ ամեն առարկաները իմն են»։ Պաշտօնատարը հրամայեց ինձ իւր ետեւէն երթալ, ու տարսինձ մի ահագին շէնքի մօտ, որ, ինչպէս իմացայ, Ֆլորէնցիայի բանոն էր։ Մինչեւ

դատաստանի մկսուելը ժամանակաւորապէս փակեցին ինձ այնտեղ վարագալու ամենում այնքան սարսափելի էր երեւում իմ վիճակը։ Մի վայրկեան չէի կարողանում մօռանալ իմ, թէ եւ ակամայ, այսու ամենայնիւ, մարդասպան լինելը։ Նմանապէս խզմմտանքս չարաչար տանջում էր ինձ, որ ոսկու ցոլքէն շացած, աններելի անզգաստութեամբ եւ խելագարութեամբ ներգործեցի։ Բանտի մէջ երկու ժամ մնալուց յետ, ինձ գուրս հանեցին ու բարձր սանդուխքներից տարան, մտցրին մի մեծ դահլիճ, երկայն սեղանի առջեւ նստած էին տասներկու հոգի մեծաւ մասամբ ծերունիներ. դաշտի չորս կողմը շարած էին նստարաններ մինը միւսից բարձր, ամփիթէտորնի ձեւով գածաւորած, եւ նոցա վրայ նստած էին Ֆլորէնցիա քաղաքի ամենանշանաւոր մարդիկը. վերեւի սրահների վրայ խոնուած էին հանդիսականները։ Երբոր ես մօտեցայ սեղանին, տասներկու բազմականներէն մինը՝ մի նեխասաստ եւ տիսուր դէմքով մարդ տեղէն ելաւ։ Դա՛ ինքը քաղաքապետն էր. նա ամենի առջեւ յայտնեց, որ սպանած աղջկայ հայրը լինելով, չէ՛ կարող ատեանի

մէջ ներկայ գտնուել, եւ այդ պատճառաւ
իւր պաշտօնը տալիս է, ըստ աւագութեան,
չետեւեալին: Ծերերէն ամենից աւագը ըլու-
նեց նորա տեղը. այդ ծերունին առ սակաւը
իննըսուն տարեկան կը լինէր. քունքերի
վրայ միայն ունէր քանիմի դեղնած մազեր.
բայց նորա աչքերը դեռ եւս կորցրած չէին
կենդանութեան ցոլը, նորա ձայնը հաս-
տառնեւ ամուգը էր: Այդ ծերունին հար-
ցուց ինձ՝ խոստովանում եմ արդեօք այն
սպանութիւնը, որ կատարել եմ: Ես ինդքե-
ցի, որ ինձ երկայնամութեամբ ականջ դը-
նեն, եւ իմ գլխի եկած բոլոր չարիքը ման-
րամասնաբար պատմեցի հանդիսականներին:
Նկատեցի որ իմ պատմութեան ժամանակ
քաղաքագետի երեսը մէկ շառագնում էր
ու մէկ գունատվում էր, ու լերջապէս, չը
կարողանալով ինքն իրան զսպելու, կանչեց
վրաս՝ «Հը», չարագո՞րծ դու, քո եղեռնա-
գործութեան մէջ ուրիշին աշխատում եօ
ամբաստանելու»: Ծերը միտքը ձգեց քաղաքա-
պետին թէ՝ որովհետեւ յօժարակամ հրա-
ժարուեցաւ պաշտօնէն, այժմ իրաւունք
չունի դատաստանի մէջ խառնուելու:
Ամենքը համոզուած էին, որ այս ոճիրը
կատարուած էր ոչ շահաօիրութեան նը-

պատակով՝ բատ որում ինքը քաղաքապետը
յայտնեց թէ՝ սպանուած օրիորդի մենեակէն
ոչինչ յափշտակուած չէ: Ատեանի նախա-
գահը յայտնեց քաղաքապետին, որ այս չա-
րազուք անցքի մասին արդար դատաստան
անելու եւ իմ պատմածին համագուելու հա-
մար կարի հարկութիւն է նորա դստեր մա-
սին մանրամասն տեղեկութիւններ ժողովել:
Այսպէս վերջացաւ այն օրուայ նիստը: Նա-
խագահը պահանջեց որ հանգուցեալի բո-
լոր թղթերը իրան տան. իսկ ինձ նորից
տարան փակեցին բանտի մէջ, ուր ես աղէ-
տալի օր անցուցի, եւ միայն այն էի ցան-
կանում, որ պահանջած թղթերիցն երեւի
որ եւ է յարաքերութիւն աղջկայ եւ կարմիր
լոգիկով մարդու մէջ: Միւս օր դարձեալ
ինձ բերին նոյն գահինձը ու կանգնեցրին
նոյն դատաւորների առջեւ: Սեղանի վրայ
շատ թղթեր կային. նախագահը ինձ հար-
ցուց՝ իմ ձեռքով գրած են դոքա: Հէնց որ
աչքս ձգեցի նոցա վրայ, իսկոյն նկատեցի
որ նոքա նոյն իսկ ձեռքով գրած էին, ինչ
ձեռքով որ գրած էին իմ ստացած երկու
տումակները: Այս հանգամանքը յայտնեցի
նախագահին. բայց այդ ոչինչ թեթեւութիւն
զբերեց ինձ: Նախագահը ինձ պատասխա-

Նից, որ թէ այսուև թէ այն կարող էի եռ ինքս
գրած լինել, վասն զի նոյս տակ ստորա-
գրած էր զգիրը, որ իմ մականուան սկզբնա-
տառն է. Այդ նամակները լցուած էին սաս-
տով, եպերանքով, եւ հրամայում էին աղջր-
կանը հրաժարուել այն ամուսնութենէն, որի
համար նա պատրաստվում էր:
Ես նկատեցի, որ քաղաքապետը կարողա-
ցել է գատաւորների միտքը շեղել ի վնաս
ինձ, վասն զի այժմ նոքա հետո առաւել
խիստ եւ կառկածանքով էին վարվում.
Գլուխս արդարացնելու համար՝ խնդրեցի դա-
տաւորներին, որ բերել տան իմ թղթերը.
Ինձ պատասխանեցին, որ վայլուց քըքրել են
իմ տուն-տեղը քայց ոչ մի թուղթ գտած
չեն. Երբոր երկրորդ նիստն էլ վերջացաւ,
ես արդէն յոյս կտրեցի անաշառ դատաս-
տանէն. Եւ երբոր երրորդ անդամ կանգնե-
ցայ ատեանի առջեւ. Ինձ կարգացուցաւ
մահուանս դաստակնիքը կամաւոր մարդա-
սպանութեանս Համար. Եւ այսպէս, թողած
լքած ամենէն, հեռու իմ հայրենիքէն, ես
պիտի մեռնէի անվեղ ծաղիկ հասակիս մէջ,
չարագործի նման գլուխս գլխատութեան
կոճղի սկրայ գրած:
Այն տոսկալի օրուայ երեկոն, երբ իմ վիճակը

որոշուեցաւ, ես տրում նատած բանտի մէջ՝
մտածում էի առաջիկայ մահուանս վրայ:
Յանկարծ, բանտի դուռը բացուեցաւ եւ մի
մարդ ներս մտաւ, որ փոքր ինչ ժամանակ
վրաս նայելէն յետ, ասաց ինձ «Յալեւքօս,
միթէ քեզ եմ տեսնում այսուղ»: Լապտերի
աղօտ լոյսը չըթողեց լաւ նայելու եկաւորի
երեսին, բայց նորա ձայնը հոգուս մէջ զար-
թեցուց անցեալի յիշատակները: Հիւրս Վա-
լէտափին էր, Փարիզի սակաւաթիւ բարեկամ-
ներէս մին. դա իմընկերս ու դասակիցս էր:
Վալէտափին ինձ տօաց, որ եկել է հօրը տե-
սութեան համար, — նորա հայրը Ֆլօրէնցի-
այի մէջ հարուստ եւ անուանի մարդ էր.—
յսելով տարարաղդութիւնս շտապել է ինձ
այցելելու, որ նախ՝ այս կեանքումն էլի
մի անգամ տեսնէ ինձ, եւ երկրորդ՝ իմ
բերնէս լու այս սոսկալի անցքի մանրամասն
պատմութիւնը: Ես ամեն բան պատմեցի նո-
րան: Վալէտափին շատ զարմացաւ, եւ ա-
ղաչեց, ինչպէս մտերիմ բարեկամի, բացա-
սիրտ խոստովանել, ոչինչ բան չըթաքցնել:
Ես ամենասոսկալի երդումներով երդուեցայ,
որ ինչոր նորան պատմեցի բոլորը Ճմարիտ
էր եւ այս գործի մէջ իմ միակ մեղքը այն
է եղել, որ ոսկու ցոլքէն շլացած շուտափոյթ

արագութեամբ եւ անխոչեմութեամբ ներգործեցի, եւ միտք չարի թէ՛ օտարալկանի պատմածքի մէջ ո՞քան անձշմարտանման բաներկային:

«Ուզեմն դու չէիր ծանաչում նիանքային», չարցուց ինձ Վալէտտին: Ես հաւատացուցի նորան, որ մինչեւ այդ չարաշուք ժամը ոչ մի անգամ տեսած չեմ նորան: Վալէտտին ինձ ասաց, որ նախ այդ անցքի մէջ մի սոսկալի գալտնիք կայ. երկրորդ՝ գատաւորները շատ շտապով տուել են զատավճիռը եւ երրորդ՝ քաղաքի մէջ լուր տարածուած է, եբր թէ ես վաղուց ծանօթ եմ եղել նիանքայի հետ. եւ նախանձիցս սպանել եմ նորան, որ չըթողնեմ նորա պսակը: Ես պատասխանեցի, որ այդ ամենը կարող էր վերաբերութեամբ կարմիր լոգիկով մարդուն լինել բայց ոչինչ հնար չունիմ վաստերով ապացուցանելու: Վալէտտին ինձ խոստացաւ, որ ամեն մարդկային հնարը գործ կը գնէ գո՞նէ կեանքս փրկելու համար, եւ հեռացաւ: Ես փրկութեան յոյս չունեի, թէ՛ եւ գիտէի, որ Վալէտտին քաջ տեղեակ էր օրէնքներին ու ճարտար փաստաբան էր, եւ դորանէն զատ, ինձ փրկելու հտմար, ոչ աշխատանք կրխնայէր նա եւ ո՞չ փող: Երկու

անգերջանալի տաժանական օրեր անցուցի անյայութեան մէջ բայց վերջապէս եկամ Վալէտտին ու ասաց. «Ես քեզ մի գործիկ մխիթարութիւն բերի, թէ եւ այդ մխիթարութիւնը կից է մի մեծ աղէտքի: Կեանքդ քեզ կըմնայ: բայց դու պիտի զրկուիս մէկ ձեռքէդա: Փղձկած սրտով շնորհակալ եղայ Վալէտտիէն կեանքիս փրկութեան համար: Նա ինձ ասաց, որ քաղաքավետը անողոք էր. նա չէր ուզում թոյլ տալ, որ գործը վերստին քննուի: բայց վախենալով մի՛ գուցէ անարդար երեւի, նա թոյլ տուեց վերագննել այն գատաստանական գրքերը որոնց մէջ յիշուած էին Ֆլորէնցիայումն կատարուած հին քրէական գործերը, եւ եթէ այդ արձանագրութիւնների մէջ կը գտնուի նոյնանման պարագայ, նա կը յօժաժարի ինձ եւս այն պատիժը տալ, որ ստացել է հին ժամանակուայ յանցաւորը: Վալէտտին եւ նորա հայրը ամբողջ օր ու գիշեր քրքրել են հին գատաստանական օրէնքները եւ վերջապէս գտել են մի դիպուած, որ բոլորովին նման է եղել իմին: Այն ժամանակուայ գատավճիռը այսպէս է եղել: «մեղապարտի ձախ ձեռքը կտրել նորա բոլոր ինչքը արքունի գանձարանին տալ եւ ի-

ըան յանցաւորին առմիշտ աքսորել Թօսքանայի օահմաններէն»։ Նոյն պատիժը որոշել էին եւ իմկրայ կատարելու, եւ ես հարկադրուած էի պատրաստուելու այդ չարաշուք ժամին։ Ես չեմ նկարագրիլ ձեր առջեւ այն պակալի ժամը, երբ ես խուրն ամբոխով լցուած հրապարակի մէջ ելայ մահապարտի բարձրաւանդակի վրայ, ձեռքս դրի դահճի սրի տուակ ու իմ սեպհական արիւնովս իմ մարմինը շաղախուեցաւ։

Վալէտոին ինձ հիւրընկալեց իւր տուն, ուր մինչեւ առողջանալս մեացի, եւ ապա հսկաց նա իմ ճանապարհի բոլոր ծախքը. խկ այն, ինչ որքըտինք—վաստակովս ձեռք էի բերել՝ բոլորը կուլ գնաց արդարադատութեան սպասաւորներէն։ Ֆլորէնցիայէն գնացի Սիկիլիա կղզի եւ այնտեղէն հէնց առաջին հանդիպած նաւը նստեցի ու հասայ Ստամպօլ։ Ես կարծիք էի անում; որ Ստամպօլումը իմ բարեկամը փողիս մի մասը պահած կունենայ. ուստի գնացի նորա մօտ եւ մտադիր էի առ ժամանակ մի նորա տանը մնալ. բայց ինչպէս մեծ էր իմ զարմանքը, երբ նա ինձ ասաց. «Ինչու չես ուզում քո սեպհական տան մէջ կենալ»։ Ես հարցուցի՝ Ո՞ր սեպհական տանս. ես տուն չունիմ։

Եւ նա ինձ ասաց, որ իմ քաղաք հառնելէն քանի մի օր առաջ մի օտարական իմ անունով գնեց մի տուն յունաց թաղի մէջ եւ ամեն դրացիներիս յայտնեց, որ ես էլ շուտով գալու եմ։ Բարեկամիս հետ միամին խիսոյն գնացինք այդ տունը եւ իմ հին բարեկամները մեծ սիրով ընդունեցին ինձ։ Մի ծերունի վաճառական ձեռքս տուեց նամակ, որն տուն գնող անձանօթը պատուիրել էր ինձ հասցնելու. նամակի բովանդակութիւնը այս էր։

«Յալեւքօս, Երկու առողջ ձեռքեր անխոնջ ալիտի աշխատեն քեզ համար եւ ալիտի լըցմին քո ամեն պէտքը, որպէս զի դու ուրքան կարելի է քիչ ափսոսաս կորցրած ձեռքդ։ Այդ տունը եւ նորա մէջի բոլոր կահկարանիքը քո սեպհականութիւնն է, եւ ամեն տարի այնքան փող կըստանաս, որ քո համազգիները քեզ իրանց մէջի հարուստներից մինը կըկարծեն։ Երանիթ թէ ոգու կարողանայիր երբեւիցէ ներել նորան, ոոր հարիւրապատիկ թշուառէ քան թէ դու։

Ես հասկացայ ո՛վ պիտի լինէր այս տուղերը գրով։ Մեր վաճառականը ասաց, որ նամակ տուողը մի ֆռանկէ էր ուսերին կարմիր լողիկ ձգած։ Այս ամենը անհերքելի

փատուեր էին, որ անծանօթը ազնիւ զգաց-
մունքներէ զուրկ չը պիտի լինէր։ Տունա
ամենաշեղ կերպով զարդարած էր եւ
խանութա լիքն էր այնպիսի պատուական,
առդանքներով, որոց նմանը ես երբէք ու-
նեցած էի։ Թրդէն տարը տարի է, որ ես
աւելի սպորութեամբ շաբանակում եմ
առուտուրա քան թէ կարօտութենէստիպ-
ուած։ Այնուհետեւ ոտքս ըրկոխեցի այն
աշխարքը, ուր ես գտայ իմ տարաբազուր-
թիւնը։ Ամեն տարի ստանում եմ նշանա-
կած հաղար ոսկի դահեկանը։ Թէ եւ ինձ
շատ հաճելի է իմանալն, որ նոցա ուզար-
կողը բարեմիտ եւ ազնիւ մարդ է, բայց
երբէք չեմ կարողանում սրտէս համելու
այն վիշտը, որ ինձ հալումաշ է անում։
Իմ ձեռքով մորթած թշուառ հիանքայի
կերպարանքը ցերեկ ու գիշեր անդադար
աչքիս առջեւն է։

Յալեւքոս յօյն վաճառականը աւարտեց
իւր պատմութիւնը. ամենքը մեծ ուշադրու-
թեամբ ականջ էին դնում. բայց, ինչպէս
երեւումէր, անծանօթը ամենից աւելի ցա-
ւակցումէր նորան։ Պատմած միջոցին քանի

քանի անգամ արդէն ծանր աշխ քաշեց
իւ մի անգամ էլ Մուլէն նորա աչքերի
մէջ արտասունք տեսաւ. Երկար միջոց խօ-
սեցան նոքա այս աղէտալի գործքի մասին,
եւ վերջապէս անծանօթը հարցուց Յալեւ-
քոսին։

«Միթէ զու չես ատում այն մարդուն,
որ պատճառ եղաւ քո այդքան աղէտքին,
որ զրկեց քեզ ձեռքէ, որ մարդուս ամենա-
թանկագին անդամն է եւ որ վերջապէս,
քո կեանքը այդչափ մեծ վտանգի ենթար-
կեց»։

Յալեւքոսը պատասխանեց. — Կեանքիս մէջ
այնպիսի գառն ժամեր են պատահել որ ես,
արդարեւ, այդ մարդու վրայ գանգանել
եմ Աստուծոյ. բայց նոյնհետայն աղօթքիս
ու կրօնիս մէջ գտել եմ ինձ համար հոգե-
կան միսիթարութիւն. իմ կրօնը պատուի-
րում է ինձ սիրել թշնամիներիս։ Այն եւս
պէտքէ չէ՝ մոռանալ, որ այն մարդը ինձա-
նից շատ ու շատ անգամ աւելի տարաբազգ
պիտի լինի։

«Գու ազնիւ հոգի ունիս», ասաց անծա-
նօթը, սեղմելով Յալեւքոսի լեռքը։

Յանկարծ ներս մտաւ պահապանների
գլխաւորը այլայլած դէմքով ու խզեց նոցա

Խոսակցութենք: «Փամանակ չէ՝ յոդնութիւն առնելու, ասաց նա. մեր վրանները պահպախ տեղ են դրած, ուր աւագակները շուտ զուտ վրայ թափում են կարաւաններին եւ կողապտում են. մանաւանդ որ՝ պահապաններս հեռուից մի քանի կասկածելի ձիաւորներ նկատել են արդէն»:

Այս անակընկալ եւ անախորժ լուրը վաճառականներին ահ ու գողի մէջ ձգեց: Միայն անծանօթն էր, որ այս ընդհանուր շփոթի մէջ անվրդով մնաց ու ասաց. «Ես չեմ հասկանում ձեր երկիւղի պատճառը այսպէս լաւ պաշտպանուած կարաւանին ի՞նչպէս կարող են վնասել քանի մի թափառական արաբներ»:

— Իհարկէ, պատասխանեց պահապանների գլխաւորը, եթէ նորա թափառական արաբների խումբ լինէին՝ ոչինչ վախ չը կարեցց եռ լսած եմ, որ արդէն քանի ժամանակէ և վեր այս տեղերումը յայտնուել է աշարկու Օրբանակը, որից անշուշտ պէտք է զգուշանալ:

«Ո՞վ է այդ Օրբասանը», հարցուց օտարականը:

Ահմէգը, վաճառականների մէջ ամենից տարեցը պատասխանեց.

— Ժողովրդի մէջ զանազան լուրեր է պըտըում այս զարմանալի մարդու մասին, ոմանք ասում են թէ՝ նա մի չնաշխարհիկ էակ է, վասն զի մենակ կռվում է հինգ-վեց հոգու հետ եւ միշտ յաղթում է նոցա. ուրիշները կարծում են, որ նա մի քաջասիրտ փռանկ է, որ իւր բնիկ երկրումը շատ աղէտներ կրելով, եկել առանձնացել է այս անապատի մէջ: Մէկ խօսքով՝ Օրբասան ասածդ երեւելի գող ու աւազակ է: «Ի՞նչ կուզէ լինի բայց նա աղնիւ հոգու տէր է» ասաց վաճառականներէն մինը՝ անունը և զահ, այդ աղնուութիւնը նա գործով ապացուցել է իմ եղբօրը, եւ ես պատրաստ եմ այդ անցքը ձեղ պատմելու: Մէր բոլոր գերդանտանի բարերարն է նա. եւ քանի որ Օրբասանը անապատի մէջ է՝ մեր ընտանիքէն ոչ մի մարդու մազի թելին իրաւունք չունին դիպելու նորաւաւազակը ները: Ուրիշ աւազակների նման, նա չէ կողապտում այլ միայն պահանջում է ապահովութեան հարկը, նա՝ որ յօժար կամքով տալիս է այդ հարկը՝ կարող է աներկիւղ շարունակել իւր ճանապարհը եւ ոչ ոք չի յարձակուի նորաւագայ վասն զի Օրբանակը անապատի պէցն է»:

Այսպէս խօսում էին վրանի մէջ նստողները. բայց պահապանները որ գուրսը կանգնած պահպանում էին բանակը, սաստիկ երկիրդի մէջ էին բազմաթիւ սպառապիշնած ձիտորներ հեռուից դէալ ուղիղ կարաւանի վրայ էին գալիս. Պահապաններից մինը լեզարատառ ներս մտաւ ու ճանապարհորդներին յայտնեց, որ շուտով նոցա վրայ յարձակմունք պիտի լինի Վաճառականները սկսան իրանց մէջ խորհուրդ անել արդեօք ո՞րն է լաւ սպասել թշնամուն, թէ նոցա դէմ երթալ. Ահմէգը եւ հետը երկու վաճառական առում էին որ պէտք է սպասել եւ նայել բանի վերջը ու այդ միջոցին պէտք եղած ամեն պատրաստութիւնները անել. իսկ սրտոտ Մուլէն ու Յալեւքոսը կամենում էին դէմ երթալ աւազակներին, եւ անձանօթին եւս հրաւիրում էին իրանց հետ գալու. Բայց անձանօթը անվրդով հօգով գօտու տակից հանեց մի կապուտ թաշկինակ՝ կարմիր աստղերով նկարած, կատեց տէգի ծայրը ու հրամայեց ստրուկին, որ տանէ ու վրանի վրայ ցցէ. Այս անելուց յետոյ, Սէլիմ Բարուխը ասաց. «Կեանքովս պատասխանատու եմ որ ձիաւորները, տես-

նելով այս նշանը, իսկոյն ձիաներու սանձերը կը դարձնեն ու կը փոխեն իրանց ճանապարհը եւ մեզ անհանգիստ չեն անկի թէ եւ Մուլէն մեծ յոյս չէր գնում նորա խոստմունքի վրայ, այսու ամենայնիւ ըստ բուկը կատարեց անձանօթի հրամանը. Այդ միջոցին վրանի մէջ գտնուողները զինաւորուեցան եւ ահ ու զողով սպասեցին ձիաւորների մօտենալուն. Բայց ձիաւորները նշանը հասկացան. ինչպէս որ անձանօթը գուշակել էր, այնպէս էլ կատարուեցաւ. նոքա դարձրին ձիերի գլուխները ու լուռ մունջ անցան բանակի մօտից. Քանի մի րոպէ ճանապարհորդները հիացումից պապանձուած մնացել էին եւ նայում էին մէկ ձիաւորների ու մէկ անձանօթի վրայ. իսկ ինքը անձանօթը, բանակի դրան առջեւ կանգնած՝ աչքը հեռաւոր տեղեր էր պտտեցնում եւ ասես թէ ոչինչ բանէ կասկած չունէր. Վերջապէս Մուլէն խզեց այս լուռթիւնը, բարձր ձայնով տսելով. «Ասա մեզ. ո՞վ հզօր անձանօթ, ո՞վ ես գու, որի նշանը զինաթափ անում է անապատի ամեհի որդոցը»: — Դուք ինձ իմ աքժէքէն աւելի էք փառաբանում պատասխանեց Սէլիմ Բարուխը. Երբ որ գերութե-

նէս վախայ, ես գողացայ ու հետ առի այդ
թաշկինակը, որին նշանակութիւնը ես չը
գիտեմ: բայց միայն այն գիտեմ որ՝ ով ճա-
նապարհորդութեան միջոցին ձեռքը այս-
պիսի նշան ունի, նա իրան հզօր հովանա-
ւորութեան ներքոյ պիտի համարէ:

Վաճառականները շնորհակալ եղան օտա-
րականէն, իրանց բարերարը անուանելով
նորան: Եւ իրաւ որ, ձիտորների թիւը այն-
քան մեծ էր, որ կարաւանի պահապան-
ները երկար դիմադարձութիւն անել չը պիտի
կարողանային:

Երբ որ վտանգը բոլորովին հեռացաւ,
վաճառականները պարկեցան հանգստանա-
լու, ու արեւը մայր մտնելիս, երբ սկսեց
փէլ զովագին քամին վրանները ժողովեցին
ծալեցին գրաստների վրայ դրին ու ընկան
ճանապարհ:

Հետեւեալ օրը նոքա հասան այնպիսի տեղ,
ուստի մինչեւ անտպատի սահմանագլուխը
մնում էր մէկ օրուայ ճանապարհ: Երբ ա-
մենքը ժողովուեցան մեծ վրանի տակ՝ Ա-
զահ վաճառականը այս օրինակ սկսեց խօ-
սել:

«Երէկ ես Ճեղ ասսցի, որ ահարկու Օր-
բասանը մեծ անձն եւ ազնուահոգի մարդ-

է, իսկ այսօր | ուզում եմ իմ խօսքը փաս-
տերով հաստատել եւ պատմել Ճեղ իմ եղ-
բօր գլխի եկած բաները: Հայրս Աքարա քա-
ղաքի մէջ զադի (դատաւոր) էր. նա ու-
նէր երեք զաւակ որոնց մէջ ես ամենէն
երեցն էի,—եղբայրս եւ քոյրս ինձանից շատ
փոքր էին տարիքով: Քսան տարիս որ լրա-
ցաւ, հօրեղբայրս ինձ իւր մօտ Հրաւիրեց եւ
հրաւերքի պատճառը այն էր, որ նա զա-
ւակ չունենալով, ինձ որդեգրեց եւ իւր
ժառանգը արաւ այն պայմանաւ, որ ես պար-
տաւոր էի, մինչեւ նորա մահը, մօտը մնա-
լու: Հօրեղբայրս մինչեւ խորին ծերութեան
հասաւ եւ ապա մեռաւ. եւ հազիւ երկու
տարի է, որ ես վերադարձել եմ իմ հայրե-
նիքը, եւ այդ պատճառաւ բոլորովին ան-
տեղեակ էի այն ամեն տարաբաղդութիւն-
ներին, որոնք հասել էին մեր ընտանիքին,
նմանապէս եւ այն ողորմութեան, որ Աս-
տուած ուղարկել էր իմ արենակիցներին:



սակ զցուի նի և ներբեր զուրս մոյ չէ
որ նի թե յետուար ու յառաստան խողմա
ապ այսացմ ոզրու ցցիւնոց հովու միջու զոյ
ու ամ ով (զուտուար) մրար նի զցոր
մշնձնաւ ու նի ընկոր մուտք զեզմ ոչեմ
առաջ ընծանալի սպրոց ու սպրոցու—ով մցեզ
ով զո սփրու մուտք իրադիրու միջ զցոի
ու ընդիւնոց ուն զոյ նոյ սպրոցուց ուոց
ուր ու զո ով մաս զուտուար զցու աղը
զոյ ու ընդիւնոց նոյ իրադիրուոց իւս
որու ու զո առանձնայու մրա առայ զրմուար
ամ ն ցուն պահան աղու միջին ով զուտու
մուտքուցմ միջու ուցին սպրոցուց ու ու
ուրին ոյրոց ու առանձ ուրու ու առայ
զցու նի ու ընկոր սպրոց ու զո ու միջու
մաս միջուուց առանձնայու քրու ու զցին
մշնձնաւուց զոյ միջ յնու զընկու ունին
ու զո մուտքուայու մրա ու սկրուան
միջուայիսանեց նի ով ընկոր ու օն առ



ՖԱԹՄԱՅԻ
ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Անձունիք բայ որ թաւառ մասուրը մն յան
առևիճակ զայտ միան ուղար ու ով յեզար
ու առաջ մասուր առաջապահ ուղար ու
ով յանդ միշտք ուղար բայ միան
համար ուղար այլամաս զայտ յագու ու
զայտ միան և ուղար առաջապահ ուղար ուղար

ՔԱԹՄԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

առաջ և յանդ մասուր ուղար միջ և այլ
առաջապահ առաջ ուղար միջ և այլ

Մուսթափա եղբայրս ու Ֆաթմա քոյրս
գրեթէ հասակակից էին. եղբայրս հազիւ
երկու-երեք տարով մեծ էր քրոջէս. Նատ
սիրում էին նոքա իրար, և երկուսն էլ ա-
մեն կերպ աշխատում էին թեթեւացնել
հօրս այն ցաւերն ու տառապանքները, ո-
րոնք գրեթէ անբաժան են մարդուս ծե-
րութեան հետ. Երբոր ֆաթմայի տասնու-
հինգ տարեկան հասակը լրացաւ, նորա
ծննդեան տարեղարձի օրը, եղբայրս, ի պա-
տիւ նորան, հանդիսաւոր տօնախմբութիւն
կատարեց, ուր հրաւիրած էին քրոջս ամեն
բարեկամները. Հօրս պարտէզի մէջ պատ-
րաստուած էին համազամ եւ հազուագիւտ
կերակուրներ. իսկ երբոր երեկոն վրայ հա-
սաւ, եղբայրս հրաւիրեց աղջիկներուն նրս-

**ԹՈՍՊԱՅԻ
ԱՇԽՋՎԱՑԽՁԱ**

տել մի զարդարուն նաւակ որ այդ դիտմամբ վարձել էր, եւ շրջել ծովի վրայ: Ֆաթման եւ նորա ընկերները ուրախութեամբ ընդունեցին այդ հրաւերքը. գեղեցիկ երեկոյ էր, եւ արեւը մայր մտնելիս՝ քաղաքը հիանալի տեսարան էր պատկերացնում ծովի կողմից: Այդ զբոսանքը այնքան հաճոյ երեւցաւ աղջիկներին, որ նորա անգագար խընդրում էին եղբօրս՝ որքան կարելի է չեռու տանել նաւակով: Մուսթաֆան յակամայս կատարում էր նոյցալ խնդիրը, ավան զի, քանի միոր առաջ, մարդիկ սմիւ ծովահէն էին տեսել: զի՞ ծմբ խողաւ գլուխ բարձրի մօտ մի ապառաժ կայ, որ ներս մնած է դէպի ծով աղջիկները ցանկանում էին այդ ապառաժի միւս կողմը անցնել, որ անարգել կարողանան տեսնել ինչպէս արեգակը ծովի մէջ մայր է մտնում: Երբոր յիշեալ ապառաժը (հրուանդան) շրջեցին՝ տեսան մի սպառազինած թիակավար նաւակ, որի նեկայութիւնը եղբօրս տարակուսանքի մէջ ձգեց նա իսկոյն հրամայեց թիավարներուն դարձնել նաւակը ու շտապով յետ դառնալ դէպի ափ: Բայց սպառազինած նաւակը պնդեցաւ նոցաւ ետեւէն. եւ որովհետեւ նորա վրայի թիա-

վարները աւելի շատ էին՝ նա ճարպիկութեամբ այնպէս շարժմունքներ արաւ, որ կանգնեցաւ ափի եւ եղբօրս վարձած նաւակի մէջ եւ չէր թողնում նորան ցամաք հասնելու: Աղջիկները տեսնելով այդ վտանգը, նատած տեղերէն եղան, սկսեցին լալ ու գոռալ: Եղբայրո համոզում էր նոցահանգիստ մնալ, ապա թէ ոչ, ասում էր նա, նաւակը կարող է տապալի (շուռ գալ): բայց իղուր էր նորա ասածը, ոչոք չէր ուզում նորան ականջ դնել: Տեսնելով որ սպառազինած նաւակը մօտենում է, աղջիկները նաւակի մի կողմից դէպի միւսը վազեցին, եւ նաւակը կորցնելով իւր հաւասարակշռութիւնը, տապալեցաւ: Այդ միջոցին ցամաքէն նկատում էին այդ երկու նաւակների շարժմունքը. եւ որովհետեւ քանի մի ժամանակ է իւր ծովահէններէն երկիւղ կար՝ սպառազինած նաւակը մարդոց կասկածը շարժեց եւ ծովափէն մի նաւակ օգնութեան ողարկեցին եղբօրս եւ աղջիկներուն, որ իսկ եւ իսկ այն վայրկենին հասաւ, երբ պէտք էր ջուրը ընկած աղջիկներուն ազատել: Այդ միջոցին թշնամու նաւակը, ընդհանուր շփոթէն օգուտ քաղելով գնաց հեռացաւ: Ցամաքէն ու-

զարկուած մարդիկը սկսան ջուրը ընկած-ներին ազատելու, ու որովհետեւ նոքա լը-գիտիէն որքան էին թուով, այդ պատճառաւ չէին կարող իմանալ որքանը ներկայ են եւ որքանը պակաս: Մինչեւ որ երկու նաւակի մարդիկը խեղտուողներին կազատէ-ին, մինչեւ որ կըհամրէին աղջիկներին, թշնամի նաւակը ոչ միայն հեռացաւ, այլ միանգամայն անհետացաւ նոցա աչքէն: Այդ ժամանակ միայն նկատեցին որ աղջիկ-ների մէջից պակաս էին ծաթմա քոյրա եւ նորա ընկերուհին Զօրայիդէն, եւ նո-ցա տեղ մի անձանօթ մարդ գտան, ու երբոր սաստ ու սպառնալիքով ուկսեցին նորան հարցուփորձ անել թէ՛ դու ով ես եւ ի՞նչպէս յայտնուեցար այստեղ, նա խոս-տովանեցաւ ու ասաց, որ ինքը պատկա-նում է ծովահէնքի նաւին, որ խարիսխ ձգած կեցած է երկու մղոն հեռաւորու-թեամբ դէպի արեւելք. բայց ինքը, կամե-նալով ջրէն ազատելու երկու աղջիկներին՝ մնաց ծովի մէջ. իսկ նորա ընկերները, նե-ղի մնալով, շտապեցան ու փախան դէպի նաւը հետերը տանելով աղջիկներին, ու նո-րան մոռացմամբ թողին ջրի մէջ:

Մերունի հօրս աղետքը ո՞չ չափ ունէր,

ոչ սահման երբոր այս բօթը հասաւ նորա ականջին. Մուսթաֆան էլ յուսահատու-թեան մէջ ընկաւ. նորան ոչ միայն վշտաց-նում էր կաթողին քրոջ կորուստը, այլ եւ այն թէ՛ նա ինքն էր պատճառը խեղճ ծերունիի այդպիսի թշուառութրան:

Քրոջն հետ միասին գերի ընկած աղջիկը եղբօրս հարսնացուն էր. եղբայրն տակաւին յայտնած չէր հօրս այդ իւր ընտրութիւնը այն պատճառաւ, որ աղջկայ ծնողքը ան-նշան եւ չքաւոր մարդիկ էին: Հայրս խը-տապահանջ մարդ էր: Երբոր նորա բար-կութեան փոթորիկը մի փոքր անցաւ, կան-ցեց նա իւր մօտ Մուսթաֆային ու սաաց-«Քո թեթեւամտութիւնը ինձ զրկեց իմ ծերութեան սփոփանքէն», իմ աչքի լուսէն: Գնա, հեռացի՛ր ինձնից, եւ այնքան չերեւ-նաս ինձ, մինչեւ որ յետ չըբերես ծաթմա-յին: միայն այն ժամանակ քո գլուխը իմ անէծքէն կազատուի եւ միայն այն ժամա-նակ դու կըտեսնես իմ երեսը»:

Խեղճ եղբայրս ամենեւին չէր սպասում այսպիսի խօսքեր լսելու. նա առանց դորա էլ հաստատ միտքը զրել էր երթալու ու գերի տաղած աղջիկներին գտնելու եւ մի-այն սպասում էր հօրս օրհնութեանը. այժմ

Հայրս ինքը՝ դուրս ձգեց նորան իր տնէն։
Այս անարդար անէծքը եւ իւր սեպհական
թշուառութեան շատութիւնը, փոխանակ
յուսահատեցնելու, եւս առաւել կազդու-
րեց Մուսթաֆայի ոյժը։

Եղբայրս տուն եկաւ եւս սկսեց ճանա-
պարհի պատրամտութիւնները անել՝ այդ
միջոցին հայրս իւր բարկութենէն փոքր ինչ
հանդարտած, տուեց նորան ոսկիով լիքը
քսակ, որպէս զի նա ճանապարհին փողի
նեղութիւն չըքաշէ։ Մուստաֆան աշքը ար-
տասունք գնաց մնաս-բարեւարաւ Զօրաի-
դէի ծնողներին ու ճանապարհ ընկաւ դէ-
պի նասրա։

Նաւ չըգտնելով, Մուսթաֆան հարկա-
գրուած էր չորային ճանալարհով երթալ
Էասրա-բայց այդ էլ բաւական չէր. նա
որքան կարող էր՝ պէտք է շտապէր, որ
ծալիահէններէն առաջ հասնէր այնտեղ։ Այդ
վախճանին գնեց մի պատուական ձի. հե-
տը ոչինչ բեռ չառաւ, որպէս զի թեթեւ
թեթեւ գնալով՝ կարողանայ վեց օրուայ մէջ
հասնել տօնավաճառին։ Բայց, տարաբաղ-
գաբար, ճանապարհորդութեան չորրորդ օ-
րը, երեկոյեան դէմ, նորա վրայ երեք սպա-
ռազինած ձիաւորներ յարձակուեցան, եւ

յարձակուողները, ինչպէս երեւում էր գի-
տաւորութիւն ունէին միայն նորա ձին
խլելու եւ ոչ թէ սպանելու իրան։ Մուս-
թաֆան յօժարակամ անձնատուր եղաւ նո-
ցաւ։ Թշնամիները ձիերէն իջան, Մուսթա-
ֆայի ոտքերը ձիու տակէն միմեանց կա-
պեցին. յետոյ, երկու հօգի այս ու այն
կոզմից գնացին, երրորդը նորա ձիու երա-
սանակը բռնեց, առանց մէկ խօսք սպելու,
սանձարձակ առաջ վագեցին։

Անհնար է Մուսթաֆայի հոգեկան դրու-
թիւնը նկարագրելու. ասես թէ հօրս ա-
նէծքը ծանրացել էր նորա գլխի վրայ.
Ինչպէս կարող է նա իւր քրոջ եւ Զօրաի-
դէի ազատութեան վրայ մտածել, երբար
ինքը ողորմելին գերութեան մէջ էր։ Մուս-
թաֆան ու երեք սրիկաները ամբողջ մի
ժամ լուռ ու մունջ առաջ գնացին. վեր-
ջապէս ուղիղ ճանապարհէն շեղուեցան ու
մոտան մի ձոր, որ սաղարթախիտ ծառերով
էր ծածկած։ Սիզաւէտ գետինը ու նորա
միջից անցնող առուակը ասես թէ հանգս-
տութեան էին հրաւիրում ճանապարհոր-
դին։ Զորի մէջ ձգուած էին քսանի չափ
վրաններ, ու նոցա ցիցերին կապած էին
ուղտեր ու գեղեցիկ ձիեր. վրանների մէկի

մէջէն լսվում էր սանդուրի անուշ նուագ-
ներ ու երկու հոգու ձայն։ Եղբօրս մըտ-
քից անցաւ, որ իջեւանելու համար այսպի-
սի գեղազուարճ վայր ընտրողները՝ ան-
շուշտ, չարահոգի մարդիկ չքաղիտի լինէին.
այդ պատճառաւ նա աներկիւղ գնաց իւր
ուղեկիցների ետեւէն, որոնք տեղ համնելով
քակեցին նորա ոտքի կապերը եւ հրամայե-
ցին ձիէն վայր իջնել։ Մուսթաֆային տա-
րան մի հոյակապ վրանի տակ որ ձգած էր
միւս վրանների թափ մէջտեղը։ Բայց ա-
ւազ, այն դիպաթէ բարձերը, վափուկ գոր-
գերը, ոսկէզօծ ծխամորչները, որոնք ուրիշ
պարագայի մէջ կարող էին տիրոջ հարմա-
տութեան նշանը լինել, այստեղ նոքա ցոյց
էին տալիս, ներկայ գտնուող մարդոց գող
ու աւազակ լինելը։

Բարձի վրայ նստած էր մի կարճահասակ
ծերուկ, նորա երեսը սարսափելի տգեղ,
շատ սեւ ու ցոլուն էր. աչքերէն ու քերնի
գծագրութենէն երեւում էր նորա չարա-
պատութիւնը ու նենդութիւնը, եւ հասա-
րակօրէն ասելով՝ նորա բոլոր արտաքինը
զգուելի էր։ Թէ եւ ծերունին աշխատում
էր ինքն իրան ծանրագէմ ցոյց տալ, բայց
Մուսթաֆան նկատեց, որ տարիքը ամենե-

ին ակնածութիւն չէին ազգում նորան
շրջապատող մարդոց. եւ երբոր նորա ճա-
նապարհորդակիցը խօսեցաւ, եղբայրս տե-
սաւ որ իւր ենթադրութիւնները սխալ չէ-
ին։ «Ուր է Հզօրը», հարցուց նա ծերու-
կին։ — Որսի գնաց, պատասխանեց ծերուկը,
եւ ինձ պատուիրեց, որ իւր բացակայու-
թեան ժամանակ նորա պաշտօնը կատա-
րեմ։ — «Նատ անխոչեմ բան է արել Հզօրը,
ասաց աւազակներէն մինը. ապա որի՞ հրա-
մանով պիտի ապրի կամ պիտի մեռնի գա,
աւելցուց, ցոյց տալով իմ վրայ»։ — Այդ
Հզօրի գործն է, պատասխանեց մի ուրիշ
աւազակ։

Ծերունին աշխատում էր ինքն իրան
պատկառելի կերպարանք տալ, եւ ո՛րքան
զօրութիւնը հասաւ՝ մէջքը շտկեց, ու
ձեռքը երկայնցնելով, աշխատում էր իւր
ախոյանի ականջէն բռնելու. բայց չրկարո-
ղացաւ նպատակին հասնել. բարկացաւ ու
սկսաւ նախատական խօսքեր ասել. ախոյա-
նըն էլ յիշոցներով պատասխանեց նորան,
ու այդ կերպով վրանի մէջ սարսափելի
շփոթ ու աղմուկ վերացաւ։ Յանկարծ, վրա-
նի դուռը բացուեցաւ ու ներս մտաւ մի
բարձրահասակ վայելչակտղմ, մատաղահաս

ու գեղեցկադէմ մարդ. նորա հալաւը ու զրահները անպահոյն էին. փողփողուն թքէն ու ականակուռ դաշոյնէն զատ նորա վրայ ուրիշ զարդարանք չըկար. նորա հայեցքը ծանր էր եւ բոլոր նորա արտաքի. նը ազդում էր երկիւղ եւ պատկառանք. ու դառնալով ահարեկած մարդոց, ասաց՝ «Ո՞վ համարձակեցաւ իմ վրանի մէջ աղ, մուկ բարձրացնել»: Երկար ժամանակ տմենուրեք թագաւորեց խորին լռութիւն, եւ վերջապէս եղբօրս ուզեկիցներէն մինը պատմեց բոլոր անցքը: Հզօրի երեաը շառագնեցաւ բարկութենից: «Հասան, այդ լ՛նչ լռութիւն է քո արածը. Ե՞րբ ես քեզ իմ փոխանորդը դրի», ասաց նա բարձր ձայ նով փոքրահասակ ծերուկին, որ երկիւղից այնպէս կուճ էր եկել, որ հազիւ տեսնը վում էր, եւ աշխատում էր աննշմարելի կերպով փախչել վրանից: Հզօրը աքացի խրփեց նորան ու դուրս շպռտեց:

Յետոյ երեք հոգիներն, որ ձերբակալել էին Սուտթափային, ներկայացրին նորան Հզօրին, որ արդէն նստել էր բարձի վրայ. «Ահա բերինք նորան, որին դու հրամայել էիր բոներ, ասացին նոքա: Հզօրը նայեցաւ եղբօրս վրայ ու ասաց. «Սուլէյի՛ փաշա, քո

խզմանքը պիտի ասէ քեզ, թէ ինչո՞ւ դու այս վայրկենիս կանգնած ես Օրբասանի առջեւ»: Այս որ լսեց, եղբայրս իսկոյն ընկաւ Հզօրի ոտերին ու աղաղակեց՝ «Ո՞վ, տէր իմ, դու սխալվումես. ես մի խեղճ թշուառական մարդ եմ եւ ո՞չ Սուլէյի փաշան, որին դու պտրում ես»: Վրանի մէջ գտնուողները ամենքը զարմացան. բայց մեծաւորը ասաց. «Աւելորդ է քո այդ կեղծաւորութիւնը. մի՞թէ ես չեմ կարող քո առջեւ այնպիսի մարդիկ կանգնեցնել, որոնք որ քեզ լաւ մանաչում են», ասաց ու հրամայեց Զուլէմային հրաւիրելու: Ներս մտաւ մի պառաւ կնիկ: Հարցուցին նորան. «Ճանաչո՞ւմ ես արդեօք Սուլէյի փաշային»: —Ի հարկէ ճանաչում եմ, պատասխանեց պառաւը, եւ երկնքով երդվում եմ: որ այս մարդը ինքը Սուլէյի փաշան է: —«Տեսա՞ր, գարշելի դու, որ սուտդ բացուեցաւ, աղաղակեց Հզօրը բարկութեամբ: Դու չարժես իմ դաշոյնով մեռնելու. քո արիւնը չըպիտի պղծէ նորան. բայց վաղուան օրը ես կըհրամայեմ կապել քեզ ձիուս պոչէն, ու նա անտառների մէջն քաշաքաշ կըտանէ մինչեւ Սուլէյի սարերը»: Այս լսելով, եղբայրս բոլորովին վհատեցաւ ու աղիողորմ ձայնով ասաց. «Վայ

ինձ, հօրս անէծքը հասցուց ինձ այս խայտառակ եւ բազմաշարչար մահուան. դո՛ւք եւս ինձ հետ պիտի կորչիք, ո՞վ Զօրայիդա ու Ֆաթմա: »—Այդ խորամանկութիւնդ քեզ ոչինչ չի օգնիլ, ասաց աւազակներէն մինը, նորա ձեռքերը մէջքին պրկելով, շուտ դուրս կորիր վրանէն. չես՝ տեսնում Հզօրը բարկութենէն պեխերն է կրծում, ու ձեռքը դառնին է մօտեցնում. եթէ էլի մի խօսք հանես բերանէդ, իմացի՞ր ո՞ր այստեղ եւ եթ կըզրկուիս կեանքէդ:

Այն միջոցին, երբ աւազակները պատրաստվում էին վրանէն դուրս տանելու եղբօրս, երեք ուրիշ աւազակներ ներս մոտան եւ մի կալանաւոր բերին ու կանգնեցրին մեծաւորի առջեւ, ասելով. «Տէ՛ր, ահա կատարեցինք քո հրամանը. ահա բռնեցինք ու բերինք Սուլէի փաշային»: Եղբայրս նայեցաւ այդ կալանաւորի վրայ, եւ զարմացաւ թէ՝ մինչեւ ո՞ր աստիճան նա նման էր իրան. նոցա մէջ բոլոր տարբերութիւնը այն էր, որ նորեկի երեսը աւելի թուլի եւ նորա մազերը աւելի սեւ էին, քան թէ իւրը: Հզօրն էլ չափազանց զարմացած էր այդ նմանութեամբը. նա փոխ ու փոխ նայում էր մերթ սորա եւ մերթ նորա վրայ, եւ

վերջապէս հարցուց՝ «Ձեզմէն ո՞վ է Սուլէի փաշան»: —Ես եմ Սուլէի փաշան, ասաց կալանաւորը հպարտութեամբ: Հզօրը նորա վրայ ձգեց իւր խիստ եւ ահարկու աչքերը եւ երկար միջոց լուռ ու մունջ նայեցաւ. եւ յետոյ նշանացի արաւ, որ ծառաները դուրս տանէն նորան վրանէն: Յետոյ մօտեցաւ եղբօրս, դաշունովը կտրեց նորա ձեռքի կապերը ու մատով բարձը ցուցնելով, հրամայեց նատել վրան: «Նատ ափսոսում եմ», որ քեզ եւ այդ հրէշին իրար հետ շփոթել են, ասաց Մուսթաֆային. բայց դու այդ դէպքը պիտի վերաբերես նախախնամութեան մի առանձին որոշմունքին, որ դու իսկ եւ իսկ այն բոպէին պիտի անցնէիր, երբ իմ մարդիկը սպասում էին չարագործին. ձեր երկուսի երեսների նմանութիւնը մոլորեցուց նոցա եւ այդ կերպով դու նոցա ձեռքը ընկար: »Մուսթաֆան Հզօրէն միայն մի շնորհք էր խնդրում, որ է՛տնյապաղ ձանտպարհ ընկնել, վասն զիամենափոքրիկ յապաղումը կարող է վնասակար լինել նորան: Հզօրը հարցուց պատճառը նորա այդպիսի արտօրանքին ու եղբայրս պատմեց նորան իւր գլխի եկած ամեն չարիքը: Հզօրը յորդորեց Մուսթաֆային

այդ գիշեր իւր վրանի մէջ անցնել, խոս-
տանալով՝ որ հետեւեալ օրը կըցուցնէ նո-
րան այնպիսի ճանապարհ դէպի հասրա, որ
կիսով չափ կարճ կըլինի նորա ընտրածէն:
Եղբայրս յօժարեցաւ մնալու, ամենապա-
տռական հիւրասիրութիւն գտաւ եւ մինչեւ
միւս, առաւոտ հանգիստ քուն եղաւ աւա-
զակապետի վրանի մէջ:

Երբոր միւս առաւոտ նա զարթեցաւ, տե-
սաւ որ վրանի մէջ ոչոք չը կայ, եւ դրան
մօտ լովում էին մարդու ձայներ. նորան այն-
պէս թուեցաւ, որ Հզօրը եւ կարճուկ ծե-
րունին իրար հետ խօսում էին: Մուսթա-
ֆան սկսաւ տկանջ դնելու, եւ սարսափան-
քով իմացաւ, որ ծերուկը վճռողաբար պա-
հանջում էր որ եկաւորը, այսինքն Մուսթա-
ֆան, սպանուի, որպէս զի չը կարողանայ
նոցա դաւաճանել ու մատնել:

Մուսթաֆան սկսաւ մոտածել, թէ ի՞նչ էր
պատճառը ծերուկի այսպիսի անհիմն վրէ-
ժին, եւ ուրիշ բան չըգտաւ, բայց միայն
այն, որ ինքը երեկուայ օրը յակամայս ա-
կանատես էր եղել այն արհամարհանքին, որ
մարդիկ ցոյց տուին ծերուկին: Մի փոքր
ժամանակ մոտածելուց յետ, Հզօրը ասաց՝
«Ոչ, ես չեմ դժբիլ հիւրընկալութեան սուրբ

օրէնքը. նմանապէս ես կարծում եմ, որ
նա չի դաւաճանիլ մեզ»: Այս ժամանակ դոցի
Այս եր ասաց, քաշեց վրանի վարժգոյրը
որ դրան տեղ էր ծառայում ու ներս մը-
տաւ: «Խաղաղութիւն քեզ, Մուսթաֆա, ա-
սաց նա. արի՛ խմենք միասին մեր առաւօ-
տուայ թագը եւ ճանապարհ ընկի՛ր:» Ասաց
ու տուեց եղբօրս մի բաժակ օշարակը ու
յետոյ գնացին թամրեցին ձիերը: Նուտով
դուրս ելան նոքա բանակին ու միասին գնա-
ցին մի լայն ճանապարհի վրայով, որ ան-
տառի մէջէն էր անցնում: Հզօրը պատմեց
եղբօրս, որ Սուլէի փաշան խօսք էր տուել
նոցա անհանգիստ չանել եւ թոյլ տալ նոցա
կենալ իւր իշխանութեան տակ գտնուած
հողերի վրայ. բայց, մի քանի շաբաթ առաջ
գաւաճանութեամբ բռնել է նորա ստորա-
դրեալ ամենաքաջ մարդոցը, նախ՝ սաստիկ
տանջել է, եւ ապա կախաղան է հանել.
ի տրիսուր սոյդ գաւաճանութեանը Սուլէի
փաշան այժմ ձերբակալ է եղած եւ այսօր
եւ եթ պիտի ստանայ իւր արժանի պատու-
համը Մուսթաֆան չը համարձակեցաւ նորան
ընդդիմախօսելու, նա այնով էլ շատ գոհ
էր, որ գէթ կարողացել է իւր գլուխը ողջ
եւ առողջ պահել աւազակների ձեռքէն:

Երբոր անտառէն դուրս եկան, Հզօրը կանգ նեցուց ձին, խօսքով պատմեց նորան, թէ ի՞նչ ու ինչ ճանապարհով պիտի երթայ, որ տեղ հասնի, յետոյ վերջին անգամ սեղմեց նորա ձեռքը եւ ասաց՝ «Մուսթաֆա՛, դու մէկ տարօրինակ կերպով Օրբասան աւազակապետի հիւրը եղար. ես քեզնից չեմ պահանջում, որ դու ինձ չըդաւաճանես ու տեսածդ եւ լսածդ մարդու չըպատմես. այդ անելը կամ չանելը քո ազատ կամբին եմ թողնում։ Բայց որովհետեւ դու անմեղ տեղը կեանքդ մահու վտանգի մէջ ձգեցիր եւ մահու արհաւերքը տեսար, ես պարտ աւոր եմ քեզ վարձատրելու։ Առ ինձմէն ընծայ այս դաշոյնը. եթէ երբ եւ իցէ իմ օգնութեանը կարօտ լինիս, հնար գտի՛ր իմ ձեռքը հասցնել այդ, ես անյապաղ կրգամ քո առջեւ։ Նմանապէս առ քեզ այս քսակը, որ գուցէ մի ժամանակ քեզ պէտք գայ։ Եղբայրս շատ շնորհակալ եղաւ դաշունի համար. բայց փողով քսակը առնել չուզեց։ Օրբասանը երկրորդ անգամ սեղմեց նորա ձեռքը քսակը գետնին ձգեց ու սանձարձակ ձիով չափ տուեց, հեռացաւ նորանից դէպի անտառ։ Մուսթաֆան տեսնելով որ նորա ետեւից հասնել չէ կարող, իջաւ ձիուց ու

գետնէն քսակը բարձրացնելիս, զարմացաւ նորա ծանրութեանը. քսակը բերնէ—բերան լցուած էր ոսկէ դաշեկաններով։ Եղբայրս փառք տուեց Աստուծոյ իւր փրկութեան համար, եւ խնդրեց որ նորա շնորհը միշտ անպակաս լինի մեծահոգի աւազակի վրայէն, եւ ուրախ սրտով շարունակեց իւր ճանապարհը դէպի Բասրա։

Լէցահը դակրեցաւ պատմելէն ու աչքը դարձուց ծերունի Ահմէդին՝ իբր թէ հարցնել էր ուզում նորան «Հը», ինչպէս ես, այժմ ինչ կարծիքի ես Օրբասանի մասին։ Ահմէդը հասկացաւ նորա անխօս բարբառը եւ ասաց «Եթէ այդպէս է, ուրեմն ես հարկաւ պիտի փոխեմ իմ կարծիքը Օրբասանի մասին. արդարեւ, նա քո եղօր հետ շատ մեծանձնութեամբ վարուել է։»

— Ոչ միայն այդքան, ասաց Մուլէն, այլ եւ նա վարուել է ինչպէս որ վայել է բարի ու արդարամիտ մուսուլմանին։ Բայց, խընդրում եմ, շարունակէ՛ պատմութիւնդ. մենք ամենքս կը բաղձանք իմանալ՝ ի՞նչ եղաւ վերջը թէ՛ քո եղբօր Մուսթաֆային եւ թէ՛ կալանաւորած աղջիկներին՝ Ֆաթմային ու Զօրայիդին։

«Եթէ իմ պատմութիւնը ձեզ չէ ձանձ-

րացնում, ես սրտի մոռք պատրաստ եմ
շարունակելու, ասաց Ացահը, եւ իրաւ որ
եղբօրս գլխի եկած բաները շատ հետաքրքր
րիչ են»:

Իւր ճանապարհորդութեան եօթներորդ
օրը, կէսօրուայ դէմ, Մուսթաֆան հասաւ
Բասրա քաղաք, ու երբոր մտաւ քարվան-
սարայ սկսաւ հարց ու փորձ անելութէ երբ
պիտի սկսի սորուկների վաճառը, որ տարին
մի անգամ կատարվում է Բասրայի մէջ, ու
սարսափանքով իմացաւ, որ արդէն երկու
օր է որ վերջացել է: Նորա հետ խօսողները
շատ ափսոսացին նորա վրայ, ասելով թէ
նա շատ մեծ կորուստ ունի, վասն զի տո-
նալիճառի վերջին օրը բերել էին երկու
ստրուկ աղջիկներ այնպիսի հիանալի գե-
ղեցկութեան, որ նայողները չէին կարողա-
նում աչքերը վրաներից պուկ տալ. շատ
վէճից ու մինչեւ անգամ կռուից յետ՝ նո-
քա թանգ ծախուեցան. վաճառականների
պահանջած գինը այնքան բարձր էր որ մի-
այն նոցա այժմուայ տէրը կարողացաւ ձեռք
բերելու: Մուսթաֆան հարց ու փորձ անելով
իմացաւ, որ նոցա գնողը կենումէ Բասրա-
յին քառասուն ժամուայ բացակայութեամբ
տեղ, անունը Թիուլի—Խօզա է, անուանի-

ու ծեր Իարդ է, ու երբեմն սուլթանի քա-
փութան վիաշան է եղել. իսկ այժմ՝ պաշտօ-
նէ հեռացած եւ ամբաւ հարստութեան տէր
դարձած՝ անգորը կեանք է վարում: իւր
զաստակերտի մէջ:

Առաջի մէկութ Մուսթաֆան ուղեցել
է վազէվազ հասնել Թիուլի—Խօզայի ետեւէն
ու յետ խլել աղջիկներուն. բայց յետոյ,
միտքը վրան ժողովելով, տեսել է որ իւր
ձեռնարկութիւնը ցնորամիտ բան է. Բնչպէս
պիտի կարողանար մի հատիկ մարդը յար-
ձակուել բազմաթիւ սպառազինած պահա-
պանների վրայ, յաղթել նոցա ու աղջիկ-
ներին նոցա ձեռքէն խլել: Այս դիտաւո-
րութիւնը թողեց եւ ուրիշը մտածեց: Որով-
հետեւ նորա երեսի տիպարքը շատ նման էր
Սուլէի փաշային (որի համար մազ—մնաց
որ կեանքէն զրկուէր) Մուսթաֆան դիտա-
ւորութիւն ունեցաւ այդ մեծատունի անու-
նով մտնել Թիուլի—Խօզայի տունը, եւ
այդպիսով աղատել թշուառական աղջիկ-
ներին նոցա ստրկութենէն: Օբասանի բաշ-
խած փողով վարձեց նա ծառաներ, ձիեր,
իւր եւ ծառաների համար գնեց թանգա-
գին հալաւներ, եւ այդպէս պատրաստուած
ճանապարհ ընկաւ դէպի Թիուլի—Խօզայի

ամրոցը: Հինգ օրէն հասաւ նա ամրոցին,
որ շրջապատած էր այնպիսի բարձր պարիսպ-
ներով, որ նոցա ետեւէն ներսի շենքերը
չէին երեւում: Մուսթաֆան սեւցուց մա-
զերը, ու երեսը աւելի թուխ դարձնելու
համար մէկ խոտի հիւթ քսեց, եւ այդ կեր-
պով բոլորովին նմանեցաւ Սուլէի փաշին:
Այս այսպէս կատարելէն յետոյ ծառաներէն
մինին ուղարկեց Թիուլի—Խօզայի ամրոցը,
իմացնելով որ՝ Սուլէի փաշան ցանկութիւն
ունի նորա տան մէջ մի օր անցնելու: Ուղար-
կած ծառան շուտ վերադարձաւ, եւ նորա
հետ կային թանկագին հայաւներով ստրուկ-
ներ, որոնք բռնեցին եղբօրս ձիու սանձը
եւ այդպէս առօք—փառօք ներս մոցրին
ամրոցի բակը. այնտեղ ձիուց վայր իջեցրին,
իսկ ուրիշ չորս ծառաներ եկան, նորա եր-
կու անութը մտած՝ օգնեցին սանդուխքն 'ի
վերքարձրանալու, եւ տարան Թիուլի—Խօզայի
բնակարանը:

Տանուտէրը մի զուարթաբարոյ մարդ էր.
նա մեծ շքավ ընդունեց եղբօրս, եւ ինչ թան-
կագին ու համադամ խորտիկ որ ունէր բո-
լորը դրեց նորա առջեւը: Ճաշէն յետ Մուս-
թաֆան հեռուէն պտուտ պտուտ բերելով
խօսքը դարձուց ստրկուհիների վրայ: Թիու-

լին չափազանց գովեց իւր նոր գնած աղջրկ-
ների գեղեցկութիւնը, բայց շատ անգոհ էր
նոցա անսփոփ տրտմութենէն: Եղբայրս շատ
բաւական մնաց նորա մօտ գտած հիւրասի-
րութենէն եւ ուրախ սրտով ու մեծ մեծ
յոյսերով անկողին մտաւ:

Հազիւ թէ մէկ ժամ քնած էր նա, որ յան-
կարծ քնէն վեր թռաւ. զարթելու պատ-
ճառն էր լապտերի լոյսը, որ ուղիղ նորա
աչքն էր մտնում: Թէ եւ անկողնի մէջ նըս-
տած, բայց քունը տակաւին աչքերէն չէր
հեռացել, եւ նա կարծում էր թէ տեսածը
երազի մէջ է: Սեւ ու կարճահասակ ծերուկը,
որին տեսել էր Օբասանի բանակի մէջ, այժմ
լապտերը ձեռքին կանգնած էր նորա առ-
ջեւ ու գարշելի ժպիտով նայում էր նորա
վրայ: Առաջի նուագ Մուսթաֆան կարծեց
թէ այդ երազ է, ու կամենալով այդ ծանր
քնէն սթափելու՝ աչքերն էր ճմուռմ, քիթն
էր քաշքառում. բայց իզու՛ր, ծերուկը ան-
շարժ կանգնած էր նորա առջեւ. Մուսթա-
ֆան համոզուեցաւ, որ տեսածը արդէն ե-
րազ չէր, ու խելքը վրան ժողովելով, բար-
կութեամբ հարցուց նորան: «Ինչո՞ւ ես մօ-
տեցել անկողնիս, ի՞նչ ես ուղում ինձանից»:
—Մի՛ այդպէս տաքանար, պարոն, պատաս-

խանեց կարճահասակը. ես շատ լաւ գիտեմ
քո միտքը, թէ ինչո՞ւ դու այստեղ եկել ես:
Եթէ քո երեսի տիպարքն եւս մոքէս ելած
լինէր, ես դարձեալ չէի խաբուիլ. վասն զի
ի՞նչպէս դու կարող ես Սուլէի փաշա լինիլ.
երբոր ես ինքս, իմ սեպհական ձեռքովի
երեկուայ օրը օգնեցի նորան կախաղանի
վրայ քաշելու: Այժմ ես քեզ մի չարցմոք
ունիմ անելու:

Մուսթափան տեսնելով որ իւր գաղտնիքը
յայտնուել է, սաստիկ բարկանալով կանչեց
կարճահասակի վրայ. «Դու ի՞նչ կերպով այս-
տեղ յայտնուեցար»:—Այժմ ես քեզ կը պատ-
մեմ այդ բանը, պատասխանեց կարճահա-
սակը. ես այլ եւս չըկարողացայ Հզօրի մօտ
գիմանալու, ձգեցի նորան ու փախայ. բայց
իմ եւ նորա մէջ եղած տարածայնութեան
պատճառը դու էիր, ուստի դու պարտաւոր
ես քրոջդ ինձ կնութեան տալու. եւ դորա
փոխարէն ես էլ կը յօժարեմ ձեռնարկու-
թեանդ մէջ քեզ օգնելու. իսկ եթէ չես
տալ աչա քեզ առաջուանէ եմ ասում,
որ իսկոյն կերթամ եւ ամեն բան տեղն իտեղ
կը պատճեմ տիրոջը.

Մուսթափան բոլորովին կատաղեցաւ երկիւ-
ղէն եւ բարկութենէն. եւ ի՞նչպէս չըկատա-

մայի բներ խորհրդական ու առ ու
զէր խեղճ երփտասարդը, որ այսքան զըժ-
ուարութիւններ քաշելէն յետ, երբ արգէն
զ գրեթէ հասել էր իւր նպատակին, եւ յան-
կարծ այս թշուառականը նորա ամեն աշ-
խատանքը ուզում էր իդերեւ հանել. ի՞նչ
անէր նա. նորան փրկութեան մի ճանապարհ
էր մնում, որ է՛ այդ անպիտանի վորը
ցցել դաշոյնը եւ սպանել. եւ իսկոյն թռաւ
տեղէն ու յարձակեցաւ նորա վրայ. բայց
կարճահասակը շուտ հասկացաւ նորա գի-
տաւորութիւնը, ձեռքէն ցած ձգեց լապ-
տերը ու մթութեան մէջ սկսու կանչելու
թէ՝ «ապանում են, օգնութեան համէք»:
Այլ եւս երկար մտածելու ժամանակ չը-
կար. աղջիկների ազատութիւնը առժամա-
նակ մի պէտք էր յետաձել եւ իւր գլխի
ճարը տեսնել: Մուսթափան մօտեցաւ պա-
տուհանին տեսնէ թէ՝ հնար չըկայ արդեօք
դուրս թռչելու. Պատուհանը բաւականին
բարձր էր, իսկ նորանից հեռու կար պա-
րիսպը, որի վրայից նմանապէս պէտք էր
թռչել: Այսպէս պատուհանի մօտ կանգնած,
մտածում էր նա իւր անելիքը. յանկարծ
լսուեցաւ շատ մարդոց խառնաշփոթ ձայն,
որ մօտենում էին նորա սենեակին. արդէն
ներս էին ուզում մննել... Մուսթափան

այլ եւս չը մտածեց. հապճեպով ձգեց վրան
հալաւը, դաշոյնը գօտիին խրեց ու պա-
տուհանէն դուրս թուաւ. թէ եւ պինդ խփուե-
ցաւ գետնին, բայց բաղդէն ոչ մի տեղը չը
ցաւցուց: Եւ առանց մի վայրկեան կորցնելու,
մագլցելով պարիսպն իվեր ելաւ, իջաւ նորա
միւս կողմը ու գտաւ իւր ազատութիւնը.
Նորա ետեւէն վազողնէրը բերաննրը բաց
մնացին:

Նորա իջած տեղին մօտիկ մի փոքրիկ ան-
տառ կար. Մուսթաֆան վաղէվազ գնաց
այնտեղ, յոդնութենէն թալկացած ընկաւ
գետնի վրայ, ու պառկած միտք էր անում,
թէ ի՞նչ անէ այսուհետեւ. Թէ եւ նորա
ձիանքը ու ծառաները ամրոցի մէջ էին մը-
նացել, բայց փողը, գօտիի մէջ դրած, մօտն
էր: Նորա հնարագիւտ գլուխը փրկութեան
մէկ ուրիշ միջոց եւս գտաւ: Անտառի մէ-
ջէն անցաւ ու հասաւ մի գեղ. այնտեղ
գնեց ձի, ու վրան հեծած գնաց մօտաւոր
քաղաքը եւ այնտեղ սկսեց պտրել մի հմուտ
բժիշկ: Նորան ցոյց տուին մի ծերունի, որ
մի քանի ոսկի գահեկան ստանալով եղբօրէս,
առեց նորան երկու տեսակ ճար, որոնցից
մինը մարդուս վրայ մահահանգոյն քուն էր
բերում, իսկ միւսը քնից արթնացնում էր:

Յետոյ գնեց նա երկայն սուտ մօրուք, սեւ
լոգիկ, շատ տուփեր ու շիշեր, ինչպէս որ
ունենում ենթափառիկ բժիշկները. եւ այդ
ամենը մի էշի վրայ բարձած, ուղիղ դէպի
Թիուլի—Խօզայի ամրոցը գնաց: Եղբայրս վրա-
տահ էր, որ նորան ոչոք չինանաչիլ. երկայն
մօրուքը այն աստիճան կերպարանափոխել
էր նորան, որ մինչեւ անգամ ինքն իրան
չընանաչեց հայլիկ մէջ: Երբոր հասաւ ամրոցը
մարդ ուղարկեց Թիուլի—Խօզային իմացնելու
թէ՝ նորա դրան մօտ կանգնած է երեւելի
Խաքամանքաբուդիբաբա բժիշկը.

Ինչպէս որ եղբայրս կարծել էր՝ այնպէս
էլ եղաւ: Նորա հնարած փառաւոր անունը
այնպէս հիացուց ծեր տխմարին, որ նախակոյն
հրամայեց ծառաներին, որ երթան ու բժշկին
ճաշի հրաւիրեն: Խաքամանքաբուդիբաբան
ներկայացաւ տանտիրոջը, եւ մի ժամ չան-
ցած, արդէն հրամայեց, որ այս իմաստուն
մարդը աչքէ անցնէ նորա բոլոր հարսերուն:
Մուսթաֆայի սիրտը ուղում էր դուրս թըռ-
չել ուրախութենից, որ նա շուտով պիտի
տեսնէ իւր տարփալի Զօրայիդին ու սիրա-
կան քրոջը, եւ հազիւ կարողանում էր իւր
ուրախութիւնը ծածկել, երբ Թիուլի—Խօզան
տանում էր նորան դէպի իւր կանանցը. նա

ու եղբայրս մտան մի մեծ, զքեղազարդ, բայց
մարդոցմէ գատարկ սենեակ: «Խամբաթա ես,
ինչ ես—անունդ միտս պահել չեմ կարող
—ասաց Թիուլի—Խօզան, է՛հ, ինչ էլ լինի,
սիրելի բժիշկ, խնդրեմ, մօտեցի՞ր այս պատի
ծակին. իմ ստրկուհիներէս մին մինի եռեւէ
այս ծակէն դուքս կըմոցնեն իրանց ձեռները,
եւ զունոցա բազկերակը շօշափելով՝ կարող ես
իմանալ ով է նոցանից առողջը էւ ով է հի-
ւանդը: Թէ եւ Մուսթաֆան շատ յորդորեց
նորան, որ միայն ձեռքը զննելը բաւական չէ,
այլ պէտք է նա եւ լեզուները տեսնել եւ զըն
նել. բայց, իզուր, Թիուլի—Խօզան սյդ բա-
նին ամենեւին ըլյօժաքարեցաւ: Գրպանից հա-
նեց երկայն ցուցակ ու բարձր ձայնով սկսեց
իւր հարճերի անունները ասել: Ամեն մինի
անունը յիշելիս, պատի ծակից ներս էր մըտ-
նումի ձեռքը, ու Մուսթաֆան շօշափումէր
նորա բազկերակը: Ետեւ ետեւէ վեց հարճերի
ձեռքը զննեց ու ասաց որ՝ սոքա ամենքը ա-
ռողջ են՝ եօթներորդը յիշուեցաւ Ֆաթմա
անունը, եւ իսկոյն ծակէն դուրս եկաւ մի
սիրուն, սպիտակ ձեռք: Ուրախութենից
սիրութախելով, Մուսթաֆան բռնեց ձեռ-
քը, ու երեսի տիպարքը խոժոռացնելով,
յայտնեց որ՝ սյս կնոջ բազկերակը ցոյց է

տալիս վտանգաւոր հիւանդութիւն: Թիուլին
սաստիկ տրտմեցաւ, ու հրամայեց Խաքաման-
քաբուդիբարային, որ շուտով պատրաստէ
իւր ամենահզօր ճարը: Սուտ բժիշկը դուրս
եկաւ սենեակէն եւ գրեց այս նամակը: «Ես
կազատեմ քեզ գերութենէն, եթէ դու յօ-
ժարիս խմել այնպիսի ճար, որ քեզ երկու
օր մեռելի պէս կըքնացնէ, բայց ես ունիմ
մի ուրիշ ճար էլ, որ սյդ քնէն քեզ կարթ-
նացնէ: Եթէ այս պայմանիս յօժար ես, ա-
սա որ՝ տուած ճարս քեզ օգուտ ըըտուեց.
այն ժամանակ ես կիմանամ որ գու ազա-
տուել կուզես, եւ կուտամ քեզ միւս ճարը:
Երբոր յետ եկաւ այն սենեակը, որ սպա-
սում էր նորան Թիուլի—Խօզան, հետը քե-
րաւ մի անլնաս հեղուկ: Երկրորդ անգամ
շօշափեց հիւանդի բազկերակը եւ աննշմա-
րելի կերպով հալաւի թեզանիքի տակ ներս
սպրդեցուց նամակը, եւ տուեց յիշեալ հե-
ղուկը: Թիուլին սաստիկ տրտմեցաւ Ֆաթմայի
ակարութեան համար, եւ մնացած հարճերի
զննութիւնը միւս օրուան թողեց: Երբոր
Մուսթաֆայի հետ դուրս գնաց, տիսուր ձայ-
նով ասաց նորան: «Խագիբարա, ճշմարիտը
ասաւ ինձ՝ ի՞նչ կարծիք ունիս Ֆաթմային հի-
ւանդութեան մասին»: Խաքամանքարուդի-

բարան, ծանր յոգոյ հանելով, ասաց՝ Տէր
իմ, մեծ Մարդարէն թող լիսիթարէ քո հո-
գին, տիկինը շատ վտանգաւոր տաքութիւն
ունի, որն կարող է մինչեւ անգամ նորա
մահուան պատճառը լինել»: Թիուլին բար-
կութենից բորբոքած, կանչեց եղբօրս վրայ:
«Այդ ի՞նչ էր քո առաջը, շո՞ւն դու, եւ ո՛չ
բժիշկ պիտի մեռնի՞...իմ ֆաթման ինչպէս
մէկ հասարակ կո՞վ պիտի մեռնի, նաև որի
համար ես հաղար ոսկի զահեկան եմ վճա-
րել—հը... բայց նայէ՛, եթէ դու Ֆաթ-
մայիս չես ազատի՛ ես քո գլուխը կուտիմ»:

Եղբայրս տեսաւ որ՝ շատ անգգոյշ գտնուե-
ցաւ ֆաթմայի մահուան համար առաջուանէ-
խօսք բանալով, ուստի խօսքը փոխեց եւ ըսկը-
ոեց կամաց կամաց յոյսեր տալ ծերունուն,
նոքա տակուին այս խօսակցութեան մէջ էին,
որ եկաւ ծառան ու յայտնեց բժշին, որ
տուած ճարը ոչինչ օգուտ չարաւ հիւանդին:
«Լաւ նաէ՛, Խաքամղարիբա, ասաց Թիուլի—
Խօգան, ինչ հնար որ գիտես բոլորը գո՞րծ
դիր ու ազատէ՛ ստրկուհուս, ես քեզ առա-
տօրէն կրկարձատրեմ»: Խեղճ ծերունին սաս-
տիկ յուսահատութեան մէջ էր, որ այդ քան
փողը իզուր պիտի կորչէր: Ես նորան այն-
պիսի ճար կուտամ, որ նորա ցաւը իսկոյն

կըփարատի», ասաց բժիշկը: «Հա, հա, խընդ-
րում եմ, աղաչում եմ քեզ, այնպէս արա՛,
որ իմ ստրկուհու ցաւը խսպառ կորչի», ասաց
Թիուլի—Խօգան լալով: Մուսթաֆան բերեց
իւր թմրեցուցիչ ճարը, տուեց սեւամորթ
ստրուկին ու խրատեց նորան ինչպէս պիտի
խմէ հիւանդը, յետոյ Թիուլի—Խօգային թոյլ-
տութիւն խնդրեց երթալ ծովի ափիը մի
քանի բժշկական խոռոքը քաղելու: Եւ դուքս
գնաց ամրոցէն:

Երբոր ծովին մօտեցաւ, եղբայրս պուկ
տուեց երեսի սուտ մօրուքը ու վրայի լօդի-
կի հետ միասին ձգեց ծովը, եւ ինքը մա-
ցառների մէջ պահուած, սպասում էր գի-
շերուայ վրայ հասնելուն, որ մթովը կա-
մացուկ երթայ գերեզմանատուն, որ ամրո-
ցի մօտ էր:

Եղբօրս հեռանալէն մէկ ժամ անցած,
եկան Թիուլի—Խօգային յայտնեցին որ Ֆաթ-
ման հոգնվար է, եւ նա իսկոյն ծառաներին
վազեցուց ծովի ափը, որ գտնեն եղբօրս եւ
շտապով բերեն ամրոց. բայց ծառաները շու-
տով յետ եկան ու ասացին նորան, որ բժիշկը
խեղդուել է, վասն զի տեսան նորա հաղաւը
ծովի մէջ, մինչեւ անգամ մօրուքը լօդում է
եղել ջրումը: Տեսնելով որ վրկութեան ոչինչ

Հնար չըկայ, Թիուլին մկսեց ինքն փրեն ու
բռոր աշխարհքը անիծել մօրուքը փետ-
փլուել եւ գլուխը պատին տալ Բայց
նորա յուսահատութիւնը ոչինչ չօգնեց:
Ֆաթման կանանցի կանանց ձեռքի մէջ
մեռաւ: Երբոր մահուան բօթը Թիուլի-
Խօղայի ականջը հասաւ, հրամայեց որ շու-
տով դագաղ շինեն նա մեռելից սաստիկ
վախենում էր—մեռած մարմինը մէջը դնեն
եւ այնտեղ յատկապէս շինած մի տան մէջ
Ժամանակաւորապէս դնեն. իսկ թաղման ծէ-
սը յետոյ կըկատարեն:

Ստրուկները տարին դագաղը գերեզ-
մանատուն եւ դրին գետնի վրայ,
լեղապատառ փախան գնացին լսելով հեկե-
կանքի ձայն, որ գերեզմանների մէջէն հա-
սաւ նոցա ականջին: Բանի էութիւնը այն
էր, որ եղբայրս գերեզմանների մէջ պա-
հուած: Ստրուկներին վախեցնելու ու փախ-
ցնելու համար հանել էր այդ հեկեկանքի
ձայնը:

Երբոր եղբայրս մենակ մնաց վառեց լապ-
տերը, որ կանխաւ պատրաստել էր, առաւ
արթնացուցիչ ճարը ու մօտեցաւ դագաղին.
Բայց ինչպէս նկարագրել նորա զարմանքը
ու սարսափը, երբ դագաղը բանալով տեսաւ

որ՝ նորա մէջի պառկածը ոչ ֆաթմա քոյրը
եւ ոչ Զօրայիդէ հարսն էր: Առաջի նուագ
նա մինչեւ անգամ չէր ուղում թմրութե-
նէն արթնացնել այդ քնածին: Բայց յետոյ
նորա գութը շարժեցաւ իւղակնոջ պրայ.
Հանեց շիշի իւիցը ու մէջի հեղուկէն քանի
մի կաթիլ թափեց նորա բերանը, կինը յո-
գոց հանեց, աշքերը ռացեց. բայց բաւակա-
նին ժամանակ չէր հասկանում թէ՛ ուր է,
կամ ինչ է տեսնում եւ լսում: Յետոյ ուշ-
քը վրան եկաւ ելաւ դագաղէն ու ընկաւ
Մուսթափայի ոտերը: «Ո՞վ իմ աղատիչ, ա-
սաց նորան, ինչով յայտնեմ քեզ իմ երախ-
տագիտութիւնը. դու ինձ սոսկալի գերու-
թենէն աղատեցիր»: Մուսթափան նորա ե-
րախտագիտական զգացմունքը ընդմեջիով
առաց: — Այդ ինպէս պատահեցաւ, որ ես
փոխանակ ֆաթմա քրոջ քեզ աղատեցի: Աղջիկը մի քանի վայրկեան նորա երեսը
նայելով, ասաց: «Այժմ ես հասկացայ, թէ
ինչու դու ցանկանում էիր ինձ աղատել.
մինչեւ այժմ այդ ինձ համար անհպակա-
նալի էր մնացել: Ուրեմն իմացիր. ամրոցի
մէջ ինձ տուին քո քրոջ անունը, որ քեզ
մոլորեցուց եւ գու քրոջդ տալու տեղ՝
ինձ տուիր այն փրկաւէտ հեղուկը»: Մուս-

թափան հարցուց աղջկանը իւր քրոջ եւ ջօրայիդէի մասին. եւ իմացաւ որ նոքա իրաւ, ամրոցի մէջ են. այժմ մինի անունն է Միրզա իսկ միւսինը նուրմահալ:

Երբոր ազատուած ստրկուհին տեսաւ որ եղբայրս շառ տիսուր է իւր ձեռնարկի անյաջող ելքի համար, աշխատում էր նորան մխիթարելու, եւ խոստացաւ ցուցնել նորան այնպիսի հնար, որով նորա ծանօթ աղջիկները անպատճառ կազառուին: Այս յոյսերով ոգեւորուած, եղբայրս խնդրեց որ շուտ յայտնէ այն հնարը, եւ ստրկուհին պատմեց նորան յետագան:

«Հինգ ամիս ստրուկի կեանք անցուցի Թիուի—Խօզայի ամրոցի մէջ, եւ ստրկութեանս առաջի օրէն չէի դադարում միա խոստի մի հնար գտնելու: բայց իմ դիտաւորութիւնը էացնելու համար բաւական չէր իմ տկար ոյժը, եւ ինձ պէտք էր մի ուրիշ մարդու օգնութիւն:»

«Անշուշտ նկատած պիտի լինիս ամրոցի ներքին բակի մէջ շատրուանը՝ որ տասը խոզ դովակով իւր ջուրը թափում է աւազանի մէջ. իսկ այս շատրուանի վրայ դարձուցել էր իմ բոլոր մոադրութիւնը: Իմ միտքս էր, որ հօրս տան մէջ եւս կար այդպիտի շատ-

րուան, որի ջուրը գալիս էր լայնարձակ ջրմուզների միջով: Այդ կարծիքը ստուգելու նպատակով, ես մի օր չափազանց գովեցի Թիուլի—Խօզայի առջեւ ու հարցուցի նորան՝ «ո՞վ է արդեօք շինել այս հոյակապ շատրուանը»: «Ես ինքս եմ շինել ասաց նա. բայց այս ամեն տեսածդ տակաւին ոցինչ բաներ են: Այս շատրուանի ջուրը բերած է մի աղբիւրից որ այստեղէն գոնէ հազար քայլափոխ հեռի կրինի, եւ խոզովակները՝ որի մէջէն նա (ջուրը) վազումէ այնպէս մեծ ու լայն են, որ մի մարդ ազատ կարող է մանգալ նորա մէջը: Բոլոր այդ գործը կատարուել է իմ կարգադրութեամբ եւ հսկողութեամբ»: Երբոր այս բանին տեղեկացայ, այնուհետեւ ինձ ուրիշ բան չէր մնում, բայց եթէ ունենալ տղամարդու ոյժ, որ կարող լինէի այդ կամարի քարերէն մինը հանելու. այն ժամանակ շատ դիւրին էր իմ աղատութիւնը: Ես ցոյց կրտամ քեզ այդ ջրմուզը. նորա մէջից դու կարող ես ներս մոնել ամրոցը եւ ազատել քո սիրելի աղջկներին: բայց նպատակիդ համենելու համար՝ հետդ գոնէ երկու հոգի պիտի ունենաս, որպէս զի նոքա կարողանան պատերազմել ներքինիների հետ, քանի որ դու բգա-

բաղուած կը ինիս աղջիկների ազատութեամբը:» Այսպէս ասաց ասքիուչին: ու Մուսթաֆան, որ իւր յոյսերումը թէ եւ երկու անգամ իւրառուած էր, բայց Խստուժոյ օդնութինը աղերսելով, աղջկայ խորհրդովը երրորդ անգամ ուղեց փորձ փորձել. եւ ասաց նորան: «Եթէ դու ինձ օդնես ամրոց մոնելու ես խստանումեմ», որ քեզ քո հայրենիքդ կը հացնեմ:» Այն քաղաքի մէջ, ուր բժիշկ էր ծպտը-ուել, Մուսթաֆան մօտը մնացած վերջին փողով գնեց մի յոռի ձի. մի պառաւ այրիի տան մէջ ֆաթմային կենտլու սենեակ վարձեց ու շտապեց դէպի սարերը. ուր առաջին անգամ տեսել էր Օբբասանին: Երեք օրէն հասաւ այնտեղ, գտաւ Օբբասանի վրանը ու մտաւ: Օբբասանը շատ ուրախ եղաւ նորա տեսութեանը: Մուսթաֆան տեղով տեղով պատմեց նորան իւր գլուխ եկած բոլոր փորձանքները: Նորա պատմածը լսելով Օբբասանը ժամանակ ժամանակ ծիծագում էր, բայց երբ բանը այնտեղ հասաւ, ուր եղբայրս պատմեց իւր սուտ բժիշկ դառնալով ու Խաքամաքարուդիբաբա՝ ի անունով ամրօց մըտնելը, Օբբասանը ծիծագիցը թուլացաւ: Կար-

ճահասակ ծերուկի դաւաճանութիւնը սաստիկ բորբոքեց Օբբասանի բարկութիւնը, որ խօսք տուեց նորան իւր ձեռքով կախաղան քաշտալու: Իսկ եզրօրս խոստացաւ, որ անպատճառ հետը միասին կերթայ կալանաւորած աղջիկներին ազատելու: բայց նախ հրամայեց նորան մի գիշեր անցնել իւր վրանի մէջ ու հանգստանալ: Եղբայրս մեծ շրջորհակալութեամբ ընդունեց նորա առաջարկութիւնը: Իսկ լուսագեմին Օբբասանը հագաւ իւր զէնքն ու զարդը: Երեք քաջ ծառաներին հրամայեց ուղեկցել, եւ ամենքը ձի հեծած ճանապարհ ընկան: Երկու օրից հասան այն քաղաքը ուր պահ տուած էր ֆաթման: Մուստաֆան գնաց առաւ աղջրկանը ու բոլորը միասին գնացին այն անտառը, որ Թիուլի—Խօզայի ամբոցին մօտ էր, եւ այնտեղ մնացին մինչեւ մժան կոխելը: Երբ արեւը մայր մոռաւ ու մութը փուռեցաւ, ֆաթման առջեւէն, միւսներն նորա ետեւէն կամացուկ մօտեցան այն աղբերակին: որի ջուրը կամարակապ ջրմուղի միջով վազում էր ամբոցի բակը: Ֆաթման, աւազակներից մինը ու ձիանք մնացին այնտեղ. իսկ միւսները մտան ջրմուղի մէջ: Բայց ջրմուղը չիջած, ֆաթման էլի մի անգամ պատմեց նոցա, որ

այդ ջրմուղը կըտանէ նոցա մինչեւ բակը,
ուր աջ ու ձախ կան երկու աշտարակ. ա-
ջակողմեան աշտարակի վեցերորդ դուռը
կըտանէ նաթմայի եւ Զօրայիդէի բնակարա-
նը, որն երկու սեւամորթ ներքինիներ պահ-
պանում են: Ամեն հարկաւոր զէնքեր ու գոր-
ծիքներ հետերը առած, Մուսթաֆան, Օրբա-
սանը եւ ուրիշ երկու ուղեկիցներ իշան ջրմու-
ղի մէջ: Զուրը մինչեւ նոցա մէջքն էր հաս-
նում եւ այդ կերպով նոքա առաջ գնա-
ցին եւ կէս ժամէն հասան ամրոցի շատրուա-
նին: Պատը թէ եւ հաստ ու ամուր էր, բայց երկար միջոց լրկարողացաւ դիմանալ
այդ ուժեղ տղամարդոց զօրութեանը.
նոքա շուտով մի ծակ բացին ու ներս մը-
տան. առաջ ու առաջ դուրս եկաւ Օրբա-
սանը եւ օգնեց ընկերներին դուրս գալու:
Նրբոր ամենքն էլ արդէն բակումն էին,
աջքերը չորս սլոտուտը դարձուցին եւ սկսան
այն դուռը պտրելու, որի մասին ստրկու-
չին պատմել էր նոցա: Մի քանի ժամանակ
նոքա մոլորուած մնացել էին բակի մէջ եւ
չըգիտէին ո՞ր դռնէն մտնեն, վասն զի աղջը-
կայ ցոյց տուած դուռը աղիւսով բանած
եւ պատի յետ հաւասարեցուցած էր: այն
ժամանակ Օրբասանը ասաց՝ «Իմ զէնքը ա-

մեն փակած դուռ կըբանայ. ասաց ու մօտե-
ցաւ այդ ծեփածի մօտի դրան. ընկերներն
էլ նորա ետեւէն գնացին: Երբոր այդ դու-
ռը բացին, ներաը տեսան վեց սեւամորթ
ստրուկներ, որոնք գետնի վրայ պառկած,
քուն էին լինում... տեսան որ սխալուել են,
եւ կամենումէին լուռ մունջ յետ երթալ,
բայց մի ծանօթ ձայն, աղմուկ բարձրացնե-
լով սկսեց գոռալ ու մարդոց օգնութեան
կանչել. դա այն կարճուկ ծերունին էր,
որ փախել էր Օրբասանի բանակէն: Օրբա-
սանը նորան խելքը վրան ժողովելու ժամա-
նակ չըտուեց, մի ակնթարթի մէջ յարձա-
կեցաւ վրան, գօտին երկու կտոր արաւ, մի-
նը խցկեց բերանը, իսկ միւսով նորա ձեռ-
քերը ետեւը պրկեց. այս որ այսպէս կատա-
րեց, դարձաւ միւս ստրուկներին, որոնցից
մի քանիսին Մուսթաֆան եւ երկու ծառանե-
րը արդէն կապկապել էին. եւ շուտով ա-
մենին էլ զինաթափ արին ու կաշկանդեցին
ձգեցին. յետոյ կուրծքերին դրին մերկա-
ցուցած դաշոյնները եւ հարցուցին ո՞ւր են
նուրմահալը եւ Միրզան: Սարսափած ստրուկ-
ները յայտնեցին, որ նոքա մօտակայ սե-
նենեկումն են: Մուսթաֆան վազեց գնաց
այնտեղ եւ տեսաւ որ աղմուկն ու շփոթը

զարթեցրել ու ոտքի կանգնեցրել էին ֆաթ-
մային ու Զօրայիդէին։ Խսկոյն երկուսն էլ
Հաւաքեցին իրանց ունիմ չունիմը եւ գը-
նացին Մուսթաֆայի ետեւէն։ Երկու ուղե-
կից աւազակները խորհուրդ տուին Օբբա-
սանին ամրոցը կողոպտել բայց ազնուահո-
գի աւազակապետը պատասխանեց՝ «Ո՛չ, ես
այդ բանին հաւան չեմ. ոչոք իրաւունք
չունենայ ասելու թէ՛ Օբբասանը գիշերավ
մոռնումէ մարդոց տուն եւ կողոպտումէ»։
Եւ հրամայեց Մուսթաֆային եւ աղջիկնե-
րին իջնել ջրմուղի մէջ, ասելով որ շուտով
կըգայ, ու իրան ծառաներին հետը առած,
գնաց սենեակից քաշաքաշ դուրս հանեց
ծերուկին, վղին փաթաթեց մի ապրշումէ
դաստառակ, որ յատուկ այդ դիտմամբ ա-
ռել էր հետք ու շատրուանի մօտ մի բար-
ձր սիւնէ կախ տուեց նորան։ Երբ այս
կերպով պատուհասեց դաւաճանին, ինքն
էլ ընկերներովը իջաւ ջրմուղի մէջ, Արտա-
սունքը աչքերին շնորհակալ եղան աղջիկ-
ները վեհանձն Օբբասանէն իրանց աղա-
տութեան համար. բայց նա նոցա խօսքը
կտրեց, ասելով թէ՛ «Նոտապեցէք փախ-
չելու ու գլուխներդ ազատելու, ապա
թէ ոչ՝ Թիուլի—Խօզան անշաւշտ մարդիկ

պիտի ուղարկէ ամեն կողմ, որ նոցաբւնեն»։
Միւս օր Մուսթաֆան եւ աղջիկները սըր-
տառուչ խօսքերով մնաս բարեւ ասացին
Օբբասանին. եւ, ի հարկէ, իրանց բոլոր
կեանքում չեն մոռանալ նորանից ստայած
բարերարութիւնը։ Խոկ ազատուած օտար
տղջիկը գնաց Բասրա, այնտեղ նաւ նստեց
ու գնաց իւր մայրենի քաղաքը։
Այս անցքէն յետ իմ ազգականներն էլ
շուտ հասան տուն։ Քիչ էր մնացել, որ հայրս
սրտի ուրախութենէն մեռնէր, երբ որ իւր
գաւակներին տեսնելու նորէն տրժանացաւ։
Նոցա քաղաքը հասնելու միւս օրը մեծաշուք
իրախունք պատրաստեց եւ հրաւիրեց քտ-
դարի բոլոր բնակիչներին, ու եղբայրս բազ-
մաթիւ հանդիսականների առջեւ պատմեց
իւր գլխի եկած անցքը. լսողները միաբերան
գովեցին ու փառաբանեցին մեծահոգի ա-
ւազակապետի անունը։
Երբոր եղբայրս իւր պատմութիւնը աւար-
տեց, հայրս Զօրայիդէի ձեռքէն բռնած մօ-
տեցաւ Մուսթաֆային ու ասաց. «Այսօր ես
քո գլխի վրայէն հանումեմ անէծքը. ա-
հա այն կինը, որ տալիս եմ քեզ. դու ար-
ժանացար այդ պարզեւին քո աշխատանքով
եւ աչալրջութիւնով, եւ կնոջդ հետ միա-

սին տալիս . եմ քեզ իմ հայրական օրհնութիւնը : Թող ծաղկի ու բարգաւաճի մերքադաքը եւ նորա մէջէն անպակաս լինին քեզ նման քաջ , եռանդուտ եւ եղբայրանէր երիտասարդները» :

Կարաւանը հասաւ անպատի սահմանագըր լուխը ու մեր ճանապարհորդները ցնծութեամբ բարեւեցին կանաչափայլ մարգերին եւ ստուերախիտ ծառերին , որոց տեսքին վաղուց կարօտ էին մնացել . Մի գեղեցիկ հովտի մէջ շինած էր իջեւանը , ուր նոքա մը տաղիր էին իջեւանելու : Թէ եւ այստեղ նորքա կեանքի ամեն յարմարութիւնները չըգտան , այնուամենայիւ չափազանց ուրախ էին , որովհետեւ ճանապարհի ամեն տեսակ գժուարութիւններէն ու վտանգներէն ազատուած էին արգէն : Մուլէն — վաճառականների մէջ ամենէն երիտասարդը — երգումուղար էր գալիս իւր ընկերների առջեւ , եւ իւր զուարթ բնութքով մինչեւ անդամ քանիցս յոյն ծալեւքոսի երեսը ժապիտ բերեց : Խաղէն ու տաղէն գաղարտծ , երբ եկաւ տեղը նստեց , իւր ճանապարհորդակիցներին զուարձացնելու համար , առաջարկեց նոցա միպատմութիւննեւս պատմել , որն այսպէս սկսեց :

ԳԱՇԱԾ-ՄՈՒԻՔԻ
ԱՐԿԱՆՔԵ

ՎԻՊՈՍ-ՃԱՃԱՐ
ԹԻՄՈՒՄ

ա զի լինումը յանելու ցցուն—ճաճար
ճգնէ ցպատադի զրի առ ջի մաս միքած
ու յանահանծ ցյո սէթ չին առ . Նորիդ ոչ
շա ողձանակաց պատի ղնձանի մշմամի աղ
ամ ճաճան կի ամ չ ջրն յանանի դժէ ցը
ամ ոչ ար ցժ ոչ ար նախան մի մասին ցըն
ցի ինու ամ ու ամ ու ամ ու ամ ու ամ ու ամ
ճքարոփ յանահանծ մին ամ ու ամ ու ամ
ցովառք աղամ ԱՐԿԱՆԾՔԸ այս միքուրեմա
մին ա սր ման մանուն կի ամա ցը
ցմ ողձանակաց նի առ ամ նախանու ցժ մերու
իմ մայրենի նիկէա քաղաքի մէջ կենում
էր մի մարդ, որին ամենքը Գաճաճ—Մուք
էին ասում՝ նորա հասակի կարծութեան
համար. թէ եւ այն ժամանակները ես շատ
տղայ էի, բայց նորան մոքէս հանած չեմ,
մանաւանդ որ՝ մի անգամ հայրա նորա պատ-
ճառով ինձ այնպէս ոսատիկ ծեծեց, որ ես
կիսամեռ եղայ. իմ տեսած միջոցին Գաճաճ
—Մուքը արդէն տարիքը առած մարդ էր.
բայց նորա հասակը երեք թզից հազիւ թէ
մի փոքր աւելի կըմինէր. նորա արտաքին
տեսքը խելք չըհասնելու բան էր. մանր ու
բարեկազմ իրանքի վրայ գրած էր չափա-
հաս մարդու գլուխ, որ ամենեւին համա-
պատասխան չէր նորա մարմնին:

Գաճաճ—Մուքը մենակ կենումէր իր ա-
հսդին տան մէջ, ու իւր կերակուրը ինքն
էր եփում . եւ եթէ կէս օրի ժամանակ նո-
րա ծխանէն թանձր մուխ լըտեսնուէր, ոչ-
ոք չէր իմանալ՝ ողջ է նա, թէ՞ մեռած: Ամ-
սենը միայն մի անգամ գուրս էր գախս նա.
երբեմն սովորութիւն ունէր տան կորի վը-
րայ շրջելու, եւ այն ժամանակ փողոցէն
անցնողին երեւումէր միայն նորա գլուխը,
որ ասես թէ ձմերուկի նման այս ու այն
կողմն էր գլորիում: Ես ու իմ ընկերները մեր
փողոցի երեւելի ստահակներն էինք. ինչ
տեսակ չարութիւն որ կամենայիր՝ մեր ձեռ-
քիցն էր գալիօ, ոչ մի դիպուան բայց չէլնք
թողնում որին տնասզ տալու, որին ծաղ-
րուծանակ անելու. իսկ Գաճաճ—Մուքի ար-
նից դուրս գալը մեղ չամար տօն ու բայ-
րամէր: Այդ նշանաւոր օրը մենք՝ ստա-
հակներա վազօրօք հաւաքփումէինք դը-
րան առջեւ ու սպասում էինք նորա դուրս
գալուն: Երբ գուռը բացվումէր եւ ամենից
առաջ դուրս էր ցցվում մի մեծ գլուխ՝ վրան
ահագին փակեղ, երբոր գլխից յետոյ դուրս
էր գալիս պատիկ մարմինը ցնյոտի վերար-
կուի մէջ փաթաթած, լայն լարտիք հագած
լայն գօտի մէջըին, գօտիլ ետեւ այնպիսի

երկայն դաշոյն լսրած, որ դժուարէր ի-
մանալ՝ որը որից էր կախուած, դաշոյնը
Մուքէն, թէ՞ Մուքը դաշոյնէն, առաջ այդ
ժամանակ սկսվումէր մեր ծայրայեղ զուար-
մութիւնը մեր կանչվոտոցին մեր վէսեր
վերափեր ձգելուն, եւ ախելագարի նման նո-
րա չորս կողմը թուջուելուն վերջ չըկար:
Գաճաճ—Մուքը մեղ ծանր ծանր գլուխ էր
տախիս ու փողոցի միջուկ շարունակումէր
կամաց կամաց առաջ երթալ Ման գալու
ժամանակ նուածիծաղելի քալուածքներ էր
անում դամերուի ու հողաթափները անդա-
գար գետնին քըմքըմելով շը՛փ շը՛փ ձայներ
էր հանում նիշար ու փողը մարմնին
նայելով՝ հաջաթափները անհամեմատ մեծ
ու լայնաէին: աֆողոցի ստահակներու խեղձի
ետեւէն ավազելուի անդադար կանչումէինք՝
«Գաճաճ—Մուքու Գաճաճ—Մուք» Նորա
վրայ մենք խոդ էլ էինք հանել ունորա
ուեսնելին միշտ ասումէինք Մինչեւ այսօր
միտուէ այդ խաղը աշխարհի գալուայ
այս զըմատիկ պրատիկ Գաճաճ—Մուք, ուն-
ինչ առենք քեզ մարդի, թէ՞ մուկ, մի-
մանցիք բալէտք մեծ տունը, ուստի բայ-
տեկ կացիր մեր ջիրումը, ու առաջին
ը մազար փառք քո ստեղծողին, բայ ու

ոյ սմբակառց այսօրինակ մշայդ
զմին Քեզ տեսնելով լիանալը ցցն յաւան
քը Քեզ ծաղրելով կշտանալ չեմ ո՞չ զան
մէ՛ հա Թաճաճ Մոք գէ՛ հավագիր և ած
զման Մարդ եմ մեր ետնէն հասիր թիւն
ու Այսպէս միշտ կատակներ էինք ո անորմ
ոզորմելի Թաճաճի վրայ եւ այժմ առավագե
զոյ խոստովանում եմ, որ ես իմ խենէ շուլ
թիւներն չափից անդում եխա մէ՛ կայրի
կըն էի քաշում ու մէկ փակեղին էի ափով
խփում մի անգամ էլ գնացի ետեւնաթռ
այնպէս պինդ Վկախեցի հողաթափի նիրայ
որ խեղճ մարդը ցած ընկառ Անյա բանը
թէ եւ մեզ շատ ծիծաղեցուց Արայց շատ
թանգաւ էլ և նստաւ ինձ Թաճաճ + Մոքը
պնաց ուղիղ մեր տունը ներս մնաւ ու եր
կար ժամանակ նստեց ու խօսեցաւ հօրն
հետ ես գնացի գրան ետեւը Ապահուեցայ
ակայնտեղից տեսայ ինչպէս հայրս պա-
տառով ճանապարհ գրեց նորան մինչեւսայ
լադուռը եւ ինչպէս մարդավարի մնառքա-
րեւ արաւ հետը Հոգիս վկայեց որ գլխիս
մի փորձանք պիտի գայ, գնացի աւելի գաղ-
տուկ տեղ պահուեցայ եւ այնքան մնացի,
մինչեւ որ քաղցը ըրտիպեց ինձ գուրն գա-
լու այդ պատսպարանէս Քաղցածութիւնից

առելի վախեցայ թան թէ ծեծից որ պիտի
ուժէի Արութառ ծագման էնեղում քը գը-
նացի հօրի առջեկո առեսաթէ աղբնչ բանէ
տեղեանկ չչիրանայր ապառնական ճայնով
առաջ ինձաւ նշպէս Համարձակեցար սիր
տք ցաւնին եւ բանի Սուրբին եւ ուծաղը անել
նորմ վրայ ես կուզեմ որ գու կիման տք
նորա պատմութիւնը ապա մշտիծաղիս
նորա վրայ բայց ամեն բանէ առաջնորմ
պիտի նտանաս քո « սովորական պարգևնը »
Սովորական պարգևն թշտիում էր քսան հինգ
հարուած կամ ձաղիով կամ մարտկով եւ
կամ վերջապէս ինչով որ Համար Այս ան-
գամը հայրուառաւ իւր ֆխամորչը նախ
հանեց իրայի կտուցը ով ծխամանը ու զորո
գու պատուիրեցիր չափեց չափից մէջուց
Քաման հինգ հարուածը համբեկն յետո
հրամայեց որ ուշադրութեամբ լսեմ Գագ-
ճաճ Առուքի պատմութիւնը եւ նկայուաց-
պէս ազն չի միայն ուղամբուց հայրանան
մանորա կոկական անունը Մուգ չի այլ
Մուքրախ է նորա հայրը մեր քաղաքի բը-
նակից է եղել թէ եւ հարստութեան տէր
եղած չէ բայց ունեցել է պատուադա
նուն եւ գրեթէ նոյն միայնակեաց կեան
քըն է մարեր որ վարում է այժմ նորա

որդին. խեղճ Մուքին ատելով առել է՝ նոռ
րա կարճ հասակի համար մարդոցմէ ամօթ
է քաշել նորա պատճառով եւազինչ սովո՞
բեցուցած չէ. Տասնութեց տարեկան հասա-
կում Մուքը գուարթաբարոյ տղայի է եղել
իսկ նորա խոժոռագէմ հայրը անդադար
քրմնջում է եղել թէ՝ «Դու այժմ երեխայ
չես, ժամանակ է տղայական» խաղերդ մո-
ռանալու» ։ Խաղ մնա լայ լայի այսու
։ Մերունի հայրը մի օր ցած ընկառեւ այնու-
պէս սաստիկ ջարդուեցաւ որ այնուհետեւ
երկար չապրեցաւ ու մեռաւ, ուգէտ ու ազ-
քատ թողնելով իւր որդուն։ Ազգականնե-
րը որոնց Մուքի հայրը պարտք ուներ
մեռնողի բոլոր ունիմ չունիմի աէրը ե-
զան, ու Մուքին դուրս ձգելով հօրական
տնից, խորհուրդ տուին երթաւ ու աշխար-
քումը իր բաղդը որսալ։ Գաճաճ—Մուքը իր
ազգականներին ասաց, որ նա պատրաստ է
ճանապարհ ընկնելու, միայն թէ նոքա յօ-
ժարէին հօրը հալաւները տալու նորան։
Ազգականները չէ չասացին, առին տուին նոռ
բան հօրը հալաւները։ Մուքի հայրը բարձա-
րահասակ ու սոու արամարմին էր, ուրիմն
նորա հալաւները ամենեւին պէտք պիտի
չըդային որդուն. բայց Գաճաճ—Մուքը գոյ-

րա վրայ շատ խերք չը մտշեց. ինչ որ եր-
կայն էր՝ այն կտրեց հալաւի վրայէն եւ
հագաւ. Լայնութեան մասին նա չըհռգաց.
այդ է ահա պատճառը, որ նորա արտա-
քինը այգպէս սարասակելի է. մինչեւ այս օրս
էլ նա հագած ունի հօր ահագին փակեզը,
նորա լայն գտնին, նորա վարտիքը, նորա կա-
պուտ լոդիկը, այդ ամենը եւ նոցա հետ
միասին գաշոյնը—բոլորը պատկանում էին
նորա հօրը. Մուքը առաւ ձեռքը մի գաւա-
գան, եւ հօրական տնից գուրս գնաց։ Նուն
Բոլոր օրը նա ուրախ ուրախ առաջ էր,
գնում, յաւսալով որ մէկ տեղ կրգունէ խր-
բաղդը, եթէ ճանապարհի վրայ տեսնում
էր ցողուն ավալիկ կտօր կամ մի փոքրիկ
քար, իսկոյն առնում, գրպանն էր դնում,
կարծելով թէ գոհար է գտել. եթէ տես-
նում էր գմբէթ կամ աշտարակ, վազէվազ
գնում էր այստեղ, կարծելով թէ տեսածը
բաղդի տաճարն է Հեռուէն նշամքելով
խաղաղ լճի հարթ մակերեւոյթը, լերդապա՛-
տառ, մօտենում էր նորան, կարծելով թէ
կախարդական աշխարհի է հասել բայց մօ-
տիկնալով նորան, կախարդանքը աներեւու-
թանում էր նորա աչքէն. փորի քաղցր ու
մարմնի խանջութիւնը միոքն էին բերամ։

որ նա գտնվում է մահկանացու մարդոց եւ ոչ
անմարմին ոգիների աշխարհքումը։ Այսպէս
անօթի ու տառապուած անցուց նա երկու
տաժանական օր։ Վայրի պոտուզներն ու մրմբ-
տիքը նորա կերպակուրն էին, գետինը նորա-
անկողինն էր եւ երկնքի կամարը՝ նորատաւա-
նիքը։ Երրորդ օրը՝ առաւօտուն նաև մի մեծ
քաղաք տեսաւ։ Մինարէների ծայրերու մաս-
հիկները շողչողու մէին տրեւի ճառագիտիք-
ներէն՝ ու խայտածամուկ դրօշակները ծառ
ծանում էին տանիքների վրայ առնես թէնոք
քա մերինեղձ Մուքին դէպի իրանց էին հրա-
սիրում կանգ առաւ նաև մի բարձրաւանդ-
դակի վրայ եւ այնտեղից նայեցաւ զննեց
քաղաքը ու նորա շրջակալուքը ու մոքի մէջ
ասաց «Իշարկէ այսոտեղ պիտի գտնեմ իմ
բազդը, կամ այսոտեղ կամ ոչ մի տեղ»։
Ասաց ու վերջի ուժը ժողոված, թուշտելով
գնաց դէպի քաղաքը մէկ եւ ճանապարհը երդ
կար չէր ու մինչեւ կէսօր շատ հեշտ էր հաս-
նելը, բայց Մուքի ուժերը այնպէտ թուլա-
ցել էին, որ հազիւ կարողանում էր շարժե-
լու, ու խեղճ տղան հարկադրուեցաւ ար-
մաւենու տուուերի տակնաստելու յոգնութիւն-
առներ։ Երջապէս, երեկոյեան դէմ հասաւ
քաղաքի դրանը ներս չըմտած, լողիկը կար-

գիւրերեց վիտինդը լինաթաթեց գրիսին
գօտինաւելի լայնանց ու շամանց քինուարկայն
գաջինը աւելի ածուական կանունու հազար ափա-
ների վոշին թափառուեց մըրեց ձեւուքը ան-
ուաւ ցուալը ու կորիծի պէս քաղաք մտան։
Արդէն քանի քանի վողոյն երանցաւ նաև,
բայց վիւրընկալ դոները չէին բացութեմ նու-
րու առջեւ եւ ոչոք մարդարիաբար չէր առ-
սում նորանաւ ներս արի, Գառաճ և Մոքը
կերը իսմ՝ ու յոգնութիւն առ յուղաց ու
յուղորմելին աչքը գարձուց չորս կողմը վե-
րանկարծ տեսաւ որ մի մեծատանյապատռը վ
հան բացուեցաւ եւ մէկ պառաւ կինու գը լու-
լուը գուերս արած, ծանր ու ամուր ներգեց-
լով առում էր։ բասա ու արձրածիծ ցաւո
զգանելէք, բարեկամը, եկէք, զամի ին սիաք
ու մէն Արագ արագ վաղեցէք և նի որ շուիք
ու ձաշուսնեղանը դրածէ, արամ ու մէն
ըմեներակուրը բերածէ, նիմւոց զավ շու-
ծայ Քանի տաքէ վաղեցէք զո՞ւ մի առուրս
մաղնելէք բարեկամը, եկէք յատքան մնան-
Այս խօսքերէն յետու տան դուռը բացը
ու եցաւ, ու առ Մոքը տեսաւ որ ամեն կող-
մէն մկան շներ ու կատասներ յազէ վաղ-
գալ գւաներս մասել Քանի մի վայրկեան
Մոքը տատամաւթեան մէջ էր ընդունէան

արդեօք այդ հիւրակէր հրաւէրը թէ ոչ բայց
վերջը որոշեց ներս երթալ: Նորա առջեւն
գնումէին երկու կատու, եւ նա կաթելով
թէ սեղանատան ճանապարհը նոքա գիտենա
գնաց ետեւէն: ոչին վեճիքը ու զայը առ
Սանդուխքի վրայ բարձրանալին: Գա-
ճաճ—Մուքը տեսաւ այն պառակին: որ պա-
տուհանից դուքս նայելով տաղ էր ասում:
Պառաւը բարկութեամբ նայեցաւ նորա վրայ
ու հարցուց՝ «Ի՞նչ ես ուզում»: Դու հիւ-
րեր հիաւիրեցիր, ասելով թէ՝ նոցա համար
կերակուրը պատրաստ է, պատանիանեց
Գաճաճ—Մուքը ես որովհետեւ քաղցած
էիս զնդունեցի քո հրաւէրը եւ եկայ: Պա-
ռաւը ծիծաղեցաւ ու ասաց՝ «Ո՞րտեղից ես
գալիս, ով իմ սիրական կատուներէն, շնե-
րէն եւ նոցա հարեւաններէն զատ ես ու-
րիշ հիւր չունիմ»: Գաճաճ—Մուքը պատմեց
պառաւին հօրը մահէն իւր գլխին եկած
ամեն աղէտալի անցըր, եւ խնդրեց որ իրան
թոյլ տայր կատուների հետ միասին հաց ու-
տելու: Գաճաճ—Մուքի պարզամոռութիւնը
շարժեց պառաւիս գութը, եւ նա խոյնարկ
անցներու նորա տանը, ուստեցուց ու խըմ:

յուց: Յետոյ, բաւականի երկար նայելով Առև-
քի վրայ, ասաց այս Մնաւիմ ուանը եւ ծառ
ուայէ: աշխատանքդ ծոնը չի լինիր իսկ Պատպա-
րուսոդ կը լինի շատ լաւազակ բյուզանդ զէ
Գաճաճ—Մուքի բերանին համով էին երես
ւել պառաւի կերակուրները, եւ նա ուրաք
խութեամբ մնաց նորա տանը ծառայելու:
Եւ իրաւոր նորա աշխատանքը շատ թե-
թեւէր, բայց եւ շատ օտարոտի: Պառաւ Առ
հայցն երկու արու եւ չորս էգ կամուս ու-
նէր: Մուքը պարտաւոր էր ամեն առաւծու
նոցա բուրդը սանդրել եւ թանկագին հո-
տոտ իսղեր քսել: Երբ պառաւը տնից դուրս
էր գնում: Մուքի պարտաւորութիւնն էր
կատուների վրայ հսկելու, կերակրելու, կե-
րակուրները ջոկ ջոկ ամանների մէջ դնելու
իսկ գիշերները պէտք է պառկեցնէր նոցա
կերպասէ անկողինների վրայ ու թաւշէ վեր-
մակներով ծածկել: Փոքրիկ շներ եւս ունէր
պառաւը նոցա վրայ եւս հոկողութիւն պի-
տի գանենար Մուքը: բայց շների հոգաը այն
քան շատ չէր որբան կատուներինը որոնց
պառաւը հարազատ զաւակների նման էր
սիրում: Ճայի բազայ լայի վիճակայ ուն
Գաճաճ—Մուքը մենակեաց կեանք էր վա-
րում պառաւէն, նորա կատուներէն ու շը-

ներէն \ զամանչոքի չէթ տեսնում յարնի մի
ժամանակ ամէն լցան վարդուսալքով էր
առաջ \ վնում էր կեցումնորդի կեցումնատ էր
էր նորանից բայց արամաց կամաց կատուա
ները միշեցին շերես առնելու Երբոր ամեն-
տիկինը տնից դուքն էր գնում հանոքախնե-
լագարներին նմանավազվում առ ցատկուամ
էին ամենակիր մէջի կարասիքը լուսուող էին
տափառ քանի միտանգամ ամանիք կուրը տ
տածներն էին պատահելու էր հայց Հազիկ
թէ տաճտիկնօ ունապէայնը լսիում էր Առան-
դու խթիքը յիշ, բնկոյն գնում ու ուղարք
նստում էին բարձերի վրայ, անես թէ այդքան
ստահակութիւն անողները ինքները չէին
ու պառաւին տեսնելուի պաշերը շարժուամ
մրամբում էին Պառա. Ահա այդին այդպիսի
անկարգութիւն տեսնելով իր սենեակների
մէջ բարկանում էր թէ եւ Մոքը երդում
պառաւ էր լինում իւրանմեղութեանը Հա-
մար բայց ապանտիկինը \ դարձեալ նորան
էր մերագրում Պառաւ Համատալ անդամ
չէր աւզում մէտ որսնիրաւ պիրավանակատու-
ները այդպէսար ուռուս մտւնջ անստած
են բարձերի վրայ, կարող լինէին այդ-
պիսի առաջակաւթիւն անել. Հարկաւ
նա կարծաւմ էրալ որ այդ ամենա անկարգ

գնէթեան պատճառը նորա չ ծառան էրալ
անոնամ բամ ու քը տրումութեան մէջ ընկըզ-
մեցաւ, տեսնելով որ այսուեղ եւս ըրդապան
իւրաբաղդը բապտում էր անա Վարքի մէջ
որոշեց պատճափ տնէն հեռանալ բայց վորո-
քով իմանարդիւ որ ննիող ճանապարհորդե-
լը շատ անսիսրմ բան է, ամիսքը դրեց ինչ
ճնարդվակուզէլինի, անկարատ առ իւր առ-
ճիկը պառաւից լուսնելու որն նա միշտ փառ
տանում էր տալ ու երեք չէր առջիս նաև
Պառաւի տան մէջ մի սենեակ կար պատ
տարին տասերկու ամիս վակ էր յաջանա-
գամ պառաւը մտնում էր այնտեղ ուսիր-
շը ու ուցուց էր վերցնուամ. Մոքը շատ փառ
գում էր վիմանալ արդեաք ինչպահած ունի
այնտեղ պառաւը ճանապարհութիւնի վրայ
մաշուկուի վուգը շատ անգամ մտածում
էր Հաւանական բուր պառաւը իւր վողեւ-
րը այդ վակ սենեակում լինի պահած բայց
ափսնուր դոււը միշտ փակ էր եւ փողին
համանելը անհնարին էր յութ իւր մրձը միշ-
տ Մի առաջաւ պառաւն Ահա այդին տնէն
գուրս գնաց Պառաւը մի փոքրիկ շուն ու-
նէր, որին ամենաւին չէր սիրում եւ շատ
անգամ ծեծում էր. բայց ընդհակառակն,
Մոքը նորան շատ էր սիրում, եւ փոխան

դարձ, չունեն էր միրումնեւ հաւատարիմ էր
նորան: Այդ օր ջունը վազէմազ ամօտեցաւ
նորան ու նորա լայն վարտիքէն խած:
նելով, թաջտերկ և գանազան տարօն
րինակ շարժմանքներ անելով իբր թէ հաս-
կացնել էր ուղարման որ Մուքը նորա ենթեւէն
երթայ: Եւ իրաւ որ, Մուքը գնացանորա
ետեւէն: Չունը տարաւ նորան պառափին նըն-
ջարանը, ուր կար մի գաղտնի դռսու, որն
առաջ երեք նկատած էր: Այդ գտուուր կի-
սաբաց էր եւ Մուքը ու քախութեամբ ու
գարմանքով նկատեց: Որ նա տանում է դէ-
պի այն սենեակը, որ նորա վազուցուայ յան-
կաւթեան նպատակն էր: Մուքը ներս մուաւ
ամեն բան աչքէ անցուց: Բայց ոչ մի տեղ
փող չըգտաւ: Դէս ուղիքէն ցրուած էին մաշ-
ուած հալաներ և հին ու տարօրինակ ձեռ-
ւով անօթներ: Այդ անօթներէն մինը աւ-
ռանձին կերպով գրաւեց նորա ուշը: Նա
ակնվանիէ էր շինած եւ վրան փորագրած
էին գեղեցիկ նկարներ: Առավայր անօ-
թը ու ձեռքի մէջ պառւտացնելով, ամեն
կողմից մտագրութեամբ նայում էր վրան,
բայց, տարաբաղտաբար, չը նկատեց որ
խռափը թոյլ կեցած էր: անօթի վրայ, անօ-
թը ձեռքի մէջ մանրերելիս խուփը ըն-

կաւ գետնին յու միշուր փշուր եղաւ: Այս
քմերկար մամանով անշարժ ու աստիճանած
մնաց: նա ժութեղը նորա վիճակը վճռուե-
ցաւ: մնայուէլ հետար չը կար: որովհետեւ
հարկ եւ հարկ պիտի վախչէր նայ ապա թէ
ոչ պահաւը շան չամատակ կամնէր նորան:
Գաճաճ Մուքը միտքը դրաւ խկոյն ճա-
նապարհ ընկնել աչքը չօրս կողմը պտու-
տացը չի գտնի արդեօք մի բան: որ
ճանապարհին կարող էր նորան հարկաւու-
րել: ու սենեակի խորշումը տեսաւ ահագին
հողաթափներ: որոնք թէ եւ սիրուն չէին,
բայց գոնէ իւր ոտիններէն նոր էին: չուու-
տով իւրերը ձգեց եւ այդ ահագինները աւ-
ռած: նայն պէս կար այնտեղ մի սիրուն ցուպ
քանդակած գլխով այդ էլ որ առաւ, այլ
եւս չը մնաց սենեակի մէջ ու փակոյն դրոր գլ-
նաց: Յետոյն մասաւ իւր սենեակը հագաւ
հօրը վակեզը ու սերին ձգեց զոդիկը գոտիին
խրեց գաշոյնը: ու անտեղ անգամ ընճայելով
դրոր: եկաւ նմախ պառտաւի տնից եւ ապա
քաղաքից: զամանակ թիցափ ազգ կը առա-
կանակ որ պառամաք նորա ետեւէն
մարդիկ կու զարկէ ու քոնել կուտայի Մուք
քը անդադար առաջ էր վագում մինչեւ
այնքան: որ յոգնութենէն հազիւ կարողաւ

նում էր չունց առնել։ Կեանքի մէջ այդպէս
շատ վաղաճ էր բայց արի առես որ՝ կանգ
առնել եւ աչէր կարողանում նաշ միան-
յաց զօրութիւն միշտ առաջ էր քաշում
նորան վերջապէս նաև հասկացաւ որ հո-
դաթափները մի առանձին զօրութիւն պի-
տի ունենան եւ իրան քաշող տանողները
յատիւպէս հողաթափներն են։ Նատաշ-
խատեցաւ շատ ձիգ թափեց։ որ հողա-
թափները կանգնեցնէ, բայց իզուր վերջա-
պէս զւժէ ընկած ու չիմանալով ինչ անէ,
կանչեց նորա վրայ այնպէս, ինչպէս որ ձիե-
րի վրայ են կանցում, երբ ուզում են նոցա
կանգնացնել չոշ չոշ չոշ։ Հողաթափները
իսկոյն կանգնեցան եւ Գաճաճ Մուքը թար-
կացած գետնին փռուեցաւ։ բայց ընդունուց
Այսպիսի հրաշալի հողաթափների տէր
լինելը շատ ուրախացուց նորան, վերջապէս
խեղճ Մուքը գտաւ մի բան, որն կարող էր
մեծ բաղդի հասցնել նորան։ Բայց չընայե-
լով ուրախութեանը, նախսկ ոյն քնեցաւ պատ-
ճառ որ՝ նորա փոքրիկ մարմինը, որի վրայ
կպցրած էր ահագին գլուխ, չէր գիմանում
մեծամեծ աշխատանքի։ Երազի մէջ տեսաւ
իւր սիրական շունը, որ մնացել էր Ահաւ-
ցիկ առանը եւ որն պատճառ էր եղել այդ

հրաշալի հողաթափները ձեռք բերելու շու-
նը ասաց նորան, «Սիրական Մուք, դու դեռ
եւս չըգիտեսքո հողաթափների զօրութիւնը։
բայց իմացած եղիր, որ եթէ երեք անգամ
պտուտ գաս նորա կրունկի վրայ, կարող ես
թուչել ու գնալ այնտեղ, ուր որ կամենում
ես։ իսկ ցուպդ քեզ կցուցնէ գետնաթաղ
գանձերը։ ուր որ թաղուած է ոսկի՝ այնտեղ
նա երեք անգամ կըսիէ գետնին, իսկ ար-
ծաթ թաղած տեղը՝ երկու անգամ։»

Երբոր քնէն զարթեցաւ, Գաճաճ Մուքը
սկսեց մտածել թէ՛ այդ ի՞նչ հիանալի ե-
րազ էր, որ տեսայ, ու կամեցաւ ստուգել
ցնո՞րք է այդ, թէ՛ իսկութիւն։ եւ այդ
դիտմամբ հագաւ հողաթափները, մի ոտը
բարձրացրեց, եւ աշխատում էր միւսի կը-
րունկի վրայ պտուտ գալու։ Բայց հողա-
թափները այնքան մեծ էին եւ նորա տկար
ոտքի համար այնքան ծանր էին, որ նա
շատ դժուարանում էր երեք անգամ պտուտ
գալ։ եւ զարմանալու բան էլ չէր այգ։ նո-
րա ահագին գլուխը մէ՛կ այս կողմն էր
հակում նորա մարմինը, մէ՛կ այն կողմ։

Խեղճ տղան քանի քանի անգամ ընկաւ
գետնին ու քիթը ցաւեցրեց։ բայց նա չէր
յուսահատվում վերջապէս այնպէս սուլորե-

ցաւ, որ արդէն կարողանումէր երեք անգամ պտուտ գալ: Անիւի պէս պտուտ եկաւ կրունկի վրայ եւ ցանկացաւ մօտիկքաղքներից մինը հասնել: Հողաթափները բարձրացուցին նորան երկինք եւ նա սկսեց ամպերի վրայ արագ արագ քայլափոխել: Մուքը դեռ եւս խելքը վրան ժողոված չէր որ եկաւ կանգնեցաւ մի մեծ քաղաքի հրապարակի մէջ տեղը: Այդ հրապարակի չորս կողմը կային խանութներ, ու խուռն բազմութիւնը առաջ ու յետ էր գընում: ամեն մարդ իր գործովն էր զբաղուած: Մուքը գնաց, խառնուեցաւ ամբոխի մէջ, բայց շուտ հասկացաւ, որ աւելի լաւ էր նորան բազմութիւնէն հեռի մնալը. նորան անդադար բոթում էին երբեմն էլ հողաթափների վրան էին կոխում: եւ նա քիչ էր մնում: որ գետնին գլորուէր: Ինքն էլ շուտ շուտ դաշոյնը մէկ սորան ու մէկ նորան էր դիպցնում: այնպէս որ՝ կարող էին անզգաստութեան համար մի լաւ ծեծել:

Երկար ժամանակ Գաճաճ—Մուքը մտածումէր թէ ի՞նչ պէտք է անել, որ մի փոքր փող ճարէ: Թէ եւ կախարդական ցուպ ունէր, որ կարող էր նորան գետնաթաղ փո-

ղեր գտնել տալ բայց ի՞նչ հնարով իմանար, թէ ուր է այդ տեղը. թէ եւ նա ինքնիրանինչպէս մի չնաշխարհիկ արարած կարող է ցոյց տալ մարդոց եւ դորանով փող ճարել, բայց Մուքը այնքան անձնամիրութիւն ունէր, որ չէր յօֆարիլ այդպիսի ստոր հնարներով փող դադելու: Վերջապէս նա մտածեց իր ստերի արագութեամբը մի շահաւետ պարապմունք ճարել: «Նատ կարելի է, միտք էր անում նա, իմ հողաթափները կը տան ինձ հնար իմ ապրուստը ձեռք բերելու»: Եւ մտքի մէջ հաստատ որոշեց սուրհանդակի պաշտօն պտրելու: Նորան թվում էր, որ այդպիսի պաշտօնը առաւելապէս սուլթանին է հարկաւոր. եւ այդ պատճառով ուղիղ դէպի արքունի ապարանքը գնաց: Դրան մօտ կանգնած էր մի պահապան զինուոր, հարցուց նորան. «Ինչ ես ուզում»: Մուքը պատասխանեց՝ «թագաւորի արքունիքի մէջ պաշտօն ուզումն ստանալ. ու պահապանը ցոյց տուեց նորան ներքնապետի բնակարանը: Գաճաճ—Մուքը ներկայացաւ ներքնապետին եւ ասաց որ ցանկանումէ սուլթանի սուրհանդակը լինել, եւ նորին մեծութեան հրամանները ուր որ պէտք լինի, կարող է շատ շուտ հասցնել: Ներքնապետը

ոտքից գլուխ նայեցաւ Մուքի վրայ ու ասաց՝ «Ո՞վ թշուառական, այդ պատիկ ոտերովդ ինչպէս կարող ես սուլթանի սուրհանդակը լինել. գնա կորի՞ր աչքէս. ես ժամանակ չունիմ ամեն յիմարի հետ երկայն—բարակ խօսելու»։ Գաճաճ—Մուքը հաւատացնումէր նորան, որ ոչ մի սուրհանդակ իրանից աւելի արագ վազել չէ կարող եւ խնդրեց որ փորձ փորձեն։

Այս առաջարկութիւնը թէ եւ ծեծազելի երեւցաւ ներքնապետին, այնու ամենայնիւ զբոսանքի համար, յօժարեցաւ նոյն խսկ երեկոն փորձել նորա ոտերի արագութիւնը ուրիշ սուրհանդակների հետ, տարաւ նորան արքունի խոհանոցը, հրամայեց կուշտ ուտեցնեն ու խմցնեն նորան, եւ ինքը գնաց արքունի պալատը, որ Գաճաճ—Մուքի խնդիրը սուլթանին յայտնէ։ Սուլթանը ուրախ բնաւորութեան տէր մարդ էր. նորան շատ հաճելի երեւցաւ, որ ներքնապետը զանազան հնարներ է պտրում նորան զբօսեցնելու։ Հըրամայեց իւր ապարանքի ետեւը մի մարդի վրայ ասպարէզ պատրաստեն, իւր ամեն պաշտօնատրաներին այդ հանդիսին հրաւիրեն. իսկ Գաճաճ—Մուքին անուշկ երակուրներով կշտացնեն։

Սուլթանը այդ երեկոյի տեսարանի մասին պատմեց իւր իշխաններին ու իշխանուհիներին. նոքա պատմեցին իրանց սպասաւորներին. սպասաւորները իրանց բարեկամներին ու ազգականներին, այդ կերպով իրիկնապահին ամբողջ քաղաքի բնակիչները չաւարտեցան մարդի վրայ, որ տեսնեն թէ ինչպէս պիտի վազէ Գաճաճը։

Երբոր սուլթանը իւր բոլոր ընտանիներով ու զաւակներով քաղմեցաւ յատկապէս այդ հանդիսի համար շինած բարձրաւանդ ակի վրայ, Գաճաճ—Մուքը բազմախուռն ամբոխի մէջէն դուրս գալով, սիրուն շարժուածքով եւ քաղաքավարութեամբ գլուխ տուեց նոյն եւ պալատականներին։ Փոքրիկ երեխային տեսնելով, ժողովուրդը ցնծալիր ծափահարութենով եւ աղազակով օդը թնդացուց, վասն զի այդ առաջին անգամն էր, որ մարդիկ տեսնում էին այդպիսի չնաշխարհիկ արարած։ Երեւակայեցէք ձեզ մի ահագին գլուխ փոքրիկ մարմնի վրայ հաստատած, չսփազանց լայն վարտիք եւ լոդիկ, երկայն դաշոյն՝ խրած գօտիի ետեւ, մանրիկ ոտեր ահագին մեծութեան հողաթափների մէջ, — այս ամենը միասին առած, ծիծաղութուացնում էր բազմախուռն ամբոխին,

բայց Գաճաճ—Մուքը ամենեւին ըրխռովլեցաւ
ժողովրդի ծափ—ծիծաղէն ու կատակներէն:
Իւր ցուպի վրայ թեք ընկած հպարտ հպարտ
սպասում էր իւր ախոյեանին: Գաճաճ—Մու-
քի ցանկութեամբ այդ պայքարի համար ներք-
նապետը ընտրել էր սուրհանդակներէն ա-
մենալաւին, որ Մուքի մօտ կանգնած, սպա-
սում էր նշանին: Ամարդան իշխանը իւր քո-
ղովնշան տուեց, ու սուրհանդակները սկսան
մարգի վրայ այնպէս արագ վազելու, ասես
թէ, երկուսն էլ մի մի նետ լինէին՝ հմուտ
ձեռքով արձակած աղեղէն:

Խսկըան Մուքը թոյլ տուեց, որ ախոյեանը
բաւականին տարածութիւն առաջէ իրմէն,
բայց յետոյ «չո՛» ասելով հողաթափներին,
ոչ միայն նորա ետեւէն հասաւ, այլ եւ ան-
ցաւ նորանէն, եւ արագ արագ վազելով, հա-
սաւ նպատակին ու կանգնեցաւ. շատ ժա-
մանակ անցնելէն յետ, նորա ախոյեանը,
ծանր հեւալով ու սաստիկ յոգնած, կարո-
զացաւ գալ: Հանդիսատեսները ապշած մնա-
ցին: Ամենից աւած սուլթանը սկսաւ ծա-
փահարել, եւ նորանից յետ բոլոր բազմու-
թիւնը ծափահարեց, աղաղակելով՝ «Կեցցէ՝
Գաճաճ—Մուքը, քաջափաղ սուրհանդակը»:
Գաճաճ—Մուքին առօք—փառօք տարին

կանգնեցուցին սուլթանի առջեւ. նա ընկաւ
թագաւորի ոտերին ու ասաց՝ «Ո՞վ վեհա-
փառ թագաւոր, ինչ որ այժմ տեսար, այդ
իմ հմտութեան ամենափոքր մասն է՝ ես
կարող եմ աւելի նշանաւոր բաներ քեզ ցուց-
նել՝ կըբարեհամի՞ս արդեօք ընդունել ինձ
ի թիւս քո սուրհանդակներին»: Սուլթանը
պատասխանեց՝ «Սիրելի Մուք, գու կըծա-
ռայես իմ առջեւ, եւ ո՞չ մի քայլափոխ ին-
ձանից չես հեռանալ. տարեկան ոռնիկդ կը-
լինի հարիւր ոսկի դաշեկան, եւ իմ գլխաւոզ
աւագանիի հետ միասին սեղան կընատիս».

«Փառք Աստուծոյ, վերջապէս գտայ ես իմ
վաղուցուայ պտրած բաղդը», ասաց Գա-
ճաճ—Մուքը: Նա հոգւով չափ ուրախ էր,
որ սուլթանի առջեւ շնորհ է գտել, եւ նո-
րա գաղտնի բանագնացութեանց մէջ ծան-
րակշիռ պաշտօն է կատարում: Եւ իրաւ որ
նա իւր թագաւորի հրամանները ճիշդ եւ
շուտ էր կատարում:

Սուլթանի գրանիկները ատելով ատեցին
խեղճ Գաճաճին, որ իւր ոտերի արագութեան
պատճառաւ թագաւորի սիրելին էր գարձել.
զանազան զրպարտութիւններ ու չարախօսու-
թիւններ տարածելով նորա մասին՝ կամե-
նում էին թագաւորի աչքէն հանել. բայց

Նոցա ամեն ամօթալի աշխատանքը ի զուք
կորան, վասն զի թագաւորը պինդ համոզ
ուած էր նորա մուերմութեանը:

Մուքը հասկացաւ, որ իրան ասում են,
եւ ամեն հնար գործ են դնում վնասելու.
բայց որովհետեւ ի բնէ նա բարեսիրտ էր, չէր
ուզում վրէժինդիր լինիլ նոցա, այլ ընդ-
հակառակն, միտք էր անում թէ՝ ի՞նչ բա-
րերարութիւններ անէ, որ նոցա սիրտը գէ-
պի իրան քաշէ, եւ այդ դիտմամբ հնար էր
պտրում շատ փող ձեռք ձգել, որ առաջո-
րէն թշնամիններուն ընծայէ: Յանկարծ նորա
միտքը եկաւ կախարդական ցուպը:

Ֆօղովրդի մէջ հինուց աւանդութիւն կար,
երբ թէ այժմուայ սուլթանի հայրը, ասսպա-
տակող թշնամիններէն երկիւդ կրելով, իւր
բոլոր հարստութիւնը գետնի մէջ թաղել է,
եւ այդ անցըէն յետ անմիջապէս ընկել մե-
ռել է ու կարողացած չէ՝ այդ թաքուն տեղը
ժառանգին ցուցնելու: Երբ այս լուրը ընկաւ
Մուքի ականջը, էլ այնուհետեւ առանց կա-
խարդական ցուպին նա ոչ մի տեղ չէր գը-
նում, այլ միշտ առնում էր հետը որպէս
զի, անցնելով այն տեղի փրայէն, ցուպը ցոյց
տայ նորա գանձի թաղուած տեղը:
Մի օր, իրինագէմին, թագաւորական պար-

տէզի խօս տեղերը շրջելիս, յանկարծ ցուպը
ձեռքէն դուրս ելաւ ու գնաց գետնին երեք
անգամ շփուցաւ: Մուքը հասկացաւ թէ՝
այդ ի՞նչ կընշանակէր, եւ իսկոյն հանեց գա-
շոյնը ու չորս կողմը բասծ ծառերի վրայ նը-
շան արաւ, եւ ինքը գնաց ապարանք. ծա-
րեց թի ու բահ ու սպասեց մինչեւ գիշեր:

Թաղած գանձը փորելով դուրս հանել
գետնէն շատ դժուար էր Գաճաճ—Մուքի
համար. նորա ձեռները մանր ու թոյլ էին,
իսկ բահը մեծ էր ու ծանր: Թէ եւ երկու
ժամ անխոնջ աշխատեցաւ, բայց երկու թիզ
անգամ չըկարողացաւ գետինը փորել: Նատ
ճիգ թափելէն յետ, վերջապէս, նորա բահը
մի կարծր բանի դիպաւ, որից մետաղի ձայն
էր գալիս: Մուքը խրախուսուած, նոր ու-
ժող սկսեց աշխատել, եւ շուտով հասաւ
երկաթէ կափարիչի: Խսկոյն իջաւ փորած
փոսի մէջ եւ տեսաւ որ այդ կափարիչով ծած-
կած էր մի աշագին կաթսայ ըերնէ—բերան
ոսկի գահեկաններով լցուած: Մուքի ոյժը
չըպատեց բոլոր կաթսան բարձրացնելու, եւ
այդ պատճառաւ ձեռքը մոցուց նորա մէջ
եւ ագուռ ագուռ սկսաւ գահեկանները հա-
նելու ու լայն վարտիքի, գոտիի ու լոդիկի մէջ
ածելու, մէկ խօսքով այնքան ոսկի առաւ,

որքան որ կարողացաւ բարձրացնել. իսկ մնացածը հողով ծածկեց, վրան էլ չորացած աերեւներ ցանեց, ու գնաց ապարանք: Կաւէ որ հագին էր կախարդական հողաթափը, ապա թէ ոչ՝ այդչափ ծանր բեռնով նա տեղէն անգամ շարժել կարողանալու չէր: Զիարդ եւ իցէ հասաւ իւր սենեակը եւ գտած ոսկիները բարձի տակ պահեց:

Այսպէս հարստացած, Մուքը կարծում էր թէ՝ այնուհետեւ նորան շատ հեշտ պիտի լինի փողի զօրութեամբ իւր ամեն չարակամներին հաւատարիմ բարեկամներ դարձնել: Այս բանից արդէն դիւրին է մակաբերելը, թէ ո՞րքան անփորձ մարդ էր խեղճ Գաճաճ—Մուքը: Ո՞վ է կարողացել փողով բարեկամ ճարել, որ նա էր ուզում: Ո՞չ, ի՞նչպէս երջանիկ մարդ պիտի լինէր նա, եթէ կրունկի վրայ երեք անգամ պտուտ գար, ու այդ գանձը հետը առած, հեռու հեռու փախչէր:

Գաճաճ— Մուքը սկսեց ոսկին ագուռներով աջու ձախ ցրուել, եւ դորանով նախանձողների թիւը շատացնելէն զատ, ուրիշ ոչինչ օգուտ ցունեցաւ, Գլխաւոր խոհարար Ախուլին ասում էր, որ նա սուտ փող է շինում: Աչմէդ ներքնապետը ասում էր թէ՝

նա խարելով առնումէր թագաւորէն: Աբգալլա գանձապետը, Մուքի ոխերիմ թըշնամին եւ շատ անգամ գանձարանէն փող գողացողը ասումէր թէ՝ նա արքունի գանձարանէն է գողանում: Սոքա ամենքը եւ հետերը Քօրզուխ տակառապետը դաւադիք եղան խեղճ Գաճաճ—Մուքի դէմ: Քօրզուխը տխուր երեսովներկայացաւ սուլթանին: Սուլթանը հարցուց՝ «Ինչու ախուր ես:» Եւ նա կեղծաւորութեամբ պատասխանեց՝ Ո՛վ, տէր իմ, ի՞նչպէս տխուր չըլինիմ: Երբորքո երեսի շնորհըէն ես բոլորովին զրկած եմ: «Այդ ի՞նչ գատարկ բաներ է ասածդ, ասաց սուլթանը. ո՞ր օրից իմ բարեհամութեան արեգակը դադարել է իւր ճառագայթներովը քեզ լուսաւորելու:» Քօրզուխը պատասխանեց, որ սուլթանը ոսկու մէջ թաթախեցնում է իւր գլխաւոր սուրհանդակին, իսկ մնացած իւր հաւատարիմ ծառաներին ոչինչ չէ շնորհում:

Այս լուրը շատ զարմացուց սուլթանին. նա հրամայեց, պատմել Գաճաճ—Մուքի առատաձեռնութեան մանրամասնութիւնքը. միւս դաւադիրներն էլ այդ միջոցին կամաց կամաց մօտեցան եւ թագաւորի սրտի մէջ անզգալի կերպով կասկած ցանեցին խեղճ

ու պարզամիտ Մուքի դէմ, եւ հաւատացուցին նորան, որ գլխաւոր սուբհանդակը անշուշտ գանձարանը կողոպտած պիտի լին: Այդ բանի մէջ ամենէն աւելի որախ էր գանձապետը, նա շատ լաւ գիտէր, որ գանձարանի մէջ շատ փողէ պակաս, եւ միշտ ահ ու գողի մէջ էր, որմի օր հաշիւ կըպահանջեն նորանից եւ գողութիւնը երեւան կելնէ: Սուլթանը հաւատաց իւր պաշտօնատարների արած ամբաստանութեանը եւ հրամայեց նոյնա, որ Մուքի ամեն քայլափոխը արթուն հսկեն ու գողութեան մէջ բռնեն:

Հետեւեալ գիշերը Գաճաճ—Մուքը առաւ բահը ու թաքուն մոտաւ պարտէզ, որ նորից ոսկի առնէ, վասն զի այն անգամուշայ տարածը արդէն սպառել էր սուտ բարեկամներին բաժանելով: Գլխաւոր խոհարար Ախուլին եւ գանձապետ Աբդալլան գնացին նորաետեւէն, եւ նոյն իսկ վայրկենին, երբ Մուքը ուղում էր ոսկին կաթսայէն հանել ու լօդիկի մէջ ածել, ընկան վրան, ձեռք ու ոտքը կապած՝ բերին կանգնեցուցին թագաւորի առջեւ: Նորին վեհափառութիւնը բարկութենէն կրակ դարձաւ—նորան անուշ քնէն էին զարթացրել—այս անգամ շատ անիառ ոռւնակ կերպով ընդունեց սիրական պուրա

հանդակին եւ հրամայեց որ նորա վրայ իսկոյն դատաստան բանան: Կաթսան հանեցին գետնէն եւ բերին սուլթանի առջեւ: Գանձապետը ասաց, որ նա Մուքի վրայ հասաւ հէնց այն ըոպէին, երբ նա ոսկիով լի կաթսան ուղում էր գետնի մէջ թաղելու:

Սուլթանը հարցուց մեղապարտին՝ ճշմարիտ է, ինչ որ ասում են այս մարզիկը քո դէմ, եւ կամ՝ ո՞րտեղից առել ես գու այդքան ոսկի դահեկաններ: Գաճաճ—Մուքը բայց սիրութիւն խոստովանեցաւ, որ ոսկիները գտել է պարտէզի մէջ, եւ այժմ ուղում էր ոչ թէ թաղել, այլ թաղած տեղէն հանել նոցա:

Այս խօսքերը լսելով, ներկայ գտնուղները ծիծաղեցան, իսկ սուլթանը եւս առաւել բարկացաւ Մուքի լրբութեան վրայ ու կանչեց: «Գարշելի դու, բաւական չ'է, որ թագաւորիդ կողոպտեցիր, այժմ կամենում ես նորան խարե՞լ եւս: Աբդալլա գանձապետ, ասա ինձ, իմ գանձարանի մէջ ճիշդ այդքան փողէ պակաս, որքան որ կայ այս կաթսայի մէջ»:

Գանձապետը պատասխանեց, որ նա պատրաստ է երդում անելու, որ այդ արքունի փող է, վասն զի, քանի մի ժամանակէ իւլեր,

արքունի գանձարանի մէջ մեծ պակասութիւն
է նկատել:

Այն ժամանակ սուբթանը հրամայեց, որ
Գաճաճ—Մուքի ձեռքն ու ոտքը շղթայեն
եւ ձգեն բանտ, իսկ ոսկին տուեց գանձա-
պետին, որ տանէ, գանձարանը դնէ: Արդալ-
լան շատ գոհ մնաց, որ այդ փորձանքը գըլ-
խէն անցաւ, կաթսան տուն տարաւ ու ըսկր-
սեց մէջի ցոլուն ոսկի գահեկանները համ-
րել: Բայց թշուառականը այն մասին լուռ
կեցաւ ու մարդու բան չասաց, որ կաթսայի
յատակումը կար մի տոմսակ՝ մէջը այսպէս
գրած. «Թշնամին ասպատակեց իմ երկիրը,
եւ այդ պատճառաւ ես ստիպուած եղայ իմ
գանձի մեծ մասը գետնաթաղ անել: Ով որ
կրգտնէ այն եւ իսկոյն իմ որդուն չի տալ,
պարտական լինի Աստուծոյ ահեղ դատաս-
տանին»:

Սուլուն Մուքի:

Գաճաճ-Մուքը, բանտի մէջ նստած տըրտ-
մագին մոքերով մաշվում էր. նա շատ
լաւ գիտէր, որ օրէնքով արքունի գանձ գո-
ղացողը մահու դատակնիր պիտի կրէ, այ-
նու ամենայնիւ նա չէր ուզում իւր ցուպի

զօրութիւնը յայտնելու, վախենալով որ՝ հո-
ղաթափներէն եւս կըզրկուի: Բայց, տարա-
բաղդաբար, բանտի մէջ հողաթափները քո-
լորովին անօգուտ էին նորան, քանի քանի
անգամ նա փորձ փորձեց կրունկի վրայ
պտուտ գալու, բայց իզուր. ծանր շղթա-
ները արգելառիթ էին. Միւս օր Մուքին
յայտնեցին, որ նորա վրայ մահու դատա-
կնիք պիտի կարգան: Ողորմելի տղան միտք
արաւ, որ լաւ է ցուպէն զրկուի, քանի թէ խայ-
տառակ մահուց մեռնի. եւ խնդրեց դահիճ-
ներին, որ երթան ասեն թագաւորին, որ
«Մուքը կամենում է քեզ մի գաղտնիք յայտ-
նել»: Սուլթանը հրամայեց, որ Մուքին բե-
րեն, առջեւը կանգնեցնեն. եւ Մուքը յայտ-
նեց նորան ցուպի կախարդական զօրութիւնը:
Թագաւորը իսկզբան չըհաւատաց, բայց Մուքը
խնդրեց նորան, որ մահու դատակնիքը վրան
ըրկարդացած, փորձ փորձեն: Սուլթանը
յօժարեցաւ, եւ հրամայեց թագուն տեղ
քանի մի ոսկի թաղեն. եւ յետոյ տարաւ հետո
Մուքին ու հրամայեց պտրել: Նատ ժամա-
նակ վրայ չանցած, թագած ոսկին գտնուե-
ցաւ. վասն զի ցուպը, չէնց թագաւորի ներ-
կայութեանը, դուրս պրծաւ Գաճաճի ձեռ-
քէն ու երեք անգամ խփեց գետնին: Այն

Ժամանակ թագաւորը համոզուեցաւ, որ
գանձապետը նորան խաբել է. եւ արեւելեան
աշխարհների սովորութեամբ ուղարկեց նո-
րան աղյուսէն ժաղանքն, որ նշանակում էր
թէ՛ նա պարտաւոր է ինքն իրան խեղդա-
մահ անելու. իոկ Գաճաճ—Մուքին ասաց,
«Կեանքդ քեզ պարզեւում եմ. բայց որով-
հետեւ նկատում եմ; որ բայց ցուպէն դու
մի այլ գաղտնիք եւս ունիս, որ ինձ չըյայտ
նեցիր, այդ պատճառաւ քեզ այնքան կը-
թողնեմ բանտի մէջ արգելուած, մինչեւ որ
չըյայտնես ինձ պատճառը, թէ ինչո՞ւ արագ
վագում եա»: Մի տափանական գիշեր միայն
մնալով բանտի մէջ Մուքը այնպիսի գարշանք
էր ստացել նորամէն, որ իսկոյն յայտնեց
թագաւորին, որ ոտերի արագութեան միակ
պատճառը հողաթափներն էին. բայց սուլ-
թանէն թաքուն պահեց նոցա այն յատկու-
թիւնը, որ կրունկի վրայ երեք անգամ պը-
տուտ—գալով, կարելի էր թռչիլ: Սուլթանը
փորձի համար հագաւ հողաթափները ու խե-
լագարի նման սկսաւ վազելու պարտէզի
մէջ. ուզում էր կանգ առնել, բայց չէր կա-
րողանում հողաթափները կանգնեցնել: Գա-
ճաճ—Մուքը, սիրտը պաղեցնելու համար,
լուռ էր կեցել ու չէր յայտնում նորան, թէ

ինչպէս պէտք է կասեցնել. ողորմելի սուլ-
թանը այնքան վազեց, մինչեւ որ շունչը կը-
տըրուած՝ գետնին փռուեցաւ:

Նրբոր ուշքը վրան եկաւ, սուլթանը սաս-
տիկ բարկացաւ Գաճաճ—Մուքի վրայ, որ
թոյլ տուեց նորան այդքան շատ վազելու:
«Որովհետեւ ես խոստացայ ինայել քո կեանքը
եւ ազատութիւն տալ քեզ, ահա կատարում
եմ խօսքս. տալիս եմ քեզ տասներկու ժամ,
եթէ այդ միջոցին իմերկրէն գուրս չերթաս,
իսկոյն կը Հրամայեմ քեզ կախել»: Հողաթափ-
ները ու ցուպը թագաւորի հրամանով տա-
րին ու գրին արքունի թանգարանի մէջ:

Գաճաճ—Մուքը թողեց սուլթանի երկիրը
այնպէս ազքատ, ինչպէս որ մտնելու ժամա-
նակն էր. շատ սգա՞ իւր ցնորամիտ շուայ-
լութիւնը եւ շատ լացեց իւր անբազդ գլխի
վրայ. եթէ նա մարդոց քիչ հաւատար ու քիչ
սիրէր, անշուշտ այդքան աղէտք գալու չէին
նորա գլխին, եւ նա մինչեւ վերջը փառք ու
պատուով պիտի մնար թագաւորի ապարանքի
մէջ. նորա բաղդէն սուլթանի երկիրը շատ
ընդարձակ չէր. իննը—տասը ժամէն կարո-
ղացաւ մինչեւ սահմանագլուխը հասնել, թէ եւ
նորա համար արգէն գժուար էր առանց կա-
խարդական հողաթափների ման գալը:

Սահմանը որ անցաւ, նա չուզեց արահետ ճանապարհով երթալ այլ մի կողմ շեղուեցաւ ու մտաւ թաւուտ անտառ, եւ կամենում էր մինչեւ մահը այնուեղ մնալ, հեռի մարդկանցից, որոնց նա ատելով ատում էր; Անտառի մէջ մի այնպիսի տեղ գտաւ, որ բոլորովին յարմար էր նորա ցանկութեան. վճիտ աղքիւրը, որ անցնում էր ստուերախիտ թրգենիների մէջէն եւ սիզաւէտ կակուղ մարդը, ասես թէ, չըաւիրում էին նորան հանգչելու բայց նա աչքով աչք չունէր բնութեան գեղեցկութիւնները վայելելու: Ընկաւ գետնի վրայ ու մոքի մէջ հաստատ որոշեց տեղնի տեղ սովորուկ մեռնել: Մահին սպասելով, կամաց կամաց նորա քունը տարաւ. անուշ քնից յետոյ նորա փորը քաղցածեցաւ: Մուքը միտք արաւ. «Քաղցած մեռնելը շատ դժուար ու յիմար բան է:» Աչքը չորս կողմը դարձուց ու փորը կշտացնելու բան պտրեց:

Տեսաւ որ՝ այն ծառը, որի ստուերի տակ պառկելէր, լիքն է հասուն թուզերով: Մագըլցի բարձրացաւ նորա ոստի վրայ ու ախորժակելէր, կերաւ անուշ պտուղները: Քաղցը հանգարտեցնելէն յետ, գնաց աղքիւրի մօտ, որ ծարաւն էլ կտրէ. բայց ովկարող էնկարագրել նորա սարսափը, երբ ջրի մէջ տեսաւ, որ ե-

րեսի վըայ բաած էր ահագինքիթ, իսկ գըլիին՝ երկայն ականջներ: Զեռքը յուսահատաբար ականջին տարաւ լիմանայ թէ իրաւ այնպէս երկայն էին, ինչպէս որ ջրի մէջ էին երեւում, եւ համազուեցաւ որ առ սակաւը մէկ կանգուն կըլինէին:

«Վայ ինձ, կանչեց նա, ես արժանի եմ էշի ականջներ կրելու, վասն զի էշի նման ոտնակոխ արի իմ բաղզը»: Ցխուր ման եկաւ, նա ծառերի տակ ու նորից քաղցածեցաւ, որովհետեւ անտառի մէջ ուրիշ ուտելու պտուղներ չը կային, նա դարձեսլ քաղեց թուզ ու կերաւ: Երբոր երկրորդ անգամ էլ կշտացաւ, գլխին դրեց իւր փակեղը այն դիտմամբ, որ տեսնէ՝ կա՞րող է արդեօք զիարդ եւ իցէ նորա տակը պահել երկայն ականջները. ու դիպչելով ականջներին, նորան այնպէս թուզեցաւ: որ նոքա կորել էին: Վազէվազ մօտեցաւ աղքիւրին, որ մէջը իւր պատկերը տիսնէ, եւ տեսաւ որ, իրաւ, նորա ականջները նախկին ձեւն էին ստացել:

Այն ժամանակ նա հասկացաւ որ՝ անտառի մէջ երկու տեսակ թրգենի էր բսնում, մինի պտուղը քիթու ականջներ էին երկարացնում, իսկ միւսինը, նոցա բնական ձեւն էին տալիս: Եւ ուրախութեամբ իմացաւ, որ ծակատա-

եւ առաջ գնաց՝ ուրիշ ուտելու պաշարներ
գնելու. իսկ Գաճաճ—Մուքը վազէվազ հե-
ռացաւ ապարանքէն, որ երբ սուլթանի քիթը
ու տկանցները երկայնանան, նորան չըրբո-
նեն ու չը գատապարտեն ինչպէս չարագործի:

Այն օր ճաշի վրայ սուլթանը շատ ուրախ
էր. քանի՛ քանի անգամ իւր բարեհաճու-
թիւնը յայտնեց գլխաւոր խոհարարին որ
գիտէ նորա սեղանի համար միշտ հազուա-
գիւտ եւ համել ուտելիք ճարել. իսկ խոհա-
րարը, իմանալով որ՝ այն օր նորա համար ա-
մենապատուական աղանդեր ունի պատրաս-
տած, անձնաբաւականութեամբ ասաց նո-
րան. «Ձե՛րդ վեհափառութիւն, այդ դեռ եւս
ամենը չէ. դուք տեսէք վերջը ինչ կը ինի:»
Իշխանազները ու գշանոները հետաքրքիր էին
իմանալու արդեօք այդ ի՞նչ հիանալի բան
պիտի լինի. որ խոհարարը պատրաստել է
նոցա համար, եւ երբ որ բերին ափսէն,
հասուն թզերով լցրած, ամենը հիացման
աղաղակ բարձրացուցին: «Ա՛յս, այդ ինչ
հասուն ու գեղեցիկ թզեր են» ասելով: Սուլ-
թանը իւր առջեւ կանչեց գլխաւոր խոհա-
րարին յայտնեց նորան իւր առանձին շնորհը.
եւ ապա սկսաւ իւր ձեռքով բաժանել ա-
մենին պտուղները: Իշխանազներին ու գըշ-

գիրը նորան անտէր թողուցած չէ. եւ այս
անգամն էլ տալիս է նորան հնարիւր վիճակը
բարեռքելու: Այդ երկու տեսակ թուզերից
քաղեց այնքան, որքան որ կարող էր տանել
եւ հետը առած, գնաց այն երկիրը, որտեղից
նորան արտաքսել էին: Մօտաւոր քաղաքը
հասնելով այնպէս յաջողակ ծպտեցաւ, որ
անհնարին էր նորան ճանաչելը, եւ այնու-
հետեւ գնաց սուլթանի մայրաքաղաքը:
Տարուայ այն եղանակն էր, երբ պտուղները
հազուագիւտ էին: Իմանալով որ՝ խոհարարը
թագաւորի սեղոնի համար միշտ հազուա-
գիւտ բաներ է գնում, նա թզերով լիքը կո-
ղովը տարաւ դրաւ ապարանքի դրանը, ինքն
էլ նստաւ մօտը: Վրայ շատ ժամանակ չան-
ցած, թագաւորի խոհարան էլ եկաւ, աչքէ
անցուց ուտելու պաշարները, որ ծախողները
բերել շարել էին ապարանքի առջեւ, եւ վեր-
ջապէս նկատեց Մուքի կողովը: «Ահա՛ հա-
զուագիւտ միրգ, ասաց նա մտքի մէջ, նո-
րին վեհափառութիւնը շատ կ'ուրախանայ:

Ա՛յ տղայ, ի՞նչ ես ուզում թզերիդ համար:»
Գաճաճ—Մուքը շատ չափաւոր գին պահան-
ջեց իւր տպարանքի համար, որն խոհարարը,
առանց ծախս անելու, վճարեց նորան. կո-
ղովով թուզը տուեց հետի ծառայի ձեռքը

իոներին տուեց երկ-երկու թուզ, աւագա-
նիին՝ մի, մի՝ իսկ մնացած ամենը իրա առ-
ջեւ քաշեց, եւ սկսեց ագահաբար ուտել:

«Հայր, աղաղակեց Ամարիս դշխոն, այդ
ինչ կերպարանք է, որ դու ունիս»: Ամենքի
աչքերը դարձան սուլթանի վրայ, ու զար-
մանալով տեսան նորա երկու ականջները, որ
փակեղը բաձրացրել էին, եւ երկայն ըիթը,
որ շուրթերի վրայէն դէպի մօրուքն էր կա-
խուած: Հիացքավու սարսափանքով մէկմէկու
վրայ նայեցան հիւրերը—ամենքն էլ այդ
տեսակ էին զարդարած, թէ' եւ նոցա քիթ
ու ականջները սուլթանի նման մեծ չէին,
պատճառ որ՝ նորա չափ շատ կերած չէին:

Դժուար չէ հասկանալը, թէ ի՞նչ շփոթի
մէջ էին թագաւորը եւ նորա մօտի մարդիկը:
Խոկոյն մարդիկ ուղարկեցին, ու ողբան բը-
ժիշկներ կային մայրաքաղաքի մէջ, ամենքին
բերել տուին: Եկան հանդիսացան աշագին
բազմութիւն բժիշկների ու վիրաբոյժների,
եւ նոցա հրամանավ լիտրներով գեղահատեր
ու գոյլերով ճարեր ու գրուանքաներով փո-
շիներ բերուեցան, բայց ամենը անօգուտ
եղան: ոչ քիթերը կարճացան մարդոց եւ
ոչ ականջները: Դրանիկներէն մինի ականջ-
ները ու քիթը մինչեւ անգամ փորձեցին

կտրելու, բայց այդ եւս ոչինչ օգուտ չը
տուեց: կտրած անդամները նորից բան:

Մուքը քաղաքի մէջ պահուած, լսում էր
այդ ամեն անցքը: «Այժմ իմհէերթը հասաւ»,
մտածեց նա: Գլխաւոր խոհարարէն ստա-
ցած փողով գնեց կարդացողի հայաներ,
կզակին կապեց երկայն այծի մօրուք, եւ այդ-
պէս կերպարանափոխուած, պարկով թզերը
շալակած, ու զիղ դէպի սուլթանի ապարանքը
գնաց: դռնապանին յայտնեց, որ ինքը նո-
րեկ բժիշկ է եւ իւր արուեստին շատ հմուտ,
եւ խնդրեց, որ նորա գալու մասին թագա-
ւորին իմացում տայ: Ներս որ մտաւ, ա-
ռաջ ու առաջ նորան չէին ուզում հաւա-
տալ, բայց նա զիարդ եւ իցէ համոզեց
իշխանուհիներէն մինին, որ մի հատ թուզ
ուտէ: իշխանուհին յօժարեցաւ եւ կերաւ.
ու նորա քիթը եւ ականջները ստացան ա-
ռաջուայ բնական մեծութիւնը: Այն ժա-
մանակ թագաւորը բռնեց նորա ձեռքէն ու
լուռ մունջ տարաւ իրա առանձնասենեակը,
եւ այնտեղ մի դուռ բացեց, որ տանում
էր դէպի արքունի թանգարանը ու ասաց:
«Ահա իմ ամեն գանձը քո առջեւն է: առ
ինչ որ սիրտդ կուզէ եւ ո՞րքան որ կուզէ,
միայն թէ աղատէ՝ ինձ այս խոյտառակ

— 200 —

տգեղութենէն»։ Այս խօսքերը նուագարանի ձայնի նման ախորժալսւը թուեցան Գաճաճ — Մուքին։ Երբոր թանգարանը մուաւ, Մուքը իսկոյն գետնի վրայ տեսաւ իւր հոգալթափները եւ նոցա մօտ իւր կախարդ ական ցուպը։ Ման եկաւ թագաւորի լայնարձակ ապարանքի մէջին իւր հաւնածը ընտրել է ուգում՝ ինչպէս վարձատրութիւն իւր աշխատանքին, բայց նորից մօտենալով իւր հոգալթափներին, հապճեպով հագաւ նոցա, առաւ ցուպը, պուկեց երեսէն ուստ մօրուքը եւ ցոյց տուաւ սուլ։ Թանին արտաքսած Մուքի ծանօթ երեսը, ասելով. «Ուխտագրութագաւոր, դու արժանի ես այդ տգեղութեան, վասն զի քո մօերիմ ծառային, փոխանակ վարձատրելու, զրկեցիր ու պատուհասեցիր։ Ես թողնում եմ քեզ քո երկայն ականջները ու քիթը. թնդ ամեն օր նոքա քեզ յիշեն Գաճաճ — Մուքին»։ Այս որ ասաց, այնպէս շուտ երեք անգամ պտուտ եկաւ կրունկի վրայ եւ ցանկացաւ իւր մայրենի քաղաքը երթալ, որ սուլթանը ժամանակ չունեցաւ իւր ծառաներին օգնութեան կանչելու։

Այն օրից յետ Գաճաճ — Մուքը ճոխ կեանք է անցնում. բայց կենումէ մենակ,

վասն զի արհամարհումէ մարդոց։ Կեանքի փորձը նորան իմաստուն դարձուց, եւ չընայելով որ Կըշշի կերպարանք ունի, նա արժանի է ոչ թէ կատականքի, այլ ընդհակառակն, խորին ակնածութեան։»

Այսպէս պատմեց Հայրս, եւ ես շատ փոշմանեցայ իմ այդպիսի անվայել եւ ամօթալի վարմունքի համար Գաճաճ — Մուքի հետ։ Հայրս ինձ ներեց։ Հօրէս լսածս ամենը պատմեցի ընկերներիս, եւ մենք նորան այն աստիճան սիրեցինք, որ այնուհետեւ ոչ միայն չէինք ծիծաղում, այլ ընդհակառակն ամեն տեսնեիս, նորան աւելի էինք պատում ու մեծարում, քան թէ զադիին ու Միւֆթիին։

Ճանապարհորդները կամեցան այդ իշեւանումը ամբողջ օր անցնել, որպէս զի և իրանք, և զրաստները յոգնութիւն առնեն ու կազդուրուին։ Ամենքը ուրախ էին և զբօնում էին զանազան խաղերով։ Ճաշէն յետ հրաւիրեցին չինգերորդ վաճառականին, որ նմանապէս մի բան պատմե, վասն զի այս անգամուայ հերթը նորանն էր։ Ալի Զիղախը ասաց, որ նորա կեանքը շատ աղքատ է արկածքներով, և նորան ոչինչ նշանաւոր և արժանի ուշադրութեան բան պատահած չէ. և այդ պատճառաւ նա մտադիր է պատմէլ Սուրբ Խէմանրդէն պատմութիւնը, որ ինքն էլուրիշներիցն է լսել։

Digitized by srujanika@gmail.com Page 2403

ՍՈՒՏԻՆԵՐԱԴԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հ յոզեպոս սար ցիշուածը մատուցիսաւ *
ծաղանչէ թթվածը միջոց ուղարկել հանու

ՍՈՒՏ ԻՇԽԱԿԱՆՈՐԴԻԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵ

«Ատենոյի մամանակով մէկմէր կառ մէկմը կար (*)» մէկ ճարպիկ ու համեստ աշխերտ կար, անունը Լաբաքան։ Նորա վարպետը Աղէքսանդրիա քաղաքի մէջ իր հմտութիւնով հռչակուած դերձակ էր։ Մեզք էր ասելը, որ Լաբաքանը ծոյլ կամ իւր գործի մէջ անընդունակ էր. ընդհակառակն, նա համ շուտ էր բան—բանում։ Համէլ լաւ. բայց նա մէկ տարօրինակ բնաւորութեան տէր էր. երբեմն այնպէս ժիր ու արագ էր կարում որ ձեռքի ասեղը տաքանում։ կրակ էր դառնում, դերձանը (թել) սուլում էր եւ նո-

(*) Նախիջևանցին հէքեաթը այս խօսքերով է սկսում։ Անշուշտ, խորին հնութենէ նշխարած ձև է։

րա կարը իւր մաքրութիւնովն ու գեղեցիութիւնովն ամենից գերազանց էր։ իսկ շատ անգամ այնպէս էր պատահում որ ձեռքերը ծալած աչքերը մի որ եւ է բանի վրայ պշած՝ ամբողջ օրերով անշարժ, անգործ եւ մտածմունքի մէջ խորասուզած, մնումէր. եւ այդ ժամանակ նորա գէմքի վրայ մէկ գերբնական ու վեհապանձ բան էր նշամարվում. այդպիսի գիպուածներում վարպետն ու աշկերտները սովորաբար ասում էին՝ «Ելի մեր Լաբաքանը վրան արքայազնի կերպարանք առաւ»։

Ուրբաթ օրերը, երբ կրօնասէր տաճիկները միկիթների մէջ ազօթքները կատարած, տուն էին վերագառնում։ Լաբաքանը հանդէս էր գալիս իւր գեղեցիկ հալաւներով, որ նա ձեռք էր բներել աշխատանքով ու ինայողութիւնով։ Նորա գնացքը ծանր ու փառահեղ էր. եւ եթէ ճանապարհին ընկերներն ու ծանօթները նորան գլուխ էին տալիս, ասելով «Բարեւքեզ, սիրելի Լաբաքան. Ի՞նչպէս է քո առողջութիւնը», Լաբաքանը բարեւին բարեւով պատասխանելու տեղ, իշխանի նման աչք ու ունքերով էր բարեւում։ Վարպետը շատ անգամ ասում էր նորան. «Ա՛յս, Լաբաքան, Լաբաքան, դու ոչ հասարակ արուեստա-

ւոր՝ այլ իշխանորդի պիտի ծնէիր»։ Ու Լաբաքանը նորան պատասխանումէր՝ միթէ դու էլ նկատել ես այդ բանը։ Իմ մոքէս էլ շատ անգամ անցնումէ այդ։

Այս կերպով քանի մի ժամանակ կեցաւ Լաբաքանը. վարպետը նորա յիմարութիւնները տանումէր այն պատճառով, որ նա իւր ընկերների մէջ ամենից հմուտ ու գործունեան էր. ինքն էլ բարի տղայ էր։

Մի օր այնպէս պատահեցաւ որ Սուլթանի եղբայր Սէլիմը եկաւ Աղքասանդրիա, ու իր պահծու հալաւներից մինը ուղարկեց վարպետին, որ վրան ինչ ասես փոփոխութիւն անէ. վարպետն էլ յանձնեց Լաբաքանին, որն, ինչպէս ասացի, նորա աշկերտների մէջ ամենէն հմուտ կարողն էր. իրիկուայ դէմ երբոր վարպետն ու աշկերտները աշխատանքէ յոգնած, տուն գնացին հանգստանալու, Լաբաքանը ասես թէ մէկ գաղտնի ազգեցութենէ գրգռուած, յետ դարձաւ արուեստանոցը, ուր կախած էր սուլթանի եզրօր հալաւը, ու երկար ժամանակ նորա առջեւ կանգնած մտախոհ նայումէր, մերթ զմայլելով նորա ոսկէթել գեղեցկանկար կարուածքին եւ մերթ նորա ապրշումէ պերճ կերպասին։ Զդիմացաւ մեր խեղճ Լաբաքա-

նը, վայր առաւ կախած տեղէն ու հագաւ. հագաւ ու գնաց կանգնեցաւ հայլիի առջեւ ու տեսաւ որ այդ հալաւը ասես թէ իսկ եւ իսկ իւր իրանքի վրայ էր ձեւած։ Ու սենեակի մէջ առաջ ու յետ ման զալով ինքն իրան ասումէր՝ «Ինչո՞վ ես իշխանազնէ պակաս եմ. վարպետս էլ ամեն օր ինձ չէ՞ ասումթէ. ափսո՞ն որ իշխան ծնած չեմ։ Թագաւորական հալաւի հետ միասին Լաբաքանի սիրտը թագաւորի հաճոյքներ մտան։ Նա երեւակայեց իրան մի անյայտ թագաւորի որդի եւ մոքի մէջ որոշեց գուրս երթալ այս երկրէն, ուր կենումեն պյափիսի մարդիկ որոնք չեն կարող ճանաչել եւ գնահատել նորա մէջ թաքուցած մեծափառութիւնը։ Լաբաքանի մոքէն այսպէս անցաւ, իբր թէ մի բարերար վհուկ ուղարկել է նորան այս հոյակապ հալաւները, որից այլ եւս չէր ուզում բաժանուել։ Ուստի՛ հաւաքեց նա իւր ունիմ—ըունիմը, եւ գիշերով գուրս գընաց Աղքասանդրեայէն ու դէպի մի անորոշ աշխարհ ճանապարհ ընկաւ։

Մեր ինքնակոչ իշխանազնը ուր որ գնաւմ էր՝ ամեն տեղ զարմացնումէր մարդոց։ Նորա պերճ հալաւները, նորա սէգ ու խրոխտ քալուածքը ամենեւին համապատասխան չէին

նորա հետի ճանապարհորդելուն։ Երբ պատահումէր, որ նորան հարցնումէին թէ, ինչո՞ւ հետի ես գնում, և արաքանը խորհըրդաւորդէմքով պատասխանումէր, որ դորահամար շատ գաղտնի պատճառներ կան։ Բայց վերջապէս նկատելով, որ ոտքով ճանապարհորդելը ոչ միայն ծանր, այլ եւ ծիծաղելի է, նա գնեց մի աժանագին եւ քնծուոտ ձի, որ երկու կերպ օգտաւէտ էր նորան, նախ՝ նորա ոտերի համար թեթեւութիւն էր, եւ երկրորդ՝ նորան չէր ստիպում։ Հալաւներին ու սուտ պատուանունին յարմար քաջ ձիաւորի նման աշտանակելու, ինչու որ նա բաւական անհմուտ էր ձի հեծնելում։

Մի օր իւր Մուրֆը (ձիու անունն էր) հեծած կամաց կամաց գնումէր. յանկարծ լսեց որ ետեւից մի ձիաւոր վազելով գալիս է։ Անծանօթ ձիաւորը նորան մօտեցաւ ու խնդրեց, որ միասին երթան, վասն զի ընկերովի ճանապարհորդութիւնը, ասաց, խօսակցելով ու զուարճանալով, կարծատեւ է երեւում։ Ձիաւորը գեղեցկակազմ եւ քաղաքավարի երիտասարդ էր։ Ճանապարհորդները միմեանց բարեւեցին, ձեռք տուին եւ սկսեցին խօսել։ Խօսակցութեան մէջ օտա-

րականը պատմեց Լաբաքանին, որ նորա անունը Օմար է. որ նա Քահիրէի անբաղդ էլֆի—բէյ փաշայի եղբօրորդին է, եւ այժմ գնումէ իւր հօրեղբօր մօտ, որ նորա բերանացի կտակին կատարումն տայ։ Լաբաքանը Օմարի պէս բայցասիրոտ չէր. նա հակացուց իւր ուղեկցին, որ երեւելի ծնողաց զաւակ է, եւ միայն զուարճութեան համար ճանապարհորդութիւն է անում։

Երիտասարդները մէկզմէկու շատ սիրեցին եւ շարունակեցին միասին ճանապարհորդել։ Հետեւալ օրը Լաբաքանը հարցուց ճանապարհորդակից Օմարին՝ «Այդ ի՞նչ կըտակ է քո հօրեղբօր արածը, որ ստիպումէ քեզ ճանապարհորդել։» Եւ զարմանալով իմացաւ այս բանը. էլֆի—բէյը, Քահիրէի փաշան, մանկութեան օրերէն իւլեր իւր տան մէջ դաստիարակել է նորան. իսկ իւր հարազատ հօրն ու մօրը երեէք տեսան չէ։ Թշնամին ասպատակելով նորա երկիրները, պատերազմի մէջ երեք անգամ խորտակել է նորա զօրքը. իսկ էլֆի—բէյը, մահաբեր վէրք առած, փախել է թշնամու երեսէն։ Երբոր մահուան բոպէն մօտեցել է, նա յայտնել է իւր մերձաւորներին, որ Օմարը ոչ նորա եղբօրորդին է, այլ մի հզօր թագաւո-

ըի զաւակ է, որ աղթարի գուշակութենէն վախեցած, իւր թագաժառանդ որդուն հեռացրել է արքունիքէն, հրամայելով որ՝ մինչեւ քսաներկու տարեկան չըլինի իրաւունք չունենայ նորա դիմացը գալու: Էլֆի Բէյը ոչոքի յայտնած չէ՝ Օմարի հօր անունը, միայն այսքան է պատուիրել, որ Ռամազան տօնի չորրորդ օրը Մնչուշտ գայ եւ կանգնի հոչակա: Որ Էլ-Աէրու եախ սիւնի մօտ, որ Աղէքսանդրեայէն չորս օրուայ ճանապարհ է. եւ այնտեղ նա (Օմարը) պարտաւոր է իւր գաշոյնը տալ այն մարդոց, որոնք կանգնած կլինին այնտեղ, եւ ասել նոցա. «Ես այն մարդն եմ, որին որ գուք պարումէք»: Եւ Եթէ նորան պատասխանեն՝ «Փա՛ռք Մարգարէին, որ քեզ պահպանել է», այն ժամանակ Օմարը պարտաւոր է նոցա ետեւէն երթալ եւ նոքա կրտանեն նորան հօրը մօտ:

Այս պատմութիւնը սաստիկ այլայլութեան մէջ ձգեց Լաբաքանին. նա սկսեց նախանձով նայել Օմար արքայազնի վրայ, որին վիճակուած էր հզօր թագաւորի որդի լինել. իսկ ինքը, որ իշխանի ամեն առաքինութիւններով զարդարած է, հարկադրուած է ստոր գասակարգի մարդ մնալ:

Ակսեց իրան ու Օմարին իրազ հետ համեմատել. թէ եւ խղճմտանքը նորան ասումէր, որ Օմարը դէմքով գեղեցիկ էր, նայուածքը վառվուն ու խելօք, քիչը կանոնաւոր, ժպիտը քաղցը ու հեղ, միով բանիւ. Օմարը չքնաղագեղ երիտասարդ էր, այնուամենայնիւ, մտածումէր նա, որ եւ է թագաւոր առաւել սորան՝ դերձակի աշկերտին, իւր ժառանգը կանէր, վասն զի նա առաւել նման է թագաւորազնի, բան թէ Օմարը:

Այսպիսի չար խորհուրդներով պաշարուած էր Լաբաքանի միտքը մի ամբողջ օր եւ այդ խորհուրդներով էլ նա քուն եղաւ: Երբոր միւս առաւօտ նա զարթեցաւ, ամեն բանէ առաջ նորա աչքին ընկաւ Օմարը, որ անմեղ եւ անհոգ քնած էր: Նորա երեսը պայծառ էր. նորա վրան նայողը կըկարծէր թէ՝ նա արդէն վայելումէր այն բաղդը, որ նորան սպասումէր: Լաբաքանի սըրտի մէջ չար խորհուրդ ծագեցաւ, այն է բռնութեամբ կամ խաբէութեամբ ստանալ այն բաղդը, որից ճակատագիրը զրկել էր նորան: Գաշոյնը, որ քնած Օմարի գօտիի ետեւ խրած էր, միակ նշանն էր, որով պիտի ճանազուէր պանդխտութենէն վերադարձած իշխանորդին: Լաբաքանը կամա-

ցուկ հանեց դաշոյնը ու առաջին նուագի կամենում էր հէնց այնտեղ եւ եթ ցցել 0մարի սիրտը բայց արիւն վոթելը սոսկալի երեւեցաւ գերձակը աշկերտին, որի ձեռքը հմուտ էր ասեղ բանեցնելում եւ ոչ թէ զէնք: Լաբաքանը առաւ դաշոյնը, խրեց գոտիի ետեւ, հեծաւ 0մարի վազուկ ձին ու փախաւ:

Այս գողութիւնը կատարեց Լաբաքանը ռամազանի տօնի առաջին օրը, ուրեմն նըշանակած ժամանակը հասնելուն նորան մընում էր չորս օր: իսկ մինչեւ Էլ—Սէրուն եախի սիւնը կար երկու օրուայ ճանապարհ: բայց վախենալով որ մի գուցէ իշխանորդին իւր չար դիտաւորութիւնը իդերեւ հանէ, որքան ուժը հասնում էր աշխատում էր շտապել դէպի նշանակած տեղը:

Երկրորդ օրը, երեկոյեան պահուն, Լաբաքանը տեսաւ Էլ—Սէրուն եախի սիւնը, որ կեցած էր փոքրիկ բարձրաւանդակի վրայ՝ մի լայնածաւալ դաշտավայրի մէջ: Հազիւ երկք ժամուայ ճանապարհ էր մնացել անցնելու: թէ եւ երկու ամբողջ օր նա վարժ սերտել էր իւր ասելուն ու անելուն բայց նորա սիրտը չէր դադարում բարախելէն: խղճի խայթը բթացնելու համար նա ինքնա-

իրան այս մտքերովն էր օրօրում, որ ճակատագիրը սիալուելէ նորան իշխանորդի չանելով: ուրեմն այժմ նա ուզումէ Ճակատագրի սիալը: Այսպիսի մտքերով քաջալերուած, նա ուղիղ դէպի իւր նպատակը դիմեց:

Էլ—Սէրուն եախ սիւնի շըֆ ական անշէն եւ անապստ տեղ էր: եւ սուտ իշխանորդին մեծամեծ աղէաքի հանդիպած պիտի լինէր, եթէ վաղօրօք քանի մի օրուայ ուսելու պաշար առած չըլինէր հետք:

Իջաւ ձիէն, արմաւենիների հովանիի տակ տեղաւորուեցաւ, եւ այնտեղ սպասեց, թէ բաղդը ի՞նչ պիտի ուզարկէ իրան:

Միւս օր, միջօրէի ժամանակ նա տեսուն որ հեռուէն շատ ձիաւորներ ու բեռնաբարձ ուղտեր գալիս էին դէպի Էլ—Սէրուն եախ սիւնը, ու երբոր մօտեցան՝ կանգ առին այն բարձրաւանդակի ստորոտը, որի վրան սիւնն էր: Եկաւորները զարդարուն վրաններ յարդարեցին եւ ասես թէ նոքասպասում էին կամ մի հարուստ փաշայի, կամ շէյխի: Լաբաքանը իսկոյն հասկացաւ որ՝ այդ բազմութիւնը արքայորդու համար էր եկել այստեղ, եւ ուզումէր իսկոյն ներկայանալ նոյա, ինչպէս նոցա ապագայ իշխանը, բայց խո-

Հեմութեամբ այդ փառաւոր հանդէսը թողեց հետեւալ օրուան, որ նորա ամեն փափագը պիտի լցնէր:

Առաւօտուայ արեգակը զարթեցուց մեր բաղդաւոր աշկերտին: Վերջապէս հասաւ այն երջանիկ վայրկեանը, երբ նա դուրս պիտի գար մարդկային ստոր վիճակէն եւ ներկայանար արքայազն հօր: Ճշմարիտ է, երբ նա թամբումէր ձին, խղճմտանքը նորան տանջումէր, ասելով թէ՝ «քո արածը գարշելի գործ է, գու գողանումես իսկական իշխանի ժառանգութիւնը եւ իրան գլորումես աղէտքի ու տարաբախութեան մէջ»: բայց արդէն բանը բանէն անցել էր. Էլ փոշմանելու ու յետ գառնալու ժամանակ չըկար. իսկ անձնասիրութիւնը միւս կողմից նորան անդադար ասումէր «որ, «նա այնքան գեղեցիկ է, մինչեւ անգամ աշխարքիս երես սի ամենափառաւոր թագաւորը չի հրաժարիլ նորան իւր ժառանգը անելու»: Այս մտքերով խրախուսուած, թռաւ թամբի վրայ, ինքը իրան քաջալերեց, լիաթող չսփ տուեց գէպի սիւնը ու քառորդ ժամու մէջ հասաւ բլուրի ստորոտը: Յետոյ իջաւ ձիէն, երասանակը կապեց ծառին, հանեց 0մարի դաշոյնը ու բարձրացաւ բլուրի վրայ: Սիւնի

մօտ վեց հոգի շուրջ կանգնած էին մի բարձրահասակ եւ պատկառելի դէմքով ծերունու: Ծերունին հագած ունէր հոյակապ ոսկէհիւս դիալակէ պարեգօտ. մէջքէն քաշմիրի սպիտակ շալ կապած, սպիտակ փակեղը լիքն էր ակն ու մարգարիտներով. մէկ խօսքով ամեն բանից երեւումէր, որ դա մի երեւելի եւ մեծատուն մարդ պիտի լինէր:

Լաբաքանը համարձակ մօտեցաւ ծերունուն, քաղաքավարութեամբ գլուխ տուեց նորան, ու գաշոյնը տալով, ասաց՝ «Ես այն մարդն եմ: որին գու պտրումես:»

—Փառք Մարգարէին, որ քեզ պահպանել է, ասաց ծերունին ուրախութեամբ արտասունք թափելով աչքերէն: Սիրական որդեակ իմ: 0մար, գրկէ՛ քո զառամեալ հօրը: Խեղճ գերձակի սիրտը փղձկեցաւ այդ գորովալիր խօսքերը լսելով: նա կէս ուրախ, կէս ամօթահար ընկաւ ծերունու ոտերին ու գրկեց նորա ծունկերը:

Բայց շատ ըրտեւ եց Լաբաքանի կերպարանափոխութեան ուրախութիւնը. Հազիւթէ ծերունին գրկէն բաց էր թողել սուտ ժառանգին, յանկարծ հեռուէն տեսան որ մի ձիաւոր սանձարձակ գալիս էր գէպի բըլուրը: Թէ ճանապարհորդը եւ թէ նորա

Ճին խիստ ծաղրալի էին. յոդնած անասու-
նը ամենեւին չէր ուզում առաջ գնալ- ա-
մեն քայլափոխին գայթումէր. իսկ նորա
հեծնողը անողորմաբար մէ'կ մորակում:
մէ'կ սոներով եւ ձեռներով ծեծումէր նո-
րան: Լաբաքանը խկոյն ճանաչեց իւր ժոյլ
Մուրֆին, եւ նորա հեծնողը խկական 0մարն
էր. Եթէ լաբաքանը երեսի ամօթ ու հո-
գու խղճմուանը ունենար, այդ իսկ ժամա-
նակն էր նորա զզջալուն եւ իւր չար խոր-
հուրդներէն հրաժարուելուն. բայց ստու-
թեան չար սատանան արդէն ամուր նատել էր
նորա մէջ, եւ նա իւր մէջ հաստատ որո-
շել էր մինչեւ իվերջ շարունակել իւր սկը-
սած սուտը եւ խարդախութիւնը:

Զիաւորը հեռուէն նշաններ էր անում
եւ ասես թէ օգնութիւն էր խնդրում: բայց
նորա վրայ ոչոք ուշագրութիւն չըդարձուց.
եւ վերջապէս չընայելով ձիու յամառութեա-
նը եւ ծուլութեանը, նա մօտեցաւ բլուրի
ստորոտին, քնծուոտ ձիուց իջաւ ու բարձրա-
ցաւ բլուրի վրայ. «Կացէ՛ք, կացէ՛ք, աղողա-
կեց, ով եւ լինիք դուք, կացէ՛ք: Այս ցա-
ծահոգին ձեզ խաբումէ: Նս եմ իշխան 0-
մարը, ուրիշ ոչ մի մարդ իրաւունք չունի
այդ անունը իրան սեպհականելուա:

Ամենքի երեսին զարմանք եւ ապշութիւն
նկարուեցաւ. մանաւանդ ծերունին սաստիկ
վրդովուած էր գործի այսպիսի եթէն: Նա տա-
րակուսանքով նայումէր մէ'կ այս մէ'կ այն
երիտասարդի վրայ, եւ չըգիտէր ինչ որոշէր.
բայց լաբաքանը հանդարտ ու վեհազն կեր-
պարանքով ասաց. «Հայր իմ եւ թագա-
ւոր, ուշը մի գարձնուր այս մարդու վրայ,
ես նորան շատ լաւ ճանաչում եմ, դա խե-
լագարուած աշկերտ է մի աղեքսանդրեացի
գերձակի. անունը լաբաքան է. խղճալ է
պէտք սորա վրայ եւ ոչ թէ բարկանալ:»

Այս խօսքերը լսելով, իշխանազն 0մարը
բարկութիւնից կատապեցաւ եւ ուզումէր
թռչել լաբաքանի վրայ ու տեղն ի տեղը խեղ-
գել նորան. բայց ներկայ գտնուողները չը-
թողեցին, իսկ ծերւնին ասաց. «Ճշմարիտ
է քո ասածը, որդեակ, ես ինքս էլ տեսնում
եմ, որ դա խելագար է:» ու գառնալով ծա-
ռաներին ասաց. «Կապեցէ՛ք սորա ձեռքն ու
ոտքը ու դրէ՛ք ուղտի վրայ, կարելի է որ՝
տեղ որ հասնենք մէկ հնարով կօգնենք այս
թշուառականին:»

Երիտասարդ իշխանազնի բարկութիւնը
մի փոքր իջաւ. աչքը արտասունքով լցուած,
զնկաւ ծերունու ոտերին եւ ասաց. «Արտիս

ձայնը ինձ ասումէ, որ դու իմ հայրն ես.
մօրս անունով աղաջումեմ քեզ՝ լսէ ինձ։»
«Աստուած հեռի պահէ մեզ չարէ փոր-
ձանքէ, ասաց ծերունին, այս երիտասար-
գը նորից սկսումէ խելագարելու. զարմա-
նալի՛ բան է, ի՞նչպէս կարող է մարդուս
մէջ այսպիսի ցնորամիտ խորհուրդ ծնել։»
Այս որ ասաց, ձեռքը դրաւ Լաբաքանի ու-
սի վրայ եւ նորա օգնութեամբ սկսեց բլու-
րէն ցած ի՞նել։ Երկուսի համար եւս պատ-
րաստուած էին փառաւոր ձիեր՝ վրան շքեղ
ծածկոյթ ձգած։ Հայր ու սուտ որդի հե-
ծան նոցա վրայ ու գնացին. ետեւէն գա-
լիս էին ուղեկիցները ու ծառանները. իսկ
տարաբաղդ Օմարին շղթայած դրին ուղտի
վրայ, երկու ձիւոր աջից ու ձախից գնա-
լով, հսկումէին այդ սուտ խելագարի ա-
մեն մի շարժ մունքը։

Օգոստափառ ծերունին Վահաբիտի սուլ-
թան Սահուդն էր. Երկար ժամանակ ան-
գաւակ էր նա. վերջապէս Աստուած նորան
որդի ընծայեց. Այդ դիպուածով կանչուե-
ցան աղթարներ եւ աստղապաշներ, եւ
հարցուցին նոցա երեխայի ապագայ վիճա-
կի մասին. եւ նոքա յայտնեցին, որ քսա-
ներկու տարեկան չեղած, նա պիտի վախե-

նայ մի թշնամուց, որ աշխատելու է ամեն
կերպով վնասել ու կորսնել նորան. եւ որ-
պէս զի այդ թշնամուց հեռու լինի տղան,
սուլթանը տուեց նորան Էլֆի—բէին՝ իւր
հին ու հաւատարիմ բարեկամին, զրկելով
իրան այն միսիթարութենէն, որ ունի ամեն
հայր, միշտ աչքի առջեւ տեսնելով իւր զա-
ւակին։

Ահա այս բաները պատմեց սուլթանը իւր
սուտ որդուն, որ թէ՛ արտաքին կերպարան-
քով եւ թէ վարմունքովն հաճելի էր երեւ-
ցել նորան։

Երբոր հասան սուլթանի երկիրը, նորա
հպատակները ցնծալիր ուրախութեամբ ըն-
դառաջ եկան նորան. մանաւանդ մեծ էր
նոցա ուրախութիւնը այն պատճառաւ, որ
նոցա սիրական սուլթանի որդին եւ ժա-
ռանգը՝ Օմարը, ողջ եւ առօղջ վերագար-
ձել էր երկարատեւ պանդխուութենէն։ Ինչ
տեղէ որ անցնումէին ամենուրեք շին-
ուած էին, իպատիւ նոցա, յաղթանակի
կամարներ՝ դալար բոյսերով եւ ծաղիկներով
զարդարած. տների պատուհաններէն կախ
էին տուած գոյնզգոյն գորգեր. ծողովուր-
դը բարձրագոյն ձայնով փառաբանութիւն
էր տալիս Ալահին եւ նորա մարգարէին,

որք պարգեւել էին նորան այդպիսի շնորհազարդ թագաժառանգ։ Այս ամենը լսելով փառաէր գերձակի սիրած բերկը թիւնով լցուեցաւ։ Որքան որ սուտ փշանորդին երջանիկ էր, այնքան էլ իսկականը շղթայակապ ուղղի վրայ արկած։ լուռ յուսահատութեամբ լցուած էր այս հանդիսավեհ ընթացքի ժամանակ։ թէ եւ բիւրաւոր ձայներ սիրով յիշում էին նորա անունը՝ բայց նա ինքը ամենից լքած թողած էր. եւ ամեն շուք ու պատիւ, որ նորան էին վայելում; այժմ տալիս էին մի օտար բաղդախնդրի. եւ եթէ ամբոխի մէջէն հարցնող էր պատահում թէ՛ միկէ այս շղթայակապ մարդը, որ ուղղի վրայ կապկապած է, պահապաններէն մինը արհամարհանքով պատասխանում էր նորան՝ «Նա մի խելագար գերձակ է»։

Վերջապէս հասան մայրաքաղաք, ուր սուլթանին առաւել ընդունելութիւն արին քան ուր եւ իցէ։ Թագուհին, որ տարեց խաթուն կին էր, աւագանիի բամբիչներուն չորս կողմը առած, սպասում էր արքայազն հիւրին իւր հոյակապ ապարանքի մէջ։ Տափի վրայ փռած էր ահագին մեծութեան գորգ պատերից կախ արած էին կապուտ մետաք-

սէ պաստառներ զարդարած ոսկէթել ժապաւէններով, փունջերով ու առաստաններով, որոնք զուտ արծաթէ ճարմանդների էին ամրացուցած։ առա մետաքսութիւններուն կամ երբոր ձիաւորների խումբը հասաւ ապարանքի բակը, օրը արդէն մթացել էր ապարանքը լուսաւորեցին գոյնզգոյն ապակիէ գնդածեւ լապտերներով, որոնք մութ գիշերը պայծառ օր դարձուցին. բայց առաւել պայծառ լուսաւորած էր ապարանքի այն դահլիճը, ուր թախթի վրայ նստած էր թագուհին. զուտ ոսկիէ ձուլած ու մեղեսիկ ակերով յեռուած չորս աստիճաններ տանում էին գէպի գահը. չորս դրանիկ բռնած ունէին թագուհու գլխի վրայ կարմիր կերպասէ ապմհովանի. իսկ Մէդինէի շէյխը (վանահայր) սիրամարդի փետուրէ հովհարով զուգացնում էր օդը։

Այսպէս կազմ ու պատրաստ՝ թագուհին սպասում էր իւր ամուսնուն ու որդուն։ Իւր արքայազն զաւակին ծնած օրէն տիսած չէր. բայց սքանչելի երազների մէջ նա այնքան անգամ տեսել էր իւր կարօտակէզ ձագուկին, որ հագար հոգու մէջից կարող էր ջոկել ու ճանաչել նորան։ Մօտեցող ամբոխի ոտնատրովիր աւելի եւ աւելի լսելի էր լինում։

փողի ու թմբուկի ձայները խառնվում էին, մարդոց ցնծալիր աղաղակի ու ձիերի դափրի հետ. վերջապէս բազմութիւնը մտաւ ապարանք. դուռերը երկբացիկ բացուեցան. թագուհու սպասաւորները երեսի վրա գետնին ընկան. Սուլթանը սուտ Օմարի ձեռքէն բռոնած, եկաւ կանգնեցաւ գահի առջեւ ու սսաց թագուհուն. «Աչա՛ նա, որի համար այսքան տարիներ մտամաշ եղար ու կոծեցիր. ահա վերագարձնում եմ նորանքեզ».

— Ո՞չ, ո՞չ դա իմ սրդին չէ՛, ասաց թագուհին իւր ամուսնու խօսքերը կտրելով. երբոր մեծ Մարգարէն երազիս մէջ ցոյց էր տալիս ինձ իմ զաւակի կերպարանքը, նա այդպէս չէր:

Սուլթանը գեռ եւս բերանը բացած չէր, որ կնկայ խօսքերին պատասխան տայ, մին էլ տեսնես, դզրդոցով դռները բացուեցան ու իշխանադն Օմարը, պահապանների ձեռքից փախչելով, մտաւ դարպասի մէջ ու կիսաշունչ բնկաւ թախտի առջեւ, աղաղակելով: «Այստե՛զ ուզում եմ ես մեռնել, անգութ հայր, հրամայէ՛ ինձ սպանել, այլ եւս չեմ կարող դիմանալ այսչափ խայտառակութեան եւ տառապանքիս: Այս խօսքերը լսելով, ամենքը զարմացան ու մօտեցան երիտասար-

դին, եւ պահապանները ուզում էին նորէն նորա ձեռքը շղթայել ու հեռացնել դահլիճէն. բայց թագուհին որ երկար ժամանակ լուռ ալշած նայում էր այս ամեն բանի վրայ, յանկարծ էջաւ թախտէն ու տսաց բարձր ձայնով. «Մի՛ դիպէիք սորան, դա իմ որդին է. թէ եւ աչքերս տեսած չէին, բայց սիրոս նորան ճանաչեցաւ»:

Պահապանները չէին համարձակում մօտենալ Օմարին. բայց սուլթանը բարկութեամբ հրամայեց կապել այդ խելագարին, ասելով. «Միայն ես ունիմ իրաւունք հրամայելու ու վճռելու. ո՞վ կը համարձակի պառաւ կնոջ երազներին եւ շաղփաղփանքի վրայ ուշք դարձնել: իմ ունեցածը արժանահատ ստո անժխտելի նշաններ են: Ահա իմ սրդին ասաց նա, ցոյց տալով Լաբաքանի վրայ: Նա բերեց տուեց ինձ դաշոյնը, որ ուզարկել էր ինձ իմ բարեկամ ելքին, եւ սսաց մեր պայմանադրած խօսքերը»:

Օմարը պատասխանեց. «Միալում ես, հայր իմ. այդ երիտասարդը ինձնից գողացաւ այդ դաշոյնը եւ ինձնից իմացաւ պայմանադրած խօսքերը: Նա օգուտ քաղեց իմ միամտութենէն եւ իշարն գործածեց այն»: Բայց սուլթանը ականջ չը դրաւ որդու խօս-

քերին. նա կամակոր մարդ էր, եւ չափազանց վոտահացած էր իւր խոշեմութեան եւ խորագիութեան վրայ. Թշուառ Օմարին զօրով քաշեցին, դուրս տարան գահիձէն. իսկ Լաբաքանին իւր սենեակը տարաւ սուլթանը. նա շատ բարկացած էր թագուհու վրայ, որի հետ քսանհինգ տարի սիրով ու խաղաղութեամբ ապրել էր:

Թագուհին էլ միւս կողմանէ շատ վշտացած էր. նա բոլորպին համոզուած էր, որ թագաւորը խաբուածէ այդ խարդախ մարդուցը, նորա մայրական սիրու այն եւս վկայում էր, որ շղթայակապ անբաղդ երիտասարդը իւր հարազատ զաւակն էր, նոյն իսկն, որին քանի քանի անգամ տեսել էր իր երազների մէջ:

Երբոր սրտի կակիծը մի փոքր հանդարտեցաւ, թագուհին սկսեց լուրջ մտքով խորհել եւ հնար պտրել, թէ ի՞նչ անէ, որ իւր արքայազն ամուսնուն հեռացնէ այդ անարդար ճանապարհէն: Արդարեւ, շատ դըժուար էր թագուհուն այդ գործը գլուխ բերել. խաբեքան ոչ միայն գաշոյնը տուել էր թագաւորին, որ միակ ապացոյցն էր որդու հարազատութեանը, այլ եւ փորփրելով իմացել էր Օմարէն նորա կեանքի ամեն մանրա-

մասնութիւնը, այնպէս որ՝ արդէն շատ դիւրին էր նորան թագաւորի ժառանգը ձեւանալու. նա մանաւանդ որ էլֆի բէյն էլ մեռել էր:

Դշնոն իւր մօտ կանչեց թագաւորի ամեն ծառաներին, որք նորան ուղեկից էին եղել մինչեւ Էլ—Սէրու' եախի սիւնը, եւ հրամայեց մանրամասնաբար պատմել իրան ինչ որ գիտէին. եւ ապա գաղտուկ խորհուրդ արաւ իւր սիրական նաժիշտի հետ. ու երկուսը միասին խելք էին մաշում, թէ ի՞նչ անեն որ այդ շարի ճարը գտնեն, եւ վերջապէս պառաւ ու խելօք Սէլէսալը ասաց նորան. «Ո՛վ տիկին, իմ տիրոջ դաշոյն տուող երիտասարդը միւս երիտասարդին Լաբաքան է կոչում՝ Աղէքսանդրիացի խելագարուած գերձակ, այդպէս չէ»: — Իսկ եւ իսկ այդպէս է, պատասխանեց թագուհին. բայց դորանից ի՞նչ կըգոյանայ: «Ինձ այնպէս է թվում, որ խաբեքան իւր անունը տուել է քո որդուն, պատասխանեց նաժիշտը. եւ եթէ այդպէս է մեզ շատ գիւրին է նորա խարդախութիւնը երեւան հանելու. մենք նորան կըբռնենք այդ որոգայթով, որ նա ուրիշի համար լարել էր: Բայց այս բանը, ինչպէս գաղտնիք, ես կարող եմ միայն քեզ

յայտնել, ողորմած թագուհի»։ Թագուհին տարաւ նորան մի թաքուն տեղ, ու նաժիշտը յսկանեց նորան իւր կարծիքը։ Նաժիշտի հետ խօսք ու զրոյցը աւարտելուց յետոյ թագուհին գնաց իւր իշխանազն ամուսնու մօտ։

Թագուհին խելօք կին էր. նա շատ լաւ ճանաչում էր թագաւորի թոյլ երակները, բայց երբէք իշար եւ իվնաս չէր գործածո մայդ։ Նա այնպէս ձեւ աղաւ, իբր թէ յօժարակամ ընդունում է թագաւորի կարծիքը եւ նորա բերած երիտասարդին ընդունում է իբրեւ իւր հարազատ զաւակը, միայն թէ մի պայման է առաջարկում։ Սուլթանի բարեկութիւնը իջել էր, եւ նա արդէն հաշտ աչքով էր նայում իւր կնոջ վրայ, ու ասաց նորան. «Թո՛ղ սինպէս լինի ինչպէս որ ցանկանում ես. բայց ասա՞ ինձ, այդ ի՞նչ պայմանէ»։ Թագուհին այսպէս պատասխանեց նորան. «Ես շատ կըդանկայի այդ երկու երիտասարդներին փորձել եւ տեսնել նոցա ճարպիկութիւնը։ Եթէ իմ տեղը ուրիշ կին լինէր, անշուշտ կառաջարկէր նոյցա մրցելու ձիարշաւի, նետաձգութեան կամ զինախաղութեան մէջ, բայց այդ ամենը այնպիսի բաներ են, որոնց ամեն երիտասարդ փոքր ի

շատէ հմտւտ է։ Ես նոյցա առջեւ մի այնպիսէ գործ պիտի դնեմ, ուր կերե ի նոյցա հնարագիտութիւնը եւ խոհականութիւնը. թո՛ղ կարեն նոքա մի մի պարեգօտ եւ վարտիք. տեսնենք որի՞ ձեռագործը աւելի լաւ կըլինի։»

Սուլթանը ծիծաղեցաւ ու ասաց՝ «Ճշմարիտ պէտք է ասել, որ շատ խելօք բան մտածել ես, բայց ասա՞ խնդրեմ, ի՞նչպէս կարող է մեր որդին այդ խելագար դերձակի նման լաւ կարելու, այդպիսի յիմար բան միտք անգամ անել պէտք չէր»։

Թագուհին նորա միտքը ձգեց, որ նա խոստացել էր կատարել պայմանը. եւ թագաւորը որ իւր խօսքին միշտ տէր էր եղել չըկամեցաւ իւր կնոջ առջեւ ու խտադրուժ լինելու, զիջաւ նորա առաջարկութեանը. բայց մտքի մէջ հաստատ որոշել էր, խելագար դերձակը թէ եւ շատ հմտութեամբ կարէր պարեգօտը, այնու ամենայնիւ նորան իւր որդի չընդունել։

Գնաց սուլթանը իւր սուտ որդու մօտ եւ խնդրեց մօրը կամքը կատարել, որ մինչեւ նորա ձեռքով կարած պարեգօտը չըտեսնէ նորան իւր որդի ճանաչելու չէ։ Պարզամիտ կարաքանը, լսելով այս առաջարկութիւնը, շատ ծիծաղեցաւ, եւ շատ ուրախ էր, որ մայրը այդպիսի օտարոտի կամք է յայտնել,

Եւ մտածում էր մտքի մէջ՝ «Եթէ բանը կար ու կարկատի ընկնի, ես առաջուանէ գիտեմ, որ թագուհի մայրս ինձնից շատ գոհ կը մնայ»:

Երկու սենեակ նշանակեցին, մինը 0մարի եւ միւսը լաբաքանի համար, ուր նոքա պարտաւոր էին աշխատելու. ինչ որ ձեւ ու կարի համար պէտք էր՝ ամենը բերին տուին նոցա, — կերպասներ, մկրատներ, ասեղներ, թելեր, եւ այլն:

Սուլթանը շատ հետաքրքիր էր իմանալու արդեօք ինչպէս պիտի կարէ իւր որդին. բայց թագուհու սիրուը բաբախում էր, որ չըլինի թէ իւր խորամանկութիւնը անյաջող լինի: Պարեգօտը կարելու համար երկու օր էր նըշանակած, երբորդ օրը սուլթանն ու գշխոն մարդ ուղարկեցին ու իրանց մօտ հրաւիրեցին մրցող երիտասարդներին: Լաբաքանը անձնաբաւականութեամբ ու պարծենալով փուց իւր կարած պարեգօտը գշխոյի առջեւ եւ ասաց. «Տէ՛ս, սիրական մայրիկս, մի՞թէ այս արմաղան ձեռագործ չէ՛. եթէ կամենաք, համեմատեցէ՛ք ձեր տեղի ամենահմուտ գերձակի կարի հետ, եւ կըհամազուիք, որ իմը նորանից գերազանց է:»

Դշխոն ժպտաց, ու երեսը դարձնելով 0-

մարին, ասաց՝ «Դու է՛լ սիրելի որդեակ, բերել ես քո ձեռագործը»: 0մարը դժկամակութեամբ գետնին շպրտեց կերպասը եւ մկրատն ու ասաց. «Ես սովորել եմ ձի աշտանակել, սուր խաղցնել, տէգ ձգել, նետը նշաւակի դիպցնել, եւ ոչ թէ կար ու կարկատ անել: Կեանքիս մէջ ասեղը ձեռքս առած չէի. այդ պարապմունքը անարժան եւ անվայել էր Էլֆի բէյի, Քահիրէի փաշայի աանին:»

— Դու ես իմ թագաւոր ամուսնու հարազատ որդին, ասաց գշխոն բարձր ձայնով, արի՝ գրկեմ քեզ, իմ սրտի կտորը: Եւ ապա գառնալով թագաւորին, ասաց՝ «Տէ՛ր իմ եւ ամուսին, ներէ՛քո կնոջ խորամանկութիւնը՝ մի՞թէ այժմ գու պարզ չըտեսար, թէ ո՞րն է իշխանորդին եւ ո՞րն է դերձակը: Նա որ ձեւանում է քո որդին, այնպիսի ճարտարութեամբ կարել է պարեգօտը, որ մարդ ակամայ ուղում է նորան հարցնել թէ՛ ո՞ր դերձակի մօտ բոլոր կեանքը աշկերտութիւն է արել. եւ ես համոզուած եմ, որ այս երիտասարդը մինչեւ այս օրս կարելէն զատ ուրիշ ոչինչով զբաղած եղած չէ՛:»

Սուլթանը մտածողութեան մէջ խորասուզուած, կասկածոտ աջքով նայում էր

մերթ դշխոյի եւ մերթ կաբաքանի վրայ, որ իզտուր աշխատում էր իւր ներքին շփոթը վարագութելու. նա ինքն իր վրայ սաստիկ բարկացած էր երեւում, որ այդպէս յիմար գտնուեցաւ, ծուղակը ընկաւ ու ինքն իրան մատնեց: Միփոքր լուլթենից յետ, սուլթանը ասաց. «Բայց այդ գեռ եւս ոչինչ չէ՝ նշանակում: Փառք Աստուծոյ որ ես, ճշմարտութիւնը իմանալու համար, մի ուրիշ հնար ունիմ»:

Այս որ ասաց, հրամայեց բերել իւր վազուկ ձին, հեծաւ վրան ու գնաց անտառ, որ քաղաքէն շատ հեռու չէր: Աւանդութիւնը ասում էր որ՝ այդ անտառի մէջ բնակում է մի բարերար վհուկ, անունը Աղօղակիցէ, որ սուլթանի ցեղի հովանաւորիչն էր. երբ որ մէկ անհրաժեշտ կարիք լինէր, նա միշտ գալիս էր տալու բարի խորհուրդ եւ օգնութիւն: Ահա այդ վհուկի մօտ գնաց սուլթանը:

Անտառի մէջտեղը մի տափարակ տեղ կար բարձրաբերձ մայր ծառերով շրջապատած: Ասում էին թէ՝ այնտեղ կենում էր վհուկը. եւ մարդիկ չէին համարձակում մօտենալու այդ տեղին, վախենալով մի գերբնական գորութենէ:

Երբոր սուլթանը այնտեղ հասաւ՝ իջաւ

ձիէն, սանձը կտպեց ծառից ու ինքը գնաց կանգնեցաւ տափարակի մէջտեղը, ու ամուր ձայնով ասաց. «Թէ ճշմարիտ է այն համբաւը, իբր թէ դու իմ նախորդներին, պէտք եղած ժամանակը, միշտ տուել ես բարի խըրատներ, աղաջում եմ, մի' մերժիլիմ խընդիրը, ո՛վ բարերար Աղօղակիցէ. իմ առջեւ պարզէ՝ այն, ինչ որ մարդկային խելքի համար մութ եւ անհասկանալի է»:

Հազիւ թէ թագաւորը աւարտել էր իւր խօսքերը, մին էլ տեսնես, մայրերէն մինը ճեղքուեցաւ ու մէջէն գուրս եկաւ սպիտակ հալաւով կին՝ ոտից գլուխ քողով ծածկած: «Սուլթան Սահուդ, ասաց նա, ես գիտեմ քո գալու պատճառը. քո պահանջմունքը արդարացի է, ուրեմն կարող ես իմ օգնութեան վրայ յուսալ: Ահա քեզ այս երկու տուփը, ու երիտասարդները, որոնք քո որդիքն են ասվում, թող իրանց համար սոցանից մի մի ընտրեն: Ես գիտեմ որ՝ նոքա կընտրեն այն, ինչ որ յարմար է իրանց կոչմանն ու վիճակին. եւ նոցա ընտրութենէն դու կընտանացես քո հարազատ որդուն:

Այսպէս խօսեցաւ վհուկը եւ տուեց սուլթանին երկու փղոսկրէ տուփ, ոսկի ճարմանդներով եւ օղակներով ամրացուցած ու

մարդարիտներով զարդարած։ Ամեն մինի
խուփի վրայ գոհարներով յեռած գրուածք
կար։ Սուլթանը ո՞քան եւ ուզեց, բայց բա-
նալ չըկարողացաւ խուփերը։

Տուն վերադառնալու ժամանակ սուլթանը
միտք էր անում՝ արդեօք ի՞նչ պիտի լինէին
այդ տուփերի մէջ. բանալ ինչպէս ասացի,
չէր կարողանում, իսկ վրայի գրուածքը նորա
համար անհասկանալի բաներ էին. մինի վրայ
գոհարով գրուած էր իտու+ է- պատի-, իսկ
միւսի վրայ՝ հարստու-նի-ն է- բաղդ։ Սուլթա-
նին այնպէս էր թվում, որ այդ երկու գե-
ղեցիկ բաների մէջ ընտրութիւն անելը շատ
դժուար պիտի լինի։

Երբոր ապարանք վերադարձաւ. սուլթանը
հրաւիրեց իւր մօտ գշխոյին, եւ ինչ որ լսել
էր վշուկէն, ամենը պատմեց նորան։ Դշխոն
շատ ուրախացաւ. նա վստահ էր, որ իւր հա-
րազատ որդին անշուշտ պիտի ընտրէ այն
տուփը, որ կ'ապացուցէ նորա տրքայազն
ծնունդը։

Թագաւորի թախտի առջեւ դրին սեղան.
սեղանի վրայ ինքը թագաւորը իւր ձեռքով
դրաւ երկու տուփը, եւ նշանացի հրամայեց
սպասաւորին. որ դահլիճի դուռը բանայ։
Թախտի հանդէպ, աջ ու ձախ, պատերի

տակը, չքեղ բարձերի վրայ նստած էին է-
միրները ու փաշաները, որոնք եկել հան-
դիսացել էին նորա հրամանով։

Երբոր հանդիսականները այսպէս կազմու-
պատրաստ էին, թագաւորը երկրորդ նշա-
նով հրաւիրեց Լաբաքանին, որ հպարտ
հպարտ ու վստահութեամբ եկաւ ու թախ-
տի առջեւ ծունդ գնելով, ասաց՝ «Ի՞նչ ես
հրամայում, հայր իմ եւ թագաւոր»։

Սուլթանը ոտքի կանգնեցաւ ու ասաց՝
«Որդեակ, մարդոց սրտերի մէջ կասկած է
ծագել քո ծնունդի ու անուան մասին։ Այս
տուփերէն մինը պիտի փարատէ այդ կասկածը։
Ընտրէ՛ որն որ կըհաւնիս. ես համոզուած
եմ, որ դու այն կառնուս, ինչ որ քեզ կը-
վայելէ»։

Լաբաքանը մօտեցաւ տուփերուն, բայց
երկար ժամանակ չըգիտէր ո՞ըը ընտրէ, եւ
վերջապէս ասաց. «Ո՛վ պատուական հայր իմ։
ի՞նչ բան կարող է քո որդի լինելու բաղդէն
վեր լինել, եւ ի՞նչ բան կարող է համեմատ-
ուել քո ողորմութեան հարստութեանը։
Ես ընտրում եմ այն տուփը, որի վրայ գը-
րած է բաղդ եւ հարստու-նի-ն»։

— Մենք յետոյ կիմանանք լաւ էր, թէ՞ վատ
քո ընտրութիւնը. իսկ այժմ նիստ այն բար-

Ճի վրայ, որ Մէդինէի փաշայի մօտ է, ասաց
սուլթանը եւ դարձեալ նշան արաւ սպա-
սաւորին:

Ներս բերին Օմարին. Նորա դէմքը տխուր
էր. Երեսի վրայ նկարուած էր վիշտ. ամենքը
խղճացին նորա վրայ. Նա եւս ծունը դրեց
թախտի առջեւ, ու յետոյ սպասեց թէ ի՞նչ
հրաման կուտայ սուլթանը:

Սուլթանը հրամայեց տուփերէն մինը ընտ-
րել, ու Օմարը մօտեցաւ սեղանին:

Մտադրութեամբ կարդաց տուփերու վրայի
գրուածքը ու ասաց. «Իմ անցած օրերը
սովորեցուցին ինձ, թէ ո՛րքան անհաստատ
է բաղդը եւ ո՛րքան անյունալի է հարստա-
նիւնը. նմանապէս ինձ սովորեցուցին նոքա
որ պարիւը անյողդողդ բարիք է, որ կենում
է քաջ մարդու սրտի մէջ. նոքա ինձ սովորե-
ցուցին, որ ժառանք ցողուն աստղը չի խաւա-
րում բաղդի հետ միասին։ Ասածս ասած
է, թո՞ղ իմ ընտրութիւնը զրկէ ինձ իշխա-
նական թագէ. բայց ես ընտրում եմ ժառա-
նք պարիւ։ Օմարը դրաւ ձեռքը իւր ընտրած
տուփի վրայ եւ ուզում էր առնել. բայց
սուլթանը գադարեցուց նորան, եւ նշանացի
արաւ, որ Լաբաքանն էլ մօտենայ սե-
ղանին. Լաբաքանը մօտեցաւ եւ ձեռքը

դրաւ իւր ընտրած տուփի վրայ։
Սուլթանը հրամայեց բերել այն ջրէն, որ
առած էր Մէդքէի մէջ գտնուած ջէմցէմ
ասած նուիրական աղբիւրէն. թախտէն իջաւ
ձեռքը լուաց ու ծունը դնելով, այսպէս
աղօթեց՝ «Իմ հայրերի Աստուած. դո՞ւ որ
դարերէ իվեր իմ ցեղը քո հովանաւորու-
թեան տակ կրպահպանես, դո՞ւ որ նորան
կրպահես, մի թողնիր որ անարդ մարդ խառ-
նուի Արասներու տոհմի մէջ եւ այս հան-
գիսաւոր վայրկենին իմ որդին ձեւանայ»։

Աղօթքը վերջացնելէն յետ, սուլթանը նո-
րէն նստեց իւր արքայական գահի վրայ.
գահիմի մէջ խոր լուութիւն էր տիրած.
հանդիսականները չէին համարձակում շունչ
առնել, այնպէս որ ճանճի թոշելն անդամ
կարելի էր լսել. այդպէս, ամենքը լուռ ու
մունջ, մոագրութեամբ սպասում էին, թէ
ի՞նչ կրինի. ետեւի նստողները, վիզերը ձը-
գած, աշխատում էին առջեւների գլուխ-
ներու վրայէն տեսնել. Վերջապէս սուլթանը
ասաց երիտասարդներին՝ «Բացէ՛ք տուփերդ»,
եւ որ առաջ չէին բացվում այժմ ինքները
իրանց բացուեցան։

Օմարի տուփի մէջ կար մի բարձիկ եւ նորա
վրայ թագ ու գայիսոն. իսկ Լաբաքանինի մէջ

Եր ասեղ՝ ծակէն թել անցուցած։ Սուլթանը հրամայեց իւր առջեւը բերել տուփերը։ Զեռքը առաւ բարձիկը՝ որի վրայ դրած էին փոքրիկ բայց չքեղ թագն ու գայիսոնը։ Եւ յանկարծ այդ փոքրիկ իրերը նորա ձեռքի մէջ բնական մեծութիւն ստացան։ ոսկէ թագը այնպէս մեծացաւ, որ կարելի էր գլխին հագնել։ իսկ բարձիկը դարձաւ այնպէս մեծ բարձ, որ հեշտութեամբ կարելի էր նորա վրայ տեղաւորել թագն ու գայիսոնը։ Սուլթանը առաւ թագը եւ դրեց Օմարի գլխուն եւ գայիսոնը տուեց նորա ձեռքը։ Օմարը ծունը դրեց հօրը առջեւ։ Հայրը համբուրեց նորա գլուխը։ Հրամայեց իւր աջ կողմը նստել եւ հրապարակաւ յայտնեց, որ գա իւր հարազատ որդի եւ ժառանգն է։ Յետոյ դարձաւ Լաբաքանին ու ասաց՝ «Գիտե՞ս, մի հին առած կայ՝ Կօշկակա՛ր, կօշիկէդ վեր մի՛ երթար։ Նոյնպէս եւ դու. քեզ նախտսահմանուած էր ասեղովդ հացդ ճարելու։ Թէ՛ եւ դու արժանի չես ո՛չ գութի եւ ո՛չ ողորմութեան, բայց քեզ համար թողութիւն խնդրեց նա, որի խօսքը, այսօրուայ օրա ես կոտրել չեմ կարող բայց միայն այս բարի խորհուրդը կարող եմ քեզ տալ, որ ո՛րքան կարելի է շուտ կորչես իմ սահմաններէն,

ապա թէ ոչ, եթէ գլխիդ մի փորձանք գայ։ ես անպարտ եմ։» Ամօթահարած, խայտառակած դերձակը պապանձուեցաւ եւ ոչ մի խօսք բերանէն հանել չըկարողացաւ։ արտասուելով ընկաւ արքայորդու ոտերին եւ աղաղակեց՝ «Ո՛չ տէր իմ եւ իշխան, մի՛թէ գու կարող ես ինձ ներել։»—Բարեկամներին մտերմութիւն, թշնամիներին մեծահոգութիւն—ահա Աբասան տոհմի յատկութիւը, ասաց արքայորդին, գետնէն բարձրացնելով նորան։ գնա խաղաղութեամբ։ «Ո՛չ, դո՛ւ ես իմ իսկական որդին։» ասաց սուլթանը իգորով շարժած եւ սեղմելով իւր կրծքին Օմարին։ Այնոեղ ներկայ գտնուող բոլոր էմիրները, փաշաները եւ տէրութեան ուրիշ պաշտօնատարները տեղերէն ելան, բարձր ձայնով շատ—արեւ բարեմաղթեցին արքայորդուն։ այս ցնծալիր ուրախութեան ժամանակ Լաբաքանը, տուփը թեւի տակ առած, կամացուկ դուրս փախաւ դահլիճէն։ Գնաց սուլթանի ախոռը, գտաւ իւր քնծուու Մուրֆին, թամբեց ու գնաց դէպի Աղէքսանդրիա։ Կարմատեւ իշխանազնութիւնը նորան երազի նման կերեւէր, եթէ ակն ու մարգարիտով ձոխ զարդարած տուփը նորան չըյիշեցնէր, որ

այդ ամենը իսկական անոք էր:
 Երբոր Աղքամանդրիա հասաւ, ուղղակի
 գնաց իւր վարպետի տուն, թամբէն իջաւ,
 ձին կապեց սայլազրանը ու ինքը արուեստա-
 նոց մտաւ: Առաջի նուագ վարպետը չըկա-
 րողացաւ նորան ճանաչել, եւ կարծումէր
 թէ՝ դա մի երեւելի ոմն է, եւ հարցուց թէ՝
 «Ի՞նչ էք կամինում պարոն»: բայց որ ուշա-
 դրութեամբ նայեցաւ երեսը, իսկոյն իմա-
 ցաւ որ՝ դա իւր մի ժամանակուայ աշկերտ
 Լաբաքանն է: եւ հրամայեց, որ միւս աշկերտ-
 ներին իմացնեն: Աշակերտները ներս մտած—
 յըմտած, կատաղաբար վրան թափեցան ու
 սկսան ո՛րը կանգունով, ո՛րը չուանով ծեծել,
 ո՛րը ասեղով էր ծակում: ո՛րը մկրատն էր
 ցցումնորա միսը, եւ այնքան ծեծեցին ու
 տանջեցին խեղճ Լաբաքանին, որ նա թալ-
 կացած ընկաւ հալաւների վրայ, որ արուես-
 տանոցի մէջ գիզադէզ կեցած էին:

Ամենէն վերջը վարպետը սկսեց նախատել
 կատարած գողութեանը համար: իզուր էր
 հաւատացնում Լաբաքանը, որ նա այստեղ
 բարի խորհրդով է եկել, այն է՝ իւր հա-
 սուցած վնասը տոկոսով վարձատրելու: վար-
 պետը ոչ հաւատաց եւ ոչ անգամ ականջ
 դրեց նորան, եւ աշկերտների հետ միասին

նորից սկսեց նորան ծեծել: Այսպէս ծեծ-
 ուած ջարդուած, վրան—գլուխը պատառ
 պատառ, կիսակենդան գուրս ձգեցին նո-
 րան արուեստանոցէն: ողօրմելին զիարդ եւ
 իցէ հեծաւ իւր Մուրփը ու գնաց գէպի ի-
 ջեւան: Այնտեղ իւր յոգնած գլուխը բար-
 ձի վրայ գրած՝ միտք էր անում այս կեան-
 քի տառապանքների, երկրաւոր բարեաց ու-
 նայնութեան, բաղդի անկայունութեան վը-
 րայ, նմանապէս միտք էր անում նա մարդ-
 կան ազգի ապերախտութեան մասին, թէ
 ինչպէս բարի մարդոց երախտիքը հազիւ-
 երբէք վարձատրվում է եւ իսկական արժա-
 նաւորութիւնը մնում է անյայտութեան
 մէջ: ու քուն եղաւ, հաստատ որոշած, որ
 այսուհետեւ պիտի հրաժարուի ամեն կերպ
 շուր ու փառքէ եւ պիտի վարէ այնպիսի
 անպաճոյն կեանք, որ վայելէ համեստ քա-
 զաքայուն:

Միւս օր, քնէն զարթելով, Լաբաքանը
 չըփոխեց իւր գիտաւորութիւնը: վարպետի
 ու աշկերտների ծանր կռուփները, ասես թէ,
 նորա գլխից ցնդեցրել էին փառաէր ցը-
 նորքը:

Մի անկնավաճառի թանգ գնով ծախեց ակ-
 նայեռ տուփը, ստացած փողով իւր համար

մի տուն գնեց, մէջը սարգեց արուեստանոց, ճակատին այսպէս գրած՝ Դէքշակ Լաբատան։ ու պատուհանի առջեւ նստած եւ ձեռքը ծակէն թել անցուցած ասեղը բռնած, որ վը-հուկի տուփէն էր առել, սկսեց կարկատել իւր հալաւները, որ անզորմ վարպետն ու աշկերտները պատուտել ու կտրտել էին։ Այդ միջոցին մի մարդ եկաւ ու դուրս կան-չեց նորան։ Լաբաքանը թողեց կար—կար-կատը ու գնաց. միայն ո՞րքան զարմացաւ նա, երբ նորէն տեղը գալով, տեսաւ որ ա-սեղը ինքն իրան կարում է. բայց այնպէս շուտ ու այնպէս գեղեցիկ, որ Լաբաքանը կեանքի մէջ կարողացած չէ այդպէս կարել։

Ի՞նչ ասել կուզէ, որ վհուկի ամենաշնչին ընծան էլ մահկանացուի համար գանձ է, որ կարող է մեծամեծ բաղդի պատճառ լի-նել։ Որքան շատ եւ կարէր կախարդական ասեղը, բայց նորա ծակի թելը երբէք չէր հատնում։


Շուտով Լաբաքանի հոչակը այնպէս տա-րածուեցաւ, որ նա Աղէքսանդրեայի ամե-նէն երեւելի դերձակը եղաւ։ Հէնց որ նա հալաւը ձեռում էր ու ասեղը դնում կարի վրայ, այնուհետեւ նա ինքը շարունակում էր շուտ շուտ կարելու։ Գրեթէ բոլոր քա-

զաքը իւր ձեւք ու կարը տալիս էր Լաբա-քանին. Լաբաքանը համ շուա, համ սի-րուն էր կարում, համ էլ կարելու չափա-ւոր գին էր պահանջում; այդ էր պատճա-ռը որ ամենքը նորան էին դիմում։ Միայն մի բան սաստիկ զարմացնում էր քաղաքա-ցիներին, որ է՛ նա ոչ մի աշկերտ, ոչ մի օգնական չունէր, իւր խուցի մէջ փակուած միայն ինքն էր կարում։

Այսպէս՝ տուփի վրայ գրած խոստմունքը կատարուեցաւ. Լաբաքանին բաժին հասաւ բաղդ եւ հարստութիւն, թէ՛ եւ նա դուրս չեկաւ այն ստոր վիճակէն. որի մէջ ծնել էր։ Երբոր ժամանակէ ժամանակ սուլթան Օմարի փառքի եւ սիրագործութեան հռչա-կը, եւ կամ ժողովրդի սիրոյ եւ թշնամի-ների վախի լուրը հասնում էին նորա ական-ջին, այն ժամանակ Լաբաքանը մտքի մէջ ա-սումէր՝ «թէկուզ քարն էլ ճաքի, աշխար-հիս երեսին գերձակէն լաւ բան չըկայ։ Փառք ու պատուին միշտ կցորդ են մեծամեծ վը-տան գներ»։

Լաբաքանը կեանքը անցուց հանդարտ, իւր վիճակէն միշտ գոհ էր եւ իւր քաղա-քակիցներէն պատուած. եւ եթէ նորա ասե-ղը մինչեւ այժմ կորուսած չէ՛ իւր կախար-

դական զօրութիւնը, անշուշտ այս օրս էլ կարումէ այն անսպառելի թելով, որ նորա ծակի մէջ անցուցել է բարերար Աղօլզախէ վհուկը:



ա ունիոց մաս չկը ու վկիրազար նիշն
-ք մ կազմակերպություն բնույթ պահպան
ուղղակի ու բարե մատու հետ մեջ թիւք
ուս զարթուղար ուղղակ միացի ու մաս
ուղղակ ազգ բնուածք մաս և ուսաց ու
մաս լունդ ու բնութեա խանութեա պար

ՕՐԲԵՍԱՆԻ ՊԱՏՄԱՆԸ

գու վաճառ զգման միջնորդ ուսացաւուր զարա
-պատու հանար առ մատու զու սերցի
-Արեւը ծագելիս կարաւանը ծանապարհ ըն-
կաւ եւ շուտ հասաւ Բերքէթ-էլ-Գադ կամ
պանդուխտների շատրուանին, որ Քահիրէէն
երեք ժամուայ ծանապարհ է: Ամենքը սպա-
սում էին կարաւանի վերադարձին, եւ մեր ծա-
նապարհորդները հոգւով չափ ուրախացան,
երբ տեսան իրանց սիրելի բարեկամներին,
որոնք Քահիրէէն նոցա ընդ առաջ էին եկել:
Ամենքը Բաբ—էլ—Ֆալհ ասած դռնով քա-
զաք մտան: Որովհետեւ ինքը Մարգարէն
(Մահմէդը) այդ դռնով էր քաղաք մտել,
ուրեմն Մէքքէի ուխտագնացութենէն վե-
րադառնալով՝ այդտեղէն ներս մտնելը բա-
րեգուշակ նշան էր համարվում:
Երբոր հրապարակին հասան, վաճառա-
կանները մնաս—բարեւ ասացին օտարական



Սէլիմ Բարուխին եւ յոյն Յալեւքօսին, ու գնացին իրանց տները: Յալեւքօսը մի գեղցիկ իջեւանի անուն տուեց եւ հրաւիրեց այն օր միասին ճաշելու: Օտարականը շատ ուրախութեամբ ընդունեց նորա հրաւէրը, բայց ժամանակ խնդրեց որ երթայ տուն ու հագուի:

Իսկ յոյնը այդ միջոցին սկսեց ճաշի հարկաւոր պատրաստութիւնները տեսնել, որ ինչպէս որ հարկն է, լաւ պատուէ օտարականին, որին սրտանց սիրել էր ճանապարհորդութեան ժամանակ: Երբոր կերակուրները ու խմիչքները կարգ ու սարգով շարած էին սեղանի վրայ, Յալեւքօսը նստեց ու սպասեց հիւրին:

Յանկարծ սրահի մէջ յամրագնաց եւ ծանրքայլերի ձայներ լսուեցան, որք մօտենումէին նորա սենեակին: Յալեւքօսը տեղէն ելաւ, որ հիւրին շէմքի վրայ ընդունէ: Բայց սարսափած յետ ու յետ նահանջեցաւ. սարսափելի կարմիր լոդիկը կանգնած էր նորա առջեւ: Առաջի նուագ նա կարծեց թէ դա՛ մի առաջօք տեսիլք է. բայց նա պարզ ու մեկին տեսնումէր նոյն իսկ կերպարանքը, նոյն վեհապանծ իրանքը, նոյն դիմակը, որի ետեւէն ցոլումէին սեւ աչ-

քերը, նոյն կարմիր լոդիկը ոսկէթել ասղնեգործած, որոնք յիշեցնուարէին նորա կեանքի ամենասոսկալի ժամերը:

Դառն զգացմունքները ճմլեցին Յալեւքօսի կուրծքը. այս կերպարանքը զարթեցուց վաղուցուայ ներուած չարիքնեղը եւ նորա հին վէրքերը նորից բայցուեցան. այն վիշտերը, որոնք նորա կեանքի ամենագեղեցիկ տարիները թիւնաւորել էին. վերստին հանդիսացան նորա առջեւ:

«Ինչու եկար դու, ով սարսափելի մարդ, աղաղակեց Յալեւքօսը, նայելով ուրուականի վրայ, որ դրան մօտ կանգնած էր. շուտ հեռացիր աչքէս, որ ես քեզ նորից չը սկըսեմ անիծել»:

— Յալեւքօս, ասաց ձայնը դիմակի տակէն, Յալեւքօս, այդպէս պիտի ընդունէիր հրափրած հիւրիդ: Այս որ ասաց, հանեց օտարականը դիմակն ու լոդիկը, եւ ինչ Յալեւքօսի առջեւ կանգնած էր նորա ուղեկիցը, օտարական Սէլիմ Բարուխը.

Բայց Յալեւքօսը դեռ եւս երկար ժամանակ չէր կարողանում հանդարտել. նորան սոսկալի էր տեսնելը, որ իւր հիւրը նոյն իսկ օտարականն է, որին աեսել էր Փօնթէ Վէքքի վրայ. բայց հիւրընկալութեան

սուրբ սովորութիւնը ընկճեց նորա ակամայ զգուանքը. նա անխօս ցըյց տուաւ հիւրին սեղանի պատուաւոր տեղը:

«Ես քո միտքը հասկանում եմ ասաց հիւրը, նստելով իրան ցոյց տուած տեղը. դու ցանկանում ես լսել այն գաղտնիքի մեկնութիւնը: Իչարկէ, ես պարտաւորէի լոել եւ քո աչքին շերեւալ. բայց ի՞նչ անէի, ես վափագելով վափագում էի քո առջեւ արդարանալ եւ, ներկայանալով քեզ իմ իսկական կերպարանքովը, ես մինչեւ անգամ գլուխս վտանգի մէջ էի ձգում քո ըերնէն անէծքներ լսելու. բայց այդ ամենը ես քամացեցի: Ճանապարհորդութեան միջոցին դու ինձ ասացիր այս նշանաւոր խօսքերը՝ «Իմ կրօնը պատուիրում է ինձ սիրել թշնամիներին. . . եւ այն մարդը ինձանից շատ ու շատ անգամ տարաբաղդ պիտի լինի»: Իրաւ է քո ասածը, բարեկամ. լսէ՛ ու բեմն իմ արդարութիւնը:»

Ես ծնայ Աղէքսանդրիա քաղաքումը քրիստոնեայ ծնողներէ: Հայրս կրտսեր որդի մի երեւելի գաղղիացի գերգաստանի, եւ նոյն քաղաքու իր գաղղիացւոց հիւպատոսն էր. Տասը տարիս որ լրացաւ, ինձ Գաղղիա ուղարկեցին մօրեղբօրս տանը գաստիարակութիւն-

ու կրթութիւն ստանալու: Յեղափոխութեան ժամանակ մօրեղբայրս եւ ես թողինք Գաղղիան: Հայրենիքում մնալ չըկարողանալով մօրեղբայրս ստիպուեցաւ ծով անցնել ու հօրս տան մէջ ապաստանարան գտնել: Մենք Աղէքսանդրիա եկանք խաղաղութիւն ու անգորրութիւն ստանալու համար, որից զրկել էր մեզ գաղղիացիներու ապատամբութիւնը: բայց, աւաշ, հօրս տան մէջ էլ չըգտանք այն, ինչ որ պտրում էինք: Ճշմարիտ է, այնտեղ դեռ եւս հասած չէին այդ փոթորկալից ժամանակի արհաւերը, բայց ուրիշ ընտանեկան տարաբաղդութիւն կարեվէր խոցոտել էր իմ ծնողաց սիրտը: Երիտասարդ եղբայրս, որ մեծամեծ յոյսեր էր տալիս մի օր երեւելի անձն լինելու, հիւպատոսարանի մէջ աւագ ատենագլիրն էր հօրս առջեւ: Մեր գոլէն փոքր ինչ առաջ նա պտակուել էր մի ֆլորէնցիացի տղնուականի աղջկայ հետ, որ մեր դրացին էր. իսկ մեր Աղէքսանդրիա հասենելէն երկու օր առաջ աղջիկը աներեւութացել էր, այնպէս որ՝ ոչ հայրս եւ ոչ մեր ընտանիքը կարողացել են նորա հետքը գտնել: Նատ ապարդիւն հետախուզութիւններից յետ, վերջապէս այս ենթաղրութեան են եկել, որ զբօսնելու ժամանակ նա

շատ հեռացել է եւ աւազակների ձեռք է ընկել: Եթէ այսպէս լինէր, եղբայրս շատ բաղդատոր պիտի համարէր ինքն իրան. բայց աւազ, մենք շուտով այնպիսի բան իմացանք, որ առաւել գառնագին էր մեզ համար: Ուխտադրուժ կինը փախել էր մի նէապօլիտանցի երիտասարդի հետ, որ նորա հօր տանը սնուել ու կրթուել էր, եւ երկու փախստականքը նաւ էին նստել ու չուել էին Խտալիա: Այս գաւաճանութենէն զայրացած, եղբայրս ամեն հնարը գործ դրաւ, որ յանցաւորներին գտնէ ու պատուհասէ. բայց իզուր: Նորա գործ դրած հնարները զայրացուցին նէապօլի եւ Ֆլորէնցիայի կառավարիչներին եւ մեր բոլոր ընտանիքի թըշուառութեան պատճառը եղան: Ֆլորենցիացի ազնուականը գնաց իւր հայրենիքը, խոստանալով որ եղբօրս կըպաշտպանէ. բայց պաշտպանելու տեղ՝ իւր բոլոր ճիգը թափեց մեզ ամենիս վնասելու: Նա ոչ միայն եղբօրս գործ դրած հնարները—իւր կինը յետ ստանալու մասին—ապարդիւն դարձուց, այլ եւ զանազան զրպարտութիւններով ու չարախսութիւններով հօրս ու եղբօրս կասկածելի դարձուց տէրութեան առջեւ. նոցա բերել տուին Գաղղիա եւ այն-

տեղ մահու գատապարտեցին: Ողորմելի մայրը խելագարուեցաւ, եւ տասը ամիս չարաշար տանջուելով վերջապէս մեռաւ: ու ազատուեցաւ աշխարհիս ամեն տեսակ ցաւ ու վիշտերէն. բայց մեռնելէն մի փոքր առաջ նորա խելքը վրան եկաւ: Ես մենակ մնացի աշխարհիս երեսին. միայն մի խորհուրդ կար իմ հոգու մէջ. միայն մի խորհուրդ ամֆքում էր իմ վիշտը. եւ այդ խորհուրդը ինչպէս բոց լցրել էր իմ մէջ հոգեւարք մայրս իւր կեանքի վերջին բոպէներին:

Ես ասացի, որ մեռնելէն մի փոքր առաջ, մօրս խելքը վրան էր եկել. նա կանչեց ինձ մաշճի մօա եւ հանդարտ խօսեցաւ մեր ընդհանուր վիճակի եւ իւր վերահառ մահու վրայ: Յետոյ, սենեակի մէջ գտնուողներին հրամայեց գուրս երթալ, պառկած տեղէն ելաւ նստեցաւ եւ հանդիսաւոր ձայնով ասաց, որ մինչեւ երդում չանեմ նորա վերջին կտակը ճիշտ կատարելու, նա ինձ իւր օրհնութիւնը չիտալ: Հոգեվարքի խօսքերը սասանեցուցին ինձ. ես երդումով խօստացայ, որ ինչ եւ հրամայէ նա՝ ճիշտ կըկատարեմ: Այն ժամանակ մայրս հազար ու բիւր անէծքներ թափեց Ֆլորէնցիացիի

Եւ նորա աղջկայ վրայ եւ պահանջեց որ ես
վրէժխնդիր լինիմ նոցա այն ամեն աղէտ-
քի համար որ նոքա հասուցել էին մեր ըն-
տանիքին. եւ սպառնացաւ ինձ իւր անէծ-
քովն, եթէ ես նորա վերջին կամքն ու
խնդիրը չըկատարեմ: Թշուառական մայրս
իմ գրկի մէջ աւանդեց իւր հոգին: Վրէժ-
խնդրութեան իղձը առանց նորա էլ արձար-
ուած էր հոգուս մէջ. այժմ նա նորա-
նոր բոցերով բորբոքուեցաւ: Ֆողովեցի հօ-
րէս մնացած կայքը. ինքս ինձի երդում
տուի կամ գերդաստանիս վրէժը առնել
կամ կորչել աշխարհիս երեսէն:

Նտապով գնացի Ֆլորէնցիա, ուր ո՞քան
որ կարողանում էի թաքուն ապրում էի:
Նորանոր արգելքներ ու դժուարութիւններ
բացուեցան առջեւո: Ֆլորէնցիայի ազնուա-
կանը քաղաքապետ կարգուեցաւ. նա այնու-
չետեւ կարող էր իմ ամեն ձեռնարկութիւն-
ները իշիք գարձնել, բայց դիպուտծը ինձ
օգնութեան հաստւ: Մի օր, իրիկնադէմին
մի մարդու հանդիպեցայ որի հալաւը շատ
լաւ ճանաչում էի. նա անցնում էր փողոցի
միջով. նորա մոլորուն քալուածքը, թթու
կերպարանքը եւ սովորական բացադանչու-
թիւն maledetto diavolo իսկոյն միտքս ձգե-

ցին ծերունի Պիետոփին քաղաքապետի ծար-
ուային, որին Աղէքսանդրիայէն ճանաչում
էի: Ես համոզուած էի, որ նա մի բանի
համար անպատճառ զայրացած պիտի լինի
իւր պարոնի դէմ: Եւ միտքս գրի այդ բար-
կութենէն օգուտ բաղել: Պիետոօն ինձ տես-
նելով շատ զարմացաւ. սկսեց գանգատել
իւր բաղդէն, իւր պարոնէն, ասելով որ՝
քաղաքապետ ընտրած օրէն բոլորովին փոխ-
ուել է, եւ ուրիշ մարդ է դարձել, ամբար-
տաւանացել է, եւ նորա ամեն աշխատանքը
արդ էն աքբին վատ են երեւում: ոչինչ բա-
նով սիրտը շահիլ է կարելի:

Ծերունու բարկութիւնը եւ իմ սոկին իմ
ցանկացած վախճանին հասուցին: Պիետ-
ոօն հոգւով մարմնով ինձ անձնատուր ե-
ղաւ: Դիուարութիւններէն ամենագլխաւո-
րը յազթեցի. այժմ ես ունէի մարդ, որ պէտք
եղած ժամանակը կարող էր մոցնել ինձ իմ
թշնամու տունը: Միտք արի թէ՛ ի՞նչպէս
անեմ: որ լաւ վրէժխնդիր եղած լինիմ:
Ծերուկ ֆլորէնցիացու կեանքը իմ բոլոր
գերդաստանի կորուսի փոխարէն շատ ըն-
ցին տրիտուր էր: Ես մոքիս մէջ որոշեցի.
զրկել նորան այն բանէն, որ նորա համար
ամենաթանկագինն էր, եւ վճռեցի զերկը

Նորան աղջկանէն, նոյն իսկ Բիանքայէն, որ
իմ գերգաստանի կործանման գլխաւոր
պատճառն էր: Երբոր իմացայ, որ Բիանքան
մտադիր է երկրորդ անգամ ամուսնանա-
լու, իսկոյն մահու դատակնիքը կարգացի
նորա վրայ: Իմ ձեռքով սպանել զարհու-
րումէի. իսկ Պիետոօին ապաւինելը դժո-
ուար էր. նորա տկար ուժի վրայ յոյս դնել
չէի կարողանում: Եւ այդ պատճառաւ սկը-
սեցի այնպիսի մարդ պտրել, որ կարող էր
իմ դիմաւորութիւնը գլուխ բերել: Ոչ մի
ֆլորէնցիացու չէի վստահանում յայտնել
գաղտնիքս, ոչոք չէր յօժարի քաղաքապե-
տի գէմ գաւագործութիւն անել: Պիետոօն
քեզ վրայ մատնանիշ արաւ. ես նորա ընտ-
րութիւնը հաւանեցայ՝ այդ գործը քո ձեռ-
քով շատ գիւրին էր գլուխ բերելու, նախ՝
դու օտարական էիր եւ երկրորդ՝ բժիշկ:
Մնացածը արդէն քեզ յայտնի է:

Պիետոօն էր, որ մեր առջեւը բացեց քա-
ղաքապետի դուռը. նա էլ կըհանէր մեզ
տունէն, եթէ ճեղքէն չը նայէր եւ արիւ-
նաթաթաւ դին տեսնելով չը զարհութէր ու
լրիախէր: Ես էլ խղճահարուած ու սար-
սափած, դուրս փախայ տնէն ու երկուհա-
րիւր քայլափոխ անցած, ընկայ մի ժամի

սանդուխքի առջեւ Երբոր ուշքս վրաս ե-
կաւ, իսկոյն քեզ յիշեցի. «Վայ ինձ, մոտա-
ծեցի, եթէ Ցալեւքօսին բռնեն, ի՞նչ պիտի
լինի խեղճի վիճակը»

Գոգգողի մոտայ քաղաքապետի տունը. բայց
ոչ քեզ գտայ այնտեղ եւ ոչ Պիետոօին. դու-
ռը երկրացիկ կեցած էր. հասկացայ որ դու
փախած պիտի լինիս:

Երկիւզը ու խղճմատնքի խայթը ինձ
հանգստութիւն չէր տալիս. չըկարողացայ
Ֆլորէնցիայի մէջ մնալու. Երբոր լոյսը բաց-
ուեցաւ թողի քաղաքը եւ գնացի Հռոմ:
Շուտով Հռոմի մէջ էլ տարածուեցաւ Ֆլո-
րէնցիայի մէջ կատարուած չարագործու-
թեան լուրը. ամենքը խօսում էին այդ անց-
քի վրայ. ասում էին թէ՝ մարդասպանը մի
նորեկ յոյն է, որին արդէն բռնել են ու
բանտ են դրել: Հոգետանջ վշտերով լցուած,
շտապեցի նորէն Ֆլորէնցիա գալու: Եթէ
առաջները վրէժը ինձ անգութ գործ էր
երեւում, այժմ ես անիծում էի նորան, որ
քո թշուատութեան պատճառը պիտի լի-
նէր: Նոյն օրը, որ ես Ֆլորէնցիա հասայ,
քո ձեռքն էլ կտրեցին. Զեմ նկարագրիլ
քո առջեւ այն դառն զգացմունքս, երբոր
տեսայ բարձրաւանդակի վրայ քո ելնելը ու

անարժան պատուհասը դիւցազնաբար տանելը: Երբոր քո ձեռքէն արինի վտակը գետնին թափուեցաւ, ես իմ մէջ ուխտ արի՝ քանի որ դու կաս աշխարքիս երեսին, քո ամեն պէտքը հոգամ ու լցնեմ: Ինչ որ այնուշետեւ պատահեցաւ, դու արդէն դիտես: Այժմ մնումէ քեզ յայտնել, թէ ինչու ես անշուշտ ցանկանումէի քեզ հետ ճանապարհորդելու:

Ինձ չարաչար տանջումէր այն միտքը, որ դու գուցէ ինձ տակաւին ներած չես: Ես ուզումէի քանի մի ժամանակ կենակից լինել քեզ, քո բարեկամական մտերմութիւնը գրաւել, եւ ապա, եթէ հնար կայ, արդարանալ քո առջեւ:

Յալեւքօսը լուռ ու մունջ լսումէր իւր այցելուի պատմութիւնը: Յետոյ նա հեղութեամբ աջ ձեռքը նորան տուեց եւ ասաց, «Ես գիտէի, որ ինձմէն աւելի անբազդ ես: Անշուշտ, այդ սոսկալի սպանութեան յիշատակը ամենտեղ հալածումէ քեզ եւ թունաւորումէ քո կեանքը: Ես ի բոլոր սրտէ ներումեմ քեզ: Բայց ներէ ինձ, ես կամենումեմ մի հարցմունք անել քեզ: Ի՞նչպէս յայտնուեցար դու այս անապատի մէջ ու այդ հալաւովդ: Երբոր ինձ համար Ստամպու-

մը տուն գնեցիր, այնուհետեւ ի՞նչ բաներ անցան քո գլխով: » — Ես եկայ Աղէքսանդրիա, ասաց այցելուն. ատելով ատեցի մարդկան ազգը, եւ մանաւանդ աչքէս ընկան այն ազգերը, որոնք լուսաւորեալ են կոչվում: Ես աւելի եմ սիրում իմ մուսուլմաններին: Աղէքսանդրիա հասնելէս յետ, գաղղիացիք արշաւեցին եգիպտոսը: Ես արդէն նայումէի նոցա վրայ ոչ ինչպէս իմ համազգիների, այլ ինչպէս իմ հօր եւ եղբօր գահիծների վրայ: Եւ չորս կողմն ժողոված մի քանի համախոհ երիտասարդներ, խառնուեցայ Մէմիւքների գնդի մէջ ու յաճախ յարձակմունքներով գաղղիական զօրքի մէջ ահ ու սարսափ էինք ձգում: Երբոր պատերազմը վերջացաւ եւ խաղաղութեան դաշինքը հաստատուեցաւ, ես չուզեցի անդորր կեանք վարել. փոքրաթիւ ընկերներիս հետ սկսայ վարել թափառական եւ ազմկալից կեանք, այսօր մարդոց հետ պատերազմելով եւ վաղը վայրի գաղաններ հալածելով: Օրերս ուրախ են անցնում: ընկերներս ինձ ընտրեցին իրանց պարագլուխ ճշմարիտ է, իմ ասիացիները եւրոպացիների նման կը թուած չեն, բայց եւ նոցա նման նախանձու,

շարախօս, եսամոլ եւ փառասէր չեն:

Յալեւքօսը, շնորհակալ լինելով իւր հիւրէն այդ պատմութեանը համար, աւելացուց, որ այն կեանքը, որ նա փարումէ, համապատասխան չէ ոչ այն կրթութեան, որ նա ստացել է եւ ոչ այն կրօնին, որի մէջ ծնել է նա եւ աղացեց նորան դառն նալ բարեկիրթ ընկերութեան ծոցը եւ կեանքը այնտեղ անցնել:


Այս խնդիրը ի գորով հարժեց անձանութին, եւ նա ասաց, «Այժմ յէմ ես տեսնում եմ որ դու ի բոլոր սրտէ ներել ես, ինձ եւ սիրում ես քո թշնամուն» Ահա, շնորհակալ եմ եւ շատ շնորհակալ եմ քեզնից», Այս որ ասաց ելաւ տեղէն, ահեղ գէմքով ու պատերազմական ամեն զէնք, ու գարգով կանգնեցաւ Յալեւքօսի առջեւ: Նորա սեւ աչքերը գերբնական բոցով էին փայլում եւ նորա ձայնը ակ ու սարսամփէր ձգում լրացրի մէջ: «Այս բարեկամն շատ քաղցր է ինձ լսել այդ խնդիրը, բայց ափառն որ կատարել չեմ» կարող իմ նժոյգը արդէն թամբածէ ու ընկերներն սպասում են ինձ: Քարեւ մնար Յալեւքոս, Օտարականը եւ Յալեւքոսը, որոնց ըազդը այսպիսի Յոտարութիւն կերպով հանդի-

պեցուց, վերջին անգամ գրկուեցան:

«Ի՞նչպէս է անունդ, ով խորհրդաւոր հիւր, որի յիշատակը յակատեան տպաւորուած պիտի մնայ մոքիս մէջ», ասաց Յալեւքոսը:


Օտարականը երկար ժամանակ լուռ ու մունջ նայումէր նորա երեսին. Էլի մի անգամ սեղմեց նորա ձեռքը ու ասաց.

— Իմ անունն է անապատէ աէր. Ես եմ Օրբասան աւազակը:



և անրեսովք նորմ միջնի լուսաբն
դաւարդագույն ին պատճեն չ աքրած
աւարտ մանավառ ցիստացին վրա լուս
ամ շատ ուղիղ սկզբն խոհի նույն նույն
լուսաբն
ու նոր թափանուն զարդ ցիստացին
առ ին վրա միջնական սկզբն կը նայած կը տես
շատ ու ոզանի այս ցիստա նոր
ին ու ուժութափան չ մեռնաւ. Այ —
ցիստա ու մանավառ





1918

2013

